Բացահայտելով օտարերկրյա ներդրումներին առնչվող Հայաստանյան միջավայրը. քայքայիչ և կառուցողական կապիտալները մանրադիտակի տակ

Հետազոտական զեկույց

Երևան 2022

Բովանդակություն

Բովանդակություն 2

Հապավումների ցանկ 3

Հիմնախնդրի նկարագրություն և խնդիրներ 5

Հետազոտության մեթոդաբանությունը 10

Բաժին 1. Օտարերկրյա ներդրումների որակը քայքայիչ և կառուցողական կապիտալների համատեքստում 13

1.1 Օտարերկրյա ներդրումների շարժընթացը՝ ըստ ներդրող երկրների 13

1.2 Ներդրումային հիմնական ոլորտները և ուղղությունները 21

1.3 Քայքայիչ և կառուցողական կապիտալի ադեպտներն ու պրակտիկաները ՀՀ-ում 24

Բաժին 2. Ներդրումային միջավայրը քայքայիչ և կառուցողական կապիտալների համատեքստում 31

2.1 Ներդրումային քաղաքականության պետական տեսլականը 31

2.2 Ներդրումները կարգավորող օրենսդրությունը և որոշումները 33

2.3 Ներդրումային քաղաքականությանն առնչվող ինստիտուտները 35

2.4 Շուկայական և մրցակցային միջավայրերը 41

2.5 Դատական համակարգը 44

2.6 Քաղաքական համակարգը 46

2.7 Քաղաքացիական հասարակությունը և մասնակցությունը 48

2.8 Ներդրումների վրա ներազդող աշխարահաքաղաքական գործոնները 52

2.9 Ներդրումների վրա ներազդող արտակարգ գործոնները 52

2.10 Կառուցողական ներդրումների հնարավորությունը նվազեցնող այլ միջավայրեր 54

Բաժին 3. Քայքայիչ ներդրումների «մետաստազները» ՀՀ քաղաքական համակարգում 58

Բաժին 4. Ուկրաինայում ընթացող պատերազմով պայմանավորված ներդրումային զարգացումները ՀՀ-ում 62

Եզրակացություններ 67

Առաջարկներ 71

Annex 1. Research Stakeholders' Mapping 77

Annex 2. Հարցազրույցների ուղեցույց. համապարփակ հարցեր 82

Annex 3.-*The weight of Net Inflows of foreign total and direct investments by type of activity from Authoritarian countries, 2014-2021* 86

Հապավումների ցանկ

CEE Countries	Central and Eastern European countries
CEFC	Clean Energy Finance Corporation
EIU	Economist Intelligence Unit
ESG elements	Environmental, Social, and Governance elements
FDI	Foreign direct investment
SMM	Social Media Marketing
USAID	United States Agency for International Development
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԺ	Ազգային ժողով
ԱՁ	Անհատ ձեռներեց
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՆԻՖ	Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ
ԱՏՀ	Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույց
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԶԼՄ	ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑ
ԶՊՄԿ	Զանգեզուրի պղնձամոլիպդենային կոմբինատ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ՀԾԿՀ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀԿԵ	ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ (GDP)	Համախառն ներքին արդյունք
ՄՄԶԿ (CIPE)	Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի

ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՎԶԵԲ (EBRD)	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՄՊՊՀ	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
ՏՏ (IT)	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՓՀ	Փորձագիտական հարցազրույց
ՔՀԿ (CSO)	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՕՈՒՆ	օտարերկրյա ուղղակի ներդրումների
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

Հիմնախնդրի նկարագրություն և խնդիրներ

Քովիդ 19-ը և 2020 թ. Արցախյան պատերազմը էական խնդիրներ հարուցեցին Հայաստանի Հանրապետության տնտեսության համար, ինչի հետևանքով նվազեցին տնտեսական աճի ցուցանիշները, ավելացան գործազրկությունն ու արտաքին պարտքը[1]: Ստեղծված ճգնաժամային իրավիճակում մեծացավ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու կարևորությունը, ակտիվացան դրա շուրջ քննարկումները: 2022 թ. Ուկրաինայում սկսված պատերազմն ու դրա հետևանքով ՌԴ և Բելառուսի դեմ կիրառվող սանկցիաները այս երկրներից դեպի Հայաստան տարբեր բիզնեսներ տեղափոխելու խթան դարձան: Ինչպիսի՞ օգուտներ կարող է ունենալ Հայաստանը այս զարգացումներից, ինչպիսի՞ ռիսկերի կարող է առերեսվել և, առհասարակ, ինչպե՞ս ավելացնել օտարերկրյա ներդրումների արդյունավետությունը: Պատասխանները մի կողմից օտարերկրյա *ներդրումների որակի*, մյուս կողմից ՀՀ-ում առկա *ներդրումային միջավայրի* ծիրում են, որոնց ուսումնասիրությունը սույն հետազոտության առաջնահերթ խնդիրն է:

Ներդրումների որակ ասելով սույն հետազոտության մեջ նախևառաջ նկատի ունենք իմասնավորի՝ Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի (ՄՄՁԿ-CIPE) կողմից քայքայիչ և կառուցողական կապիտալների համար սահմանված հետևյալ բնութագրերը[2].

Քայքայիչ կապիտալ.

- Գաղտնի գործարքներ ոչ հստակ պայմաններով,
- Շրջանցում է օրենքները և նվազեցնում հնարավորությունները,
- Սնուցում է կոռուպցիան և խնամիա-բարեկամական կապերը (nepotism),
- Հաճախ սերում է ավտորիտար ռեժիմից,
- Խուսափում է սովորական գործարար պարտականություններից:

Կառուցողական կապիտալ.

- Փաստաթղթավորված, թափանցիկ պայմաններ,
- Հաշվետու է շահագրգիռ կողմերին ու քաղաքացիներին,
- Հիմնված է շուկայական սկզբունքների վրա,
- Պաշտպանում է գործարար միջավայրի ամբողջականությունը,
- Համապատասխանում է միջազգային նորմերին:

Տարբեր երկրներում օտարերկրյա ներդրումների պրակտիկաների ուսումնասիրությունը, ինչպես նաև ՀՀ-ում ներդրումային դաշտի մեր նախնական դիտարկումները թույլ են տվել քայքայիչ կապիտալի վերոհիշյալ բնութագրերին ավելացնել ուրիշները: Քայքայիչ կապիտալի առումով դրանք են.

- Փոքրածավալ և դիսպերս ներդրումները[3],

---

[1] 7-8% recession, significant decline in net flows of foreign investments, increase of public debt (almost 70% of GDP) and unemployment rate (18-19%): Աշխատանքի շուկայի ցուցանիշներ, 1.4.1. Զբաղվածություն, 1.4.1.1. Զբաղվածության ցուցանիշների գնահատումն՝ ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների: Աղբյուր՝ https://armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf, https://armstat.am/file/article/sv_12_21a_221.pdf

[2] Corrosive and Constructive Capital Initiative Flyer: https://www.cipe.org/newsroom/corrosive-constructive-capital-initiative-flyer/

- Ավտորիտար համակարգ ունեցող տարբեր երկրներում ներդրող կազմակերպության ներկայությունը հաստատող փաստերը[4],
- Ներդրող կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը իր ծագման երկրում վայելում է պետական հովանավորչություն[5],
- Ներդրող կազմակերպության կամ ներդրողի որևէ կուսակցակության հետ կապ ունենալը[6],
- Ներդրող կազմակերպության կարճատև կենսագրությունը[7],
- Ներդրումների համար ավանդական չհամարվող ոլորտներում (լրատվամիջոցներ, հումանիտար հետազոտություններ) ներդրումներ կատարելը[8],

---

[3] Ներդրումներ միևնույն կազմակերպության և նրա հետ աֆիլացված այլ կազմակերպությունների կողմից: Ինչպես նկատել են փորձագետները՝ համակարգերի և ինստիտուտների վերապրոֆիլավորմանը (repurposing) նպատակաուղղված գումարները սովորաբար մեծ ծավալ չեն ունենում: Մի դիպուկ ձևակերպման համաձայն՝ դրանք «*էժան փողեր*» են, որոնք միտված են քայքայելուն (մարդկանց, ինստիտուտները, համակարգերը):
Տե՛ս՝, Corrosive Capital flows re threat for the fragile democracies in the Western Balkans:
https://idscs.org.mk/en/2020/09/29/corrosive-capital-flows-are-threat-for-the-fragile-democracies-in-the-western-balkans/
Ի հավելումն՝ այդ «էժան փողերը» միայն մի ոլորտում չեն իրացվում: Բաժանվում են տարբեր լոբիստական շրջանակների վրա, պաշտոնյաներ են կաշառվում, լրատվամիջոցներ են գնվում կամ հիմնվում և այլն: Դիսպերսությանը վերաբերող դիտարկումը ևս կարևոր է, որովհետև ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կառուցողական ներդրումները, ընդհակառակը, հիմնականում մի ոլորտում են լինում:
[4] Եթե որևէ ներդրող կազմակերպություն հաջողությամբ ծավալվում է ավտորիտար երկրներում, ուրեմն մեծ է հավանականությունը, որ ստվերային և ոչ կառուցողական գործունեության մեծ փորձառություն ունի և այն կարող է օգտագործել այլ երկրներում:
[5] Այդպիսի կազմակերպություններ են CEFC-ն՝ Չինաստանում, Գազպրոմը և Ռոսնեֆթը՝ Ռուսաստանում: Ներդրումային երկրներում այս կազմակերպությունների գործունեությունը տնտեսական կախվածություն առաջացնելն է, որին հետևում է քաղաքական կախվածությունը: Ավելին, այդ կազմակերպությունները համագործակցում են իրենց հայրենի երկրների հետախուզական ծառայությունների հետ: Օրինակ, Չինաստանում արտերկրյա ներդրող կազմակերպություններին հրահանգված է հետախուզական տեղեկություններ հավաքել ներդրումային երկրների վերաբերյալ:
Տե՛ս՝ A New Invisible Hand. Authoritarian Corrosive Capital and the Repurposing of Democracy, by Martin Hála:
https://www.cipe.org/resources/a-new-invisible-hand-authoritarian-corrosive-capital-and-the-repurposing-of-democracy/
[6] Սա կարծես վերաբերում է բացառապես Չինաստանին: Չինական իշխանությունները հորդորում են արտերկրում ներդրում անող կազմակերպություններին իրենց ներսում Կոմունիստական կուսակցության բջիջներ (party cells) ունենալ: Բնականաբար, այդ հորդորներին առաջին հերթին հետևում են չինական կուսակցական իշխանությունների հետ համագործակցող կազմակերպությունները:
Տե՛ս՝ A New Invisible Hand. Authoritarian Corrosive Capital and the Repurposing of Democracy, by Martin Hála
https://www.cipe.org/resources/a-new-invisible-hand-authoritarian-corrosive-capital-and-the-repurposing-of-democracy/
[7] Լատինական Ամերիկայի և Բալկանյան մի շարք երկրներում ներդրումներով զբաղվող չինական կազմակերպություններից որոշների կենսագրությունը և առաջխաղացման պատմությունը, մեղմ ասած, կասկած է հարուցում: Դրանց մեջ կան այնպիսիք, որոնք ներդրում անելուց առաջ ունեցել են հազիվ 1 կա 2 տարվա կենսագրություն և միլիարդի հասնող ակտիվներ: Ինչպես պարզվում է՝ դրանց հիմնադրման և «առաջխաղացման» գործում առանցքային դերակատարություն են ունեցել կուսակցական ղեկավարությունը և հետախուզական ծառայություններ:
Տե՛ս՝ Authoritarian Corrosive Capital and the Repurposing of Democracy, by Martin Hála
https://www.cipe.org/resources/a-new-invisible-hand-authoritarian-corrosive-capital-and-the-repurposing-of-democracy/
[8] Սրա ամենացայտուն օրինակը հանդիպում է Չեխիայում:
Տե՛ս՝ Oligarchs and Party Folks . Chinese Corrosive Capital in Slovakia and Czechia, Matej Šimalčík
https://ceias.eu/chinese-corrosive-capital-sk-cz/

- Ներդրում իրականացնող կազմակերպության կամ դրա առանձին ադեպտների կողմից ներդրումային երկրի քաղաքական որոշակի խմբավորումներին և նրանց քարոզարշավներին աջակցելը[9],
- Ներդրումային երկրում ներդրող կազմակերպությունը երկար տարիներ աշխատում է վնասով, բայց չի դադարեցնում իր գործունեությունը[10],
- Ներդրող կազմակերպությունների կառավարման խորհուրդներում ներդրումային երկրի քաղաքական բարձրաստիճան անձանց պաշտոնի նշանակելը[11],
- Ներդրումային երկրում ներդրող կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունների դիմաց սահմանված ցածր միջնորդավճարները (commission), ծառայության ցածր գները[12],
- էթնիկական եւ անձնական կապերի հիմքի վրա արվող օտարերկրյա ներդրումները[13]:

Որպես կառուցողական կապիտալի հավելյալ բնութագրիչներ՝ կարող են ծառայել հետևյալները՝

- Արտադրական կարողությունների ավելացումը և ավելացված արժեքի ստեղծումը[14],
- Աշխատուժի որակի բարձրացման ուղղությամբ իրականացվող ծրագրերը,
- Կառավարման կորպորատիվ եղանակը[15]:

---

[9] Սրա օրինակները հատկապես նկատելի են Լատինական Ամերիկայում և հետխորհրդային երկրներում՝ ռուսական կազմակերպությունների մասնակցությամբ:
Տե՛ս՝ A New Invisible Hand. Authoritarian Corrosive Capital and the Repurposing of Democracy, by Martin Hála
https://www.cipe.org/resources/a-new-invisible-hand-authoritarian-corrosive-capital-and-the-repurposing-of-democracy/

[10] Նշված երևույթի ադեպտ է համարվում ՀՀ-ում գործող ռուսական ՀԿԵ-ն: Այդ, ինչպես նաև այլ ադեպտների գոյությունը որևէ երկրում, ենթադրության հիմք է առ այն, որ ներդրողների նպատակը ոչ թե շահույթ ստանալն է, այլ ներդրումային երկրներն իրենց ծագման երկրներից քաղաքական կախման մեջ պահելը:

[11] Սա ստրատեգիական կոռուպցիայի առավել հաճախ հանդիպող տեսակներից է: Օրինակ, Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերին կազմակերպության խորհրդում դիրեկտորի պաշտոն առաջարկելով Ռոսգազպրոմը կարողացավ աջակցություն ստանալ, որ Հյուսիսային հոսքը կառուցվի Գերմանիայի ջանքերով և աջակցությամբ: Դա այն դեպքում, երբ Եվրոհանձնաժողովը դեմ էր այդ որոշմանը: Իսկ Իրիցա Գեյտ հատուկ օպերացիայով Ավստրիայում ռուսական կազմակերպությունների աջակցությամբ իշխանության բերվեցին ուլտրաաջերը, որոնք հաղթեցին ընտրությունները: Նույն եղանակով չինական CEFC կազմակերպությունը բարձրագույն պաշտոնների էր նշանակում չեխական էլիտայի ներկայացուցիչներին: Օրինակ, Չեխիայի նախկին պաշտպանության նախարար Տվերդիկը նշանակվեց կազմակերպության տնօրեն, որը Չեխիայի գալիք նախագահական ընտրություններում բազմաթիվ համախոհներ բերեց իշխանության, որոնք աջակցում էին հայտնի չինական վերոհիշյալ կազմակերպությանը:
Տե՛ս, A New Invisible Hand. Authoritarian Corrosive Capital and the Repurposing of Democracy, by Martin Hála
https://www.cipe.org/resources/a-new-invisible-hand-authoritarian-corrosive-capital-and-the-repurposing-of-democracy/

[12] Քաղաքական լծակներ ձեռք բերելու համար ռուսական կազմակերպությունները ցածր միջնորդավճարներ են օգտագործել Բուլղարիայում, Մակեդոնիայում և Սերբիայում, իսկ գազի ցածր գներ են առաջարկել՝ Թուրքիայում, Հունգարիայում, Հունաստանում:
Տե՛ս՝ A New Invisible Hand. Authoritarian Corrosive Capital and the Repurposing of Democracy, by Martin Hála
https://www.cipe.org/resources/a-new-invisible-hand-authoritarian-corrosive-capital-and-the-repurposing-of-democracy/

[13] Այս երևույթը դիտարկվում է գլխավորապես Հայաստանում գրանցված պրակտիկաների հիման վրա, ըստ որոնց՝ օտարերկյա ներդրողների հետ որևէ գործարքի կնքման համար կարևոր դեր են խաղում էթնիկական ծագումը և անձնական ծանոթությունները:

[14] Նշված բնութագրիչի վրա մեր ուշադրությունը հրավիրեց փորձագիտական հարցազրույցների մասնակից վերլուծաբան-փորձագետներից մեկը:

[15] Այս բնութագրիչի կարևորությունը մատնացույց են արել հարցազրույցներին մասնակից փորձագետները (ինչպես պետական կառույցից, այնպես էլ մասնավոր ոլորտից):

Հավելած բնութագրերի մեծ մասը քայքայիչ կամ կառուցողական կապիտալի ուղղակի ցուցիչներ չեն, բայց կոնկրետ փորձառություններից լծորդվելով՝ կարող են ծառայել որպես նախազգուշացման ցուցիչներ՝ ստացող երկրներում կապիտալի նշված տեսակների թափանցումը և ծավալումը բացահայտելու համար:

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների որակը ներկայացվում է սույն հետազոտության 1-ին բաժնում:

Ներդրումային միջավայր ասելով նախ և առաջ նկատի են առնվել քայքայիչ կամ կառուցողական կապիտալի թափանցման և ծավալման համար նպաստավոր հետևյալ միջավայրերը.

- Ներդրումային քաղաքականության պետական տեսլականը,
- Ներդրումները կարգավորող օրենսդրությունը և որոշումները,
- Ներդրումային քաղաքականությունը մշակող և իրականացնող ինստիտուտները,
- Ճուկայական և մրցակցային միջավայրերը,
- Դատական համակարգը,
- Քաղաքական համակարգը,
- Քաղաքացիական հասարակությունը,
- Ներդրումների վրա ներազդող աշխարահաքաղաքական գործոնները,
- Ներդրումների վրա ներազդող արտակարգ գործոնները (Արցախյան պատերազմ, Ուկրաինայի պատերազմ, սահմանային լարվածություն, փակ սահմաններ):

Ներդրումային միջավայրի թվարկված ասպեկտների վերաբերյալ դաշտային հետազոտության արդյունքները լրացնելու և ամբողջական պատկեր ապահովելու համար դիտարկվել են մի շարք ինդեքսներ.

- Democracy index 2021. *Economic intelligence unit*[16],
- Index of economic freedom 2022. *Heritage foundation*[17],
- Doing business 2020[18],
- Rule of law 2021. World Justice Project[19],
- Transparency international index 2021[20],
- Global competitiveness index 2019. Good markets efficiency[21],
- Global competitiveness index 2019. Institutions[22],
- International Property rights 2021. Property rights alliance[23],
- Press freedom index 2022. Reporters without borders[24],
- CSO Meter 2019[25],

[16] EIU, Democracy Index 2021: the China challenge, page 32: https://www.eiu.com/n/campaigns/democracy-index-2021/
[17] Index of economic freedom 2022, Heritage foundation: https://www.heritage.org/index/download
[18] Doing business archive: https://archive.doingbusiness.org/en/doingbusiness
[19] The World Justice Project(WJP) Rule of law index,2021. https://worldjusticeproject.org/rule-of-law-index/
[20] Transparency International, Corruption Perception index, 2021: https://www.transparency.org/en/cpi/2021?gclid=Cj0KCQjwz96WBhC8ARIsAATR253hR4aMOjc59bzw4rlxUVTYGpXM_lmubwjtn7Vy6YnK6AJ7RkwEosYaApXrEALw_wcB
[21] The Global Competitiveness Report 2019. World Economic Forum: https://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf.
[22] The Global Competitiveness Report 2019. World Economic Forum: https://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf.
[23] International Property rights 2021. Property rights alliance: https://www.internationalpropertyrightsindex.org/
[24] Press freedom index 2022. Reporters without borders: https://rsf.org/en/index

- Globalization index KOF 2021[26],
- Fitch Ratings, Armenia, Long Term Default Rating 2021- B+[27]:

Ներդրումային միջավայրի վերլուծությունը ներկայացվում է հետազոտության 2-րդ բաժնում:

Ներդրումների որակը կարող է ուղղակի և անուղղակի ազդեցություն ունենալ ոչ միայն ներդրումային երկրի տնտեսական համակարգի, այլև արտատնտեսական համակարգերի, իմասնավորի՝ քաղաքական համակարգի վրա՝ նպաստելով դրա հզորացմանը կամ թուլացմանն ու նպատակափոխմանը (repurposing): ՀՀ-ում քայքայիչ կապիտալի գործառնության "մետաստազները" դիտարկվում են սույն հետազոտության 3-րդ բաժնում:

[25] CSO METER - Assessing the civil society environment in the Eastern Partnership countries. Regional Report. Lead Authors: Ivana Rosenzweigova, Luben Panov, Eszter Hartay:https://transparency.am/hy/publication/pdf/189/1284

[26] Globalization index 2021. KOF: https://kof.ethz.ch/en/forecasts-and-indicators/indicators/kof-globalisation-index.html

[27] Fitch Ratings, Armenia. Long-Term Foreign-Currency Issuer Default Rating (IDR): https://www.fitchratings.com/entity/armenia-83313661#ratings

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության բուն նպատակի, այն է՝ Հայաստանում քայքայիչ և կառուցողական կապիտալների գործառնություն հնարավորությունների և խոչընդոտների ուսումնասիրության համար, որպես մեթոդաբանական ռազմավարություն է ընտրվել որակական հետազոտությունը, որը բաղկացած է 2 փուլերից՝ գրասենյակային և դաշտային հետազոտական աշխատանքներից: Գրասենյակային հետազոտության փուլում հետազոտության առջև ծառացած խնդիրներն էին.

1. Հետազոտության օբյեկտի և առարկայի, վերջինիս դրսևորումների վերաբերյալ ընդհանրական պատկերացումներ կազմելը,
2. Հետազոտության մեթոդի հստակեցումը,
3. Հարցվողների և ՖԽՔ մասնակիցների քարտեզագրումը,
4. Տվյալների հավաքման գործիքների (ուղեցույցների) մշակումը,
5. Օտարերկրյա կապիտալի գործառնության և ներդրումային միջավայրի ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

1. <u>Հետազոտության օբյեկտի և առարկայի, վերջինիս դրսևորումների վերաբերյալ ընդհանրական պատկերացումների կազմում</u>

Հետազոտության օբյեկտի (ներդրումային կապիտալի) ու առարկայի (ներդրումային կապիտալի գործառնությունը և պրակտիկաները) և վերջինիս դրսևորումների վերաբերյալ ընդհանրական պատկերացումներ կազմելու նպատակով ուսումնասիրվել է CIPE կայքում զետեղված շուրջ 30 վերլուծական և ծանուցողական բնույթի հրապարակումներ, քննարկումների տեսանյութեր, ՀՀ-ում ներդրումների բնույթին և ներդրումային միջավայրերին վերաբերող տարբեր փաստաթղթեր, վիճակագրական տվյալներ, ԶԼՄ հաղորդումներ:[28] Դրանց շնորհիվ, բացի հետազոտության օբյեկտի և առարկայի մասին ընդհանրական պատկերացումներ կազմելուց՝ հաջողվել է արտածել ներդրումային կապիտալի հավելյալ բնութագրիչներ և ներդրումային միջավայրը ներկայացնող հավելյալ առումներ (ինդեքսներ), որոնք օգտակար են եղել քննվող հիմնախնդրի տարբեր ասպեկտները առավել ամբողջական և հիմնավոր ներակայացնելու համար:

2. <u>Հետազոտական մեթոդաբանության ընտրությունը</u>

Հիմնախնդրի վերաբերյալ տեղեկացված անձանց քանակի սահմանափակությամբ և հիմնախնդիրը խորությամբ ուսումնասիրելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նախապատվությունը տրվել է որակական հետազոտության, իմասնավորի՝ փորձագիտական (expert interview-EI) ու առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցների (Key informant interview-KII), ինչպես նաև (ֆոկուս)խմբային քննարկումների (ՖԽՔ - FGD) մեթոդներին: Իրականացվել է 2 խմբային քննարկում, 2 ֆոկուս խմբային հարցում (ՓՀ-EI), 10 առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույց (ԱՏՀ-KII) և 7 փորձագիտական հարցազրույց: Նման որոշումը պայմանավորված է փորձագիտական և առանցքային տեղեկատուների համայնքային յուրահատկություններով, հատկապես՝ նրանց զբաղվածությամբ և հասանելիությամբ, տարբեր ֆորմատներով հարցումների մասնակցելու նրանց պատրաստակամությամբ:

[28] Օգտագործված գրականության և աղբյուրների ամբողջական ցանկը ներկայացվում է հետազոտության վերջում:

Հետազոտության որակական մեթոդների ընտրությունը և դրանց քանակական պլանավորումը թույլ են տվել բացահայտել քննվող հիմնախնդրի, այսպես ասած՝ պակաս երևացող, անտեսանելի կողմերը, դրանց բնույթը պայմանավորող հիմնային պատճառները, նաև հիմնախնդրի հետ կապված մարտահրավերներին արդյունավետ արձագանքելու հնարավոր միջոցներն ու լուծումները:

3. <u>Հարցվողների և ՓԽՔ մասնակիցների քարտեզագրումը:</u>

ՓՀ-երի և ԱՏՀ-երի մասնակիցների քարտեզագրման համար ընտրվել են հետևյալ խմբերը (տե՛ս՝ Annex 1).

- Քաղաքականության մշակմանը մասնակից պետական կառույցների ներկայացուցիչներ,
- Քաղաքականություն իրականացնող և վերահսկող պետական կառույցների ներկայացուցիչներ,
- Մասնավոր շահառուներ (բանկային և գործարար ոլորտի ներկայացուցիչներ),
- Փորձագիտական համայնք (լրագրող-փորձագետներ, գործարար միությունների ներկայացուցիչներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, դասախոս-վերլուծաբաններ)

(Ֆոկուս)խմբային քննարկումների մասնակիցների ընտրության համար ընտրվել են ոլորտային հետևյալ խմբերը.

- Պետական կառույցի ներկայացուցիչներ (Էկոնոմիկայի նախարարություն)
- Վերլուծաբան-փորձագետների համայնք
- Լրագրողական-փորձագիտական համայնք
- Գործարար համայնք (բիզնես ներկայացուցիչներ)

Ընդհանուր առմամբ՝ ՓԽՔ, ՓԽՀ, ԱՏՀ հարցազրույցներին մասնակցել է շուրջ 34 մարդ, որոնցից 7-ը պետական կառույցների ներկայացուցիչներ են (քաղաքականություն մշակող, քաղաքականությունիրականացնող և վերահսկող)[29], 18-ը՝ փորձագիտական համայնքից (լրագրող-փորձագետներ, գործարար միությունների ներկայացուցիչներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, դասախոս-վերլուծաբաններ), 9-ը՝ մասնավոր շահառուներ են (բանկային և գործարար ոլորտ):

Հետազոտության թիրախների նման ընդարձակ փորթույլ է տվել բացահայտել քննվող հիմնախնդրի վերաբերյալ փորձագետների և առանցքային տեղեկատուների տարբերվող և համադրվող մոտեցումները, դրանք պայմանավորող հայեցողական, մասնագիտական և կարգավիճակային գործոնները, որոնք կարևոր դերակատարություն ունեն ՀՀ-ում ներդրումային քաղաքականության կառուցակցման գործընթացում:

4. <u>Տվյալների հավաքման գործիքների մշակումը</u>: Բոլոր տեսակի հարցազրույցների և քննարկումների համար մշակվել է մեկ համապարփակ կիսաձևայնացված գործիք (semi-structiured tool)՝ ուղեցույց (guide): Նման որոշումը կայացվել է հաշվի առնելով քննվող թեմայի տարբեր ասպեկտների՝ փորձագիտական շրջանակների համար նորույթային լինելը, ինչը ենթադրում է

[29] Պետական կառույցներից որպես հետազոտության համար կարևոր դերակատար է դիտարկվել և քարտեզագրվել Ֆինանսների նախարարությունը, որի ներկայացուցիչների հետ, սակայն, հնարավոր չի եղել հարցազրույց իրականացնել. ՀՌԿԿ-Հայաստանի բազմաթիվ փորձերին ի պատասխան նախարարությունը մերժել է մասնակցությունը հարցազրույցներին՝ պատճառաբանելով, որ հետազոտությունը չի առնչվում նախարարության գործունեության շրջանակին:

առավել ընդհանուր բնույթի հարցադրումներ ներառող հարցարան (տե՛ս՝ Annex 2)։ Նման հարցարանը թույլ էր տալու նպատակահարմարությունից ու պատասխանների բնույթից ելնելով՝ հետազոտության մասնակիցներին առաջարկել նոր հարցադրումներ, որոնք նախապես չէին կարող տեղ գտնել հարցարանում։ Հարցարանում ընդհանուր առմամբ թիրախավորվել են հետևյալ հարցախմբերը.

- Ընդհանուր պատկերացումներ ՀՀ օտարերկրյա ներդրումային քաղաքականության մասին (ներդրումային քաղաքականության հայեցակարգային և փաստացի բնույթը, ներդրումների հիմնական ոլորտները և ներդրող հիմնական երկրներն ու կազմակերպությունները։
- Տարբեր որակի ներդրումների ներհոսքերին (inflow) ու ծավալմանը նպաստող միջավայրերը (ինստիտուցիոնալ, մակրոտնտեսական, օրենսդրական, դատական, քաղաքական, քաղաքացիական)
- Ներդրումային քաղաքականության և ժողովրդավարության առնչություններին վերաբերող հարցեր։

Համապարփակ ուղեցույց-հարցարանի ճկուն և ստեղծագործական կիրառման շնորհիվ հաջողվել է խորքային և բազմակողմանի տեղեկություններ գրանցել ոչ միայն ուղեցույցում առաջարկված հարցերի վերաբերյալ, այլև բացահայտել ներդրումների որակի և ներդրումային միջավայրերի այնպիսի հատկանիշներ ու դրսևորումներ, որոնք ուղեցույցում նախապես չեն հարցադրվել։ Այդ հավելյալ տեղեկություններն ու նկարագրությունները դրանց տիպաբանման, կարգաբերման և կոդավորման առումով, անշուշտ, որոշակի դժվարություններ են առաջացրել, սակայն հիմնախնդրի վերաբերյալ առավել հագեցված և ամբողջական պատկեր ստանալու տեսակետից ուղեցույցի ճկուն կիրառումը միանշանակ արդարացված է եղել։

Բաժին 1. Օտարերկրյա ներդրումների որակը քայքայիչ և կառուցողական կապիտալների համատեքստում

1.1 Օտարերկրյա ներդրումների շարժընթացը՝ ըստ ներդրող երկրների

Սույն բաժնում պաշտոնական վիճակագրության հիման վրա անդրադարձել ենք ներդրող հիմնական երկրներին, պաշտոնական վիճակագրության բացերին, ինչպես նաև առկա վիճակագրական պատկերը պայմանավորող գործոններին:

ՀՀ-ում Օտարերկյա ներդրումներ գալիս են ավելի քան 30 երկրներից[30]: Վերլուծության համար առանձնացվել են ՀՀ-ում 5 հիմնական օտարերկրյա ներդրումների հոսքեր ապահոված երկրների (**Արգենտինա, Գերմանիա, Կիպրոս, Ֆրանսիա, Ռուսաստան**) մասնաբաժինները ընդհանուրի մեջ, և դրա շարժընթացը (dynamics) 2014-2021 թթ. ժամանակահատվածում[31] (տե՛ս **Figure 1**, **Figure 2**): **Figure 1-ում** շարժընթացը ներկայացվում է՝ ըստ համախառն օտարերկրյա *ընդամենը ներդրումների*[32], **Figure 2-ում՝** ըստ համախառն օտարերկրյա *ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ)*[33]:

Figure 1: Հինգ հիմնական ներդրող երկրների համախառն օտարեկրյա ներդրումների տարեկան ներհոսքում մասնաբաժնի փոփոխությունը (%) 2014-2021 թթ[34].



[30] Source: Armstat.am/Foreign investments: https://armstat.am/en/?nid=14

[31] Ներդրումային հոսքերի շարժընթացը դիտարկվել է 2014 թ-ից՝ հաշվի առնելով 2015 թ-ից Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին:

[32] Ընդամենը ներդրումները ներառում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումները (վերջինում ներառվում են վարկերը և փոխառությունները, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք/ստացվելիք գումարները, ստացված/տրված կանխավճարները): Աղբյուրը ՝ Օտարերկրյա ներդրումները 2021 թվականի հունվար-մարտին, էջ 115 https://armstat.am/file/article/sv_05_21a_420.pdf

[33] Foreign direct investment (Օտարերկրյա ուղղակի ներդրումներ)- Investment from one country into another (normally by companies rather than governments) that involves establishing operations or acquiring tangible assets, including stakes in other businesses.Source https://web.archive.org/web/20190408103028/http://lexicon.ft.com/Term?term=foreign-direct-investment

[34]Based on our calculations; Source: Armstat.am/Foreign investments: https://armstat.am/en/?nid=14

Figure 2. ***Հինգ հիմնական ներդրող երկրների համախառն օտարերկրյա ուղղակի ներդրումների տարեկան ներհոսքում մասնաբաժնի փոփոխությունը(%) 2014-2021 թթ[35].***



Ներկայացված գծապատկերները թույլ են տալիս ամրագրել հետևյալ իրողություններն ու միտումները.

- Թե՛ օտարեկրյա ընդամենը, թե՛ օտարեկրյա ուղղակի ներդրումների առումով նշված երկրների շարքում ամենաբարձր կշիռն ունի Ռուսաստանը:
- 2014-2021 թթ. համախառն օտարերկրյա *ընդամենը ներդրումների* մասով Ռուսաստանի մասնաբաժինը թեթև նվազել է: Արգենտինայի կշիռը գրեթե չի փոխվել այս ժամանակահատվածում: Կտրուկ նվազել է Ֆրանսիայի կշիռը, իսկ Գերմանիայի կշիռը՝ կտրուկ աճել:
- Համախառն օտարեկրյա *ուղղակի ներդրումների* մասով նշված ժամանակահատվածում նկատվում է Ռուսաստանի տեսակարար կշռի որոշակի աճի միտում: Ռուսաստանից եկած ներդրումները ուղղվում են հետևյալ ոլորտներ.
    - fishing and aquaculture,
    - manufacture of food products,
    - manufacture of leather and related products,
    - electricity, gas, steam and conditioning supply,
    - manufacture of computer,
    - electronic and optical products,
    - manufacture of machinery and equipment, other manufacturing,
    - land transport and via pipelines,
    - sports activities,
    - amusement and recreation activities, other personal service activities[36].

[35] Based on our calculations; Source: Armstat.am/Foreign investments: https://armstat.am/en/?nid=14
[36] Source: Armstat.am/Foreign investments: https://armstat.am/en/?nid=14

Ֆրանսիայի տեսակարար կշռի նվազումը նկատելի է: Անկում է նկատվում նաև Արգենտինան տեսակարար կշռում: Համախառն օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքում Գեմանիայի կշիռը 2014-2021 ժամանակահատվածում գրեթե չի փոխվել :

Ըստ Economic Intelligence unity կողմից 2021 թ. հրապարակված "Democracy Index"-ի[37]՝ **Figure 1-2–ում** ներկայացված երկրները ժողովրդավարության ինդեքսի վարկանիշային ցանկում ունեն հետևյալ ցուցանիշները:

Table 1: ՀՀ-ում հինգ հիմնական համախառն օտարերկրյա ներդրումների հոսքեր ապահոված երկրների Ժողովրդավարության ինդեքսը

Երկրներ	**Ժողովրդավարության ինդեքսի արժեք**[38]
Գերմանիա	8.67
Ֆրանսիա	7.99
Կիպրոս	7.43
Արգենտինա	6.81
Ռուսաստան	3.24

Այսպիսով, ըստ սահմանված դասերի՝ Գերմանիան դասվում է *կատարյալ ժողովրդավարությունների* դասին, Ֆրանսիան, Կիպրոսը և Արգենտինան՝ *ծաղկող ժողովրդավարությունների* դասին, իսկ Ռուսաստանը՝ *ավտորիտար* երկրների դասին[39]: Ինչպես արդեն ցույց տրվեց վերը բերված գծապատկերներում՝ ՀՀ-ում համախառն օտարեկրյա հոսքերի ամենամեծ կշիռ ունեցող երկիրը՝ Ռուսաստանն է:

CIPE-ի դիտարկումների համաձայն՝ "քայքայիչ" կապիտալը, ի հակադրություն "կառուցողական" կապիտալի, ներհոսում է հիմնականում ավտորիտար ռեժիմ ունեցող երկրներից[40]: Սա, իհարկե, չի բացառում, որ այլ երկրներից քայքայիչ կապիտալ չի կարող թափանցել ստացող երկրներ: Իմասնավորի՝ **Figure 1** և **Figure 2** գծապատկերներում ներկայացված երկրներից երկուսի՝ Կիպրոսի և Արգենտինայի դեպքում մեր հարցվողները արտահայտել են որոշ կասկածներ դրանց թափանցիկության և մրցակցային լինելու վերաբերյալ: Կիպրոսի պարագայում ուշադրություն է հրավիրվում անցած տարիներին հայաստանյան հանրային դաշտում մեծ աղմուկ հանած օֆշորային գործարքների վրա[41], իսկ Արգենտինայի պարագայում նշվում է էթնիկական գործոնը.[42]

---

[37] EIU, Democracy Index 2021: the China challenge: Source: https://www.eiu.com/n/campaigns/democracy-index-2021/

[38] Որքան բարձր արժեք ունի երկիրը, այնքան ավելի բարձր է ժողովրդավարական կառավարման մակարդակը:

[39] Source: EIU democracy index table 3: Source: https://www.eiu.com/n/campaigns/democracy-index-2021/

[40] Corrosive Capital: Known Unknowns,page 2: https://www.cipe.org/resources/corrosive-capital-known-unknowns/; https://corrosiveconstructivecapital.cipe.org/ , What Risks May Lurk: China's Investments and Lending in Emerging Democracies, April 2022: https://www.cipe.org/wp-content/uploads/2022/04/CIPE_WhatRisksMayLurk_20220404.pdf

[41] Տե՛ս՝ «Պետք է նշել, որ Հայաստանում ամենասիրված օֆշորը Կիպրոսն է»:

…Օտարերկրյա ներդրումները, որոնք Հայաստանում են, պիտի մի հատ մաղել: Որոշակի զանգված կա էդ օտարերկրյա ներդրումների, որ օտարեկրյա ներդրումներ չեն: Իրանք էդ օտարերկրյա ներդրման գլխարկի տակ են եկել, տարբեր տիպի (Կիպրոս, Վիրջինիա այլնդ և այլն) օֆշորային գոտիներից, որոնք իրականում պայմանավորված են եղել մեր ինստիտուցիոնալ կառուցվածքի խնդիրներով:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Այն երկրները, որտեղ կան առանձին հայեր, որոնք կատարում են խոշոր ներդրումներ: Օրինակ, Արգենտինան մեր ներդրողներից մեկն է, բայց, ըստ էության, դա Էռնեկյանի հաշվին է ամեն ինչ: Էռնեկյանին[43] *որ հանես, տակը բան չի մնա: Անձերի հաշվին է, էլի՛:*

Փորձագետ[44]

Մյուս կողմից, մեր հետազոտության ընթացքում ակնհայտ դարձավ, որ ոլորտը ներկայացնող փորձագետ-դերակատարները վերապահությամբ են վերաբերվում պաշտոնական վիճակագրության տվյալներին, ինչը ենթադրել է տալիս, որ դրանք կարող են ճշգրիտ չարտահայտել ինչպես թիվ 1 և 2 գծապատկերներում ներկայացված կշիռները, այնպես էլ շարժընթացի միտումները.

Ներդրումների մասով մեր վիճակագրությունը իրականում լավը չի… Նույնիսկ պաշտոնյաների հայտարարություններում հակասությունների մեջ են հայտնվում… Օրինակ, մի տեղ ներդրումների մեջ վարկերը ներառվում են, մի տեղում չեն ներառվում… Օրինակ, վերցնում ենք BoP-ն [վճարային հաշվեկշիռները], նայում ենք օտարերկրյա ներդրումները, ընդեղ, ըստ գործիքների, բացվածքը կարանք տեսնենք, բայց մենք ֆիրմաների մակարդակով տվյալներ չենք տեսնում ներդրումների մասով: Բայց որպեսզի մենք, օրինակ, տեսնենք՝ էդ ներդրումների outcome-ները ոնց են եղել, մենք պետք ա նաև էդ միկրո բաները տեսնենք: Եթե ունենայինք ֆիրմաների ներդրումների վերաբերյալ թվերը՝ իրենց շրջանառությունում (employment, բան-ման), մենք արդեն կարայինք դատեինք՝ էդ ֆիրմաները աճում են, թե եկել, ներդրում են արել, տենց մնացել ա: …Պետական ներդրումների մասով մի քիչ ավելի բացվածք ունենք, բայց մասնավոր ներդրումների մասով, օտարերկրյա ներդրումների մասով՝ չէ:

Փորձագետ

…Օրինակ, ինքը [Վիճակագրական կոմիտեն] 2022 թվին 2021 թվի տեղեկություններ ա հրապարակել, որ ներդրումների 60 տոկոսը եկել ա Ռուսաստանից, 30 տոկոսը եկել ա Գերմանիայից, մնացած 10 տոկոսը եկել են այլ երկրներ կոչված կատեգորիայի մեջ, որտեղ կարող ա լինեն Նիդերլանդներ,

---

https://armeco.am/publ/3-1-0-35. , https://news.am/arm/news/159937.html

[42] 2017թ. Սերժ Սարգսյանը Հայաստանի շենացմանն ու բարգավաճմանն ուղղված ազգանվեր գործունեության համար Է. Էռնեկյանին հանձնել է Հայրենիքի շքանշան: Այսինքն՝ շքանշանը տրվում է գործունեության էթնիկական այլ ոչ թե տնտեսական ասպեկտը կարևորելով (օրինակելի հարկատու, արտադրողականության աճը խրախուսող և այլն). Աղբյուր՝ https://armenpress.am/arm/news/908742/armenian-president-hands-out-order-of-motherland-to-philanthropist-eduardo-eurnekianC2A0.html
Ուշագրավ է, որ Էռնեկյանի Հայաստան գալը ժամանակին մեկնաբանում էին որպես նախկին նախագահ Ռ. Քոչարյանի անձնական կապերի արդյունք: Սա հաստատեցին նաև լրագրողները՝ 2018 թ. ԱԳՆ նախարարության նախկին շենքի գլխամասում (որն այժմ պատկանում է Էռնեկյանին) արձանագրելով "Ազատություն նախագահին" վերտառությամբ ցուցապաստառ՝ նկատի ունենալով Ռ. Քոչարյանին. Աղբյուր՝ https://www.1in.am/2404709.html

[43] Էդուարդո Էռնեկյանը արգենտինացի միլիարդատեր բիզնեսմեն է, ով հայկական սփյուռքից է:

[44] Ի հավելումն՝ ՁԼՄ-ներում հրապարակված որաշակի նյութեր բացահայտում են Քոչարյան-Էռնեկյան "փոխշահավետ" համագործակցության և Էռնեկյանի նկատմամբ հովանավորչական վերաբերմունքի որոշ մանրամասներ: Տե՛ս՝ Թալանի ընկերները կամ Էռնեկյանի աջակցությունը Քոչարյանին. Աղբյուր՝ https://www.1in.am/2404709.html

Լյուքսեմբուրգ… Էդտեղ կարող ա լինել ցանկացած երկիր, Խորվաթիան… Այսինքն՝ պիտի բացվեն էդ տեղեկությունները: Չկա էդ վերլուծությունները մանրամասն…

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

Փորձագետներն ու առանցքային տեղեկատուները ներդրող հիմնական երկրների ցանկում Ռուսաստանի կշռի մեծությունը բացատրում են գլխավորապես քաղաքական գործոններով, այսինքն՝ ըստ էության, քայքայիչ կապիտալին բնորոշ հատկանիշով.

Հիմնական ներդրում իրականացնող երկրները Ռուսաստան, եթե չեմ սխալվում, Գերմանիա, Ֆրանսիան ա: …Ռուսաստանի դեպքում, էսպես ասած, քաղաքականության հետևանք ա, մնացած երկրների դեպքում՝ հանքարդյունաբերության՝ որպես խոշոր ոլորտ ուղղվածության: …Ու կարա լինի, էսպես ասած, տարիների սպեցիֆիկ ներդրումներ, ինչ-որ մեծ պրոյեկտի հետ կապված: Օրինակ, Ֆրանսիայի դեպքում դա Օրանժ-ն էր…

Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից

Դե հիմնականը ռուսներն են: Դե որտե՞ղ կան ռուսները. ենթակառուցվածքներում, ալյումինի ոլորտում կան, էլեկտրոէներգետիկա… և գազ: Ռուսները իրանց թերությունները ունեն տվյալ դեպքում: Ըստ էության, էստեղ ես կարծում եմ որոշակի ճնշում էլ կարա լինի գեոպոլիտիկ:

Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից

…Պայմանավորված աշխարհաքաղաքական իրավիճակով, փակ սահմաններով և փոքր շուկայով՝ Հայաստան ներդրումների փոքր հատվածն է իսկապես օտարերկրյա ներդրումներ և ներդրումներ՝ իսկապես միտված տնտեսական շահ հետապնդելու: Ներդրումների մի ահագին հատվածը Հայաստանում դրանք քաղաքական են: Ռուսաստանի ներդրումների մի ահագին հատված քաղաքական է: Քաղաքական որոշում է կայացվել, որ Հայաստանում պետք է ունանալ ալյումինի գործարան ժամանակին, որը, հա՛, հնարավորություն է տալիս Հայաստանից, ենթադրենք, ալյումինի արտահանում եվրոպական երկրներ, բայց դա քաղաքական որոշում է: …ՌԺԴ-ն, որ Հայաստանի երկաթուղիներն են, հա՛, բեռնափոխադրումների առումով ինչ-որ դրական դինամիկա ունեն, բայց մարդատար գնացքների տեսակետից՝ իրենք գրեթե վնասով են աշխատում…

Լրագրող-փորձագետ

Փորձագետներից ոմանք նշված ժամանակամիջոցում Ռուսաստանի կշռի բարձրացումը մեկնաբանում են 2015 թ-ին ՀՀ-ի՝ ԵԱՏՄ կազմի մեջ մտնելու հանգամանքով: Նույն պատճառով, հավանաբար, նաև նվազում է ժողովրդավարական մի քանի երկրների ներդրող կազմակերպությունների մասնակցությունը ՀՀ-ում օտարերկրյա ուղակի ներդրումներին: Իմասնավորի՝ վերոհիշյալ ժամանակամիջոցում ՀՀ-ից հեռացել են Պրոկրեդիտ բանկը (Գերմանիա), Բջջային օպերատոր Օրանժը (Ֆրանսիա), Nasdaq OMX-ը, որը 2019 թ-ին վերանվանվեց Հայկական ֆոնդային բորսա[45]: Վերջերս իր Զանգեզուրի պղնձամոլիպդենային կոմբինատը (ԶՊՄԿ) բաժնետոմսերը վաճառեց և հանքարդյունաբերությունից դուրս եկավ Քրոնիմետ մայնինգը (Գերմանիա).

[45] Internal Brief; Assessment of current feasibility and relevance of the recommendations developed during the first phase of “Eurasia: Creating Enabling Environment for Constructive Capital” project. Prepared for the Center for International Private Enterprise By Artak Kyurumyan, 2021

Պիտի գնալ ու տեսնել՝ [վիճակագրական տվյալներում] ոնց ա էղել 2015 թ-ից առաջ: Ինձ թվում ա՝ ծավալների կտրուկ բան կա: Այսինքն՝ 60 տոկոս հաստատ չի էղել ռուսական ներկայությունը: Ես հիշում եմ շատ մոտավոր, բայց դրա համար եմ ասում, որպեսզի չկորչի օբյեկտիվությունը: ...Բայց ես վստահ եմ, որ էդ վիճակագրությունը նայենք, կտեսնենք ռուսականի կտրուկ աճ 2015-ից հետո: Որովհետև մարդիկ իրենց ավելի հարմարավետ են զգում ստեղ՝ պայմանավորված, ասենք, միասնական մաքսային տարածք[ով], մատչելի տարածք[ով]: Այսինքն՝ եթե դու ԵՄ արտահանում ես շատ ավելի դժվար, որովհետև էնտեղ չափանիշներ, լաբորատորիաներ, միլիոնավոր բան պիտի անցնես, պլյուս՝ նաև մաքսերը ուրիշ, իսկ ստեղ դու ազատ ես էդ գոտում...

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

ՀՀ-ում համախառն օտարերկրյա ներդրումների համախառն հոսքեր ունեցող և Democracy index-ով[46] "ավտորիտար" համարվող երկրների ցուցակում ՌԴ-ից բացի կան նաև ութ երկիր, որոնք դասվում են ավտորիտարների շարքին և ըստ այդմ՝ թեկուզ և փոքր կշիռ ունենալով՝ կարող են համալրել պոտենցիալ քայքայիչ կապիտալ ներդրողների ցանկը (տե՛ս **Table 2**).

Table 2: ՀՀ-ում համախառն օտարերկրյա ներդրումների համախառն հոսքեր ունեցող և ժողովրդավարության ինդեքսով "ավտորիտար" համարվող երկրների ցուցակը և նրանց դասակարգումը այդ ինդեքսում

Երկրներ	**Դասակարգում**[47]
Թուրքմենստան	104
Տաջիկստան	102
Իրան	101
Չինաստան	98
Բելառուս	97
Կուբա	95
Եգիպտոս	91
Ղազախստան	89
ՌԴ	88

Վերլուծության համար անհրաժեշտ է հասկանալ, թե **Table 2-ում** ներառված ինը երկրները ինչ մասնաբաժին ունեն ընդհամենը օտարերկրյա համախառն հոսքերի մեջ: **Figure 3-ը** ցույց է տալիս **Table 2**-ում ներառված ավտորիտար երկրների օտարերկրյա ուղղակի ներդրումների համախառն հոսքերի գումարի տեսակարար կշիռը ՀՀ-ում ներդրվող օտարերկրյա ուղղակի ներդրումների համախառն հոսքերի համեմատ: **Figure 3-ում** բերված գծապատկերն արտացոլում է ավտորիտար

[46] EIU, Democracy Index 2021: the China challenge: Source: https://www.eiu.com/n/campaigns/democracy-index-2021/

[47] Որքան բարձր է երկրի դասակարգումը, այնքան երկիրը մոտենում է դեպի ավտորիտարիզմ:

երկրներից եկող հոսքերի կշռի աճը: Ինչպես երևում է՝ ուղղակի ներդրումների հարաբերության շեմը 2019-ից հետո գերազանցել է 50%-ը, ինչը համեմատաբար մեծ է՝ հաշվի առնելով այն փաստը, որ 2021թ-ին ուղղակի ներդրումների համախառն ներհոսք եղել է ավելի քան 50 երկրներից:[48]

Figure 3: Sum of Investments from authoritarian countries/gross investments-Armenia, 2014-2021[49]



Օտարերկրյա ներդրումների *զուտ ներհոսքերի* պարագայում ավտորիտար ռեժիմ ունեցող երկրները վեցն են՝ **Իրան, Ռուսաստան, Կուբա, Չինաստան, Ուզբեկստան և Բելառուս:**[50] Այդ երկրներից ստացված նեդրումների գումարային տեսակարար կշիռը օտարերկրյա զուտ հոսքերի մեջ ներկայացված է **Figure 4-ում**[51]: Հարկ է ուշադրություն դարձնել, որ այս պարագայում ոչ թե գնահատվում է հարաբերակցության բացասական կամ դրական լինելը, այլ դրա *բացարձակ մեծությունը*: Այստեղ հարկ է ընգծել, որ այս հարաբերակցությունը ինքնին չի կարող ցույց տալ «քայքայիչ» կապիտալի տարածվածության չափը, քանի որ այն հաշվարկված է *զուտ*, այլ ոչ թե *համախառն* օտարերկրյա ուղղակի ներդրումների հիման վրա:

[48] Armstat.am/Foreign investments: Source: https://armstat.am/en/?nid=14
[49] Based on our calculations; Source: Armstat.am/Foreign investments: https://armstat.am/en/?nid=14
[50] EIU, Democracy Index 2021: the China challenge: https://www.eiu.com/n/campaigns/democracy-index-2021/
Այստեղ հարկ է նշել, որ Armstat.am-ում օտարերկրյա *համախառն* և *զուտ* ներդրումների հոսքեր ունեցող երկրների ցուցակը տարբեր է, այդ իսկ պատճառով ավտորիտար ռեժիմ ունեցող և ՀՀ-ում օտարերկրյա համախառն հոսքեր ունեցող երկրների թիվը ինն է, իսկ ավտորիտար ռեժիմ ունեցող և ՀՀ-ում օտարերկրա զուտ հոսքեր ունեցող երկրների թիվը վեցն է:
[51] Զուտ հոսքերը հաշվետու ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերություններն են: Աղբյուրը ՝ Օտարերկրյա ներդրումները 2021 թվականի հունվար-մարտին, էջ 115. https://armstat.am/file/article/sv_05_21a_420.pdf

Figure 4: Summary of net FDI from Authoritarian countries/net FDI - Armenia, 2014 - 2021[52]



Ինչ վերաբերում է ֆինանսական ոլորտին՝ մասնավորապես, բանկային համակարգին, այստեղ ներդրում կատարած երկրների ցանկն այլ է: ՀՀ առևտրային բանկերի բաժնետոմսերի 63%-ը պատկանում է ոչ ռեզիդենտ ներդրողներին, ընդ որում, յոթ բանկերի դեպքում նրանց է պատկանում բաժնետոմսերի 100%-ը: Դրանց թվում են Ռուսաստանը, Լիբանանը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Շվեյցարիան.[53]

…Շատ երկար տարիներ բանկային համակարգը գրավիչ ա եղել ներդրումների համար, և բավականին մեծ ոչ ռեզիդենտ անձինք՝ և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձինք, մշտապես մասնաբաժին են ունեցել համակարգում… Բացի էն, որ ասում ենք՝ ոչ ռեզիդենտներ, նրանցից մի մասում լուրջ ֆինանսական կառույցներ են… Մենք բացի դրանցից՝ ունենք նաև EBRD [ՎԶԵԲ], որը մեկ բանկում ա բաժնետեր (առաջ ավելի շատ էր, հիմա՝ էս պահի դրությամբ միայն մեկ բանկում ա): Ասիական զարգացման բանկը մեկ բանկում ունի բաժնեմաս…

Գործարար միության ներկայացուցիչ

Ուշագրավ է, որ փորձագետները բանկերի գրավչությունը բացատրում են բանկային ոլորտի խիստ կանոնակարգվածությամբ, թափանցիկությամբ, կայունությամբ և զարգացման պոտենցիալով: Ընդ որում, ոլորտում առկա հստակ կանոնակարգերը և թափանցիկության ապահովման փաստը

[52] Based on our calculations; Source: Armstat.am/Foreign investments: https://armstat.am/en/?nid=14

[53] Ըստ Հայաստան բանկերի միության տրամադրած տվյալների՝ Հայաստանի բոլոր բանկերում կան ոչ ռեզիդենտ բաժնետոմսեր: Ընդհանուր առմամբ՝ բաժնետոմսերի 63%-ը պատկանում է ոչ ռեզիդենտներին: Յոթ բանկերում 100% բաժնետոմսերը պատկանում են ոչ ռեզիդենտներին: Յոթ բանկերից վեցում բաժնետերերն իրավաբանական անձինք են: 11 բանկերում ոչ ռեզիդենտների մասնաբաժինը 50%-ից ավելի է: Միջազգային կազմակերպություններից հայկական բանկերում բաժնետոմսեր ունեն՝ ՎԶԵԲ-ը՝ մեկ բանկում 17,74%, ԱԶԲ-ն՝ 1 բանկում 13,93%:

դերակատարների մեծ մասը բացատրում են ոլորտը կարգավորող կառույցի՝ Կենտրոնական Բանկի՝ վերահսկողության գործառույթն արդյունավետորեն ապահովելու գործոնով: Նշվածները կարևոր պայմաններ են քայքայիչ կապիտալի թափանցումը դիմագրավելու առումով.

…[Բանկային] համակարգը բավականին խիստ կարգավորված ա, կանոնակարգված ա: …Դա բերում ա ֆինանսական կառույցների կայունությանը, այսինքն՝ ռիսկերը նվազ են, և էն ներդրողները, որոնք երկարաժամկետ հատվածում կայուն ներդրումներ են ընտրել, իսկ բանկերում սովորաբար ներդրումները այդպիսիք են, նրանց համար էդ մեկ գրավչություն: Երկրորդը՝ Հայաստանը, եթե հաշվի առնենք սովետմիության փլուզումից հետո բանկային համակարգի զարգացումը, մեծ պոտենցիալ ուներ, այսինքն՝ բնակչության ավելի փոքր մասն էր, որ բանկերից օգտվում էին՝ և վարկերի, և ավանդների տեսակով: …Երրորդը՝ խիստ կանոնակարգումը, ասեցի, դա բերել ա թափանցիկության բարձր աստիճանի, շատ բարձր… Եվ քանի որ ինքը զարգացող երկիր ա եղել, նաև տոկոսադրույքները բավականին կայուն վիճակի, բավականին գրավիչ են եղել…

Գործարար միության ներկայացուցիչ-փորձագետ

1.2 Ներդրումային հիմնական ոլորտները և ուղղությունները

Կապիտալի բնույթի կարևոր ցուցիչ կարող է համարվել այն հանգամանքը, թե բացի շահույթ հետապնդելուց և բյուջեի բարձր մուտքեր ապահովելուց՝ ո՞ր ոլորտում է այն ներդրվում և ինչպիսի՞ արդյունքի ստեղծմանն է ծառայում: Փորձագետների կարծիքով՝ առավել արդյունավետ և որակյալ են այն ներդրումները, որոնք նպաստում են ավելացած արժեքի արտադրությանը, ինստիտուցիոնալ զարգացմանը, աշխատուժի կարողությունների մեծացմանն ու նորարարական տեխնոլոգիաների կիրառմանը, միջազգային ու ներհամայնքային լոգիստիկ կարողությունների զարգացմանը, էկոլոգիական ռիսկերի նվազմանը (կանաչ ներդրումներ) և այլն.

…Երևի որակյալ ներդրումների [կարիք կա]: Ոչ թե ուղղակի քանակական ցուցանիշը ապահովելու համար, այլ ավելացված արժեք ստեղծող ներդրումների [կարիք կա]: …Կառավարության ծրագրում ամրագրված է գիտելիքահեն տնտեսություն ունենալ, երևի գիտելիք ստեղծող, ավելացված արժեք ստեղծող ներդրումների կարիք ունենք:

Պետական կառույցի ներկայացուցիչ

Գլոբալ առումով՝ ունենք այնպիսի ներդրումների կարիք, որոնք իրենց հետ կբերեն արտադրողականության աճ: Իմ կարծիքով՝ դա ամենակարևորն է: Դե՛, որովհետև մենք ունենք ակնհայտ արտադրողականության խնդիր: Ինձ թվում է՝ դա բոլոր ոլորտներին է վերաբերում… Ամենապարզը գյուղատնտեսությունն է, որտեղ ընդհանրապես արտադրողականության մասին խոսք չկա: Այսինքն՝ գյուղատնտեսության առյուծի բաժինը մինչև էսօր աշխատում է, ասենք, ավանդական-պապական մեթոդներով, և ակնհայտ է, որ դա թեկուզ ինչ-որ ժամանակ հետո, կամ հենց այսօր էլ բիզնես ռիսկեր է առաջացնում: …Հիմա այդ արտադրողականության աճը, որը պետք է երկրին, ո՞նց ինքը պետք է տեղի ունենա: Այստեղ օտարերկրյա ներդրումը լավ կարճ ճանապարհն է: Այսինքն՝ այն մարդը, ով որ դրսից կբերի կապիտալը, նաև դրսից կբերի իր փորձը, տեխնոլոգիան…

Պետական կառույցի ներկայացուցիչ-փորձագետ

Հարցազրույցներին մասնակից փորձագետները նկատում են, որ ՀՀ-ում ներդրումները շատ կենտրոնացած են՝ հատկապես գրավիչ է հանքարդյունաբերությունը, որի վերաբերյալ օրենսդրությունը ևս հօգուտ ներդրողի է: Գրեթե առանց բացառության՝ բոլոր հարցվողներն այս ոլորտը համարում են ներդրումների համար ամենից ոչ ցանկալի և ոչ արդյունավետը՝ նկատի ունենալով էկոլոգիական հետևանքներն ու օգտագործվող հին տեխնոլոգիաները: Փորձագետների մյուս դիտարկումը, ինչպես նաև պաշտոնական վիճակագրական տվյալները փաստում են, որ սույն ոլորտում ներդրումային կապիտալի մեծ մասը պատկանում է ռուսական ծագման կազմակերպություններին: Այս դեպքում, ինչպես նշվել է նախորդ ենթաբաժնում, կարևոր դերակատարություն են ունեցել ՀՀ վրա ՌԴ աշխարհաքաղաքական ազդեցությունը, ինչպես նաև ԽՍՀՄ շրջանում արդյունահանության ոլորտում ռուսական մասնակցությունը: Ներկայումս ԽՍՀՄ շրջանում շահագործվող գրեթե բոլոր մետաղական հանքերում ներդրողները (բաժնետոմսերի մեծ մասի բաժնետերերը) ռուսական կազմակերպություններն են.[54]

Ասենք, ովքե՞ր են մեր երկրում հետաքրքրված մարդիկ, որ գալիս են: Որպես կանոն՝ մենք գիտենք, մենք դա քիչ առաջ նշածս ՎիՀԿոմիտեի տվյալներից էլ կարող ենք հասկանալ. էն երկրները, էն կազմակերպությունները, որոնք կամ հանքում գործ ունեն անելու, կամ էներգետիկ ոլորտում…Կառուցապատում մեկ էլ:

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

…Ներդրումների մեծ մասը գնում է հանքարդյունաբերություն: Երկրորդ տեղում դա էլեկտրոէներգիայի, գազի և գոլորշու ներդրումներն են: Սա անուղղակի ներդրումների 64%-ն է, ուղղակի ներդրումների՝ 15%-ը: Սա հիմնականում Ռուսաստանի Դաշնությունն է, որը Հայաստանի ենթակառուցվածքներում ներդրումներ է կատարում: Երրորդ տեղում անշարժ գույքն է, որում ուղղակի ներդրումները 13% է կազմում՝ էն շինությունները, սա արդեն Երևանի հատվածն է, որոնք կառուցվում են Հայաստանի Հանրապետությունում:

Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից

Փորձագետները խոսել են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների և դրանց հետ կապված խնդիրների մասին՝ շեշտելով, որ, ըստ էության, գործող օրենսդրությունը չնայած որոշ վերապահումների՝ բավական բարենպաստ պայմաններ է ստեղծել հենց այդ ոլորտի զարգացման համար: Ոլորտին առնչվող վերապահումներն, ըստ որոշ փորձագետների, արևմտյան երկրների կարգավորումների հետ համադրման կարիք ունեն.

Կարելի ա ասել, որ օրենսդրական բազան երկրորդ բլոկում՝ ՏՏ բլոկում, բավականին լավ մշակված է: Հայաստանը ունի բավականին շահեկան դիրքեր և մրցակցային առավելություններ՝ համեմատած տարածաշրջանի մի շարք այլ երկրների հետ, և այս առումով՝ մենք մի քանի ուղղություն կա, որ պետք է փոխլրացնենք, որպեսզի մոտարկում լինի ամերիկյան օրենսդրության և, առհասարակ, արևմտյան երկրների օրենսդրության: …Սա հիմնականում վերաբերում է ներդրումային մոդելների և ներդրումային գործիքների ներդրմանը: Որովհետև երբ ներդրողը գալիս է իր համար անծանոթ երկիր, որքան էլ ինքը ՏՏ ոլորտ լինի կամ իրեն հետաքրքիր մի ուղղություն լինի, մեկ է, եթե ծանոթ գործիքներ իր համար չկան, ոնց որ ինքը սովոր ա աշխատել, դա բարդացնում է գործը:

[54] Աղալարյան Ք., Մետաղական հանքերի սեփականատերերը. հայկական պղնձի և մոլիբդենի առյուծի բաժնից շահույթ են ստանում ռուս գործարարները. Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/117849,
Հայաստանի ոսկու հանքավայրերի բացահայտված և չբացահայտված սեփականատերերը. Քրիստինե Աղալարյան. Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/116955

Բաժին 1-ի Գլուխ 1.1-ում քննարկված օտարերկրյա զուտ հոսքեր ապահովող ավտորիտար վեց երկրներից (**Իրան, Ռուսաստան, Կուբա, Չինաստան, Ուզբեկստան և Բելառուս)** ստացվող կապիտալը ներդրվում է ՀՀ-ի տնտեսության տարբեր ոլորտներում (Տե՛ս՝ **Annex 3**): Նշենք, որ զուտ ՕՈՒՆ-երի ամենամեծ մասնաբաժինը վերոնշյալ վեց երկրներից ունի ՌԴ-ն: Վերջին տարիներին ՌԴ-ն ունի զուտ ՕՈՒՆ-երի մեծ մասնաբաժին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են fishing and aquaculture, manufacture of food products, manufacture of leather and related products, electricity, gas, steam and conditioning supply**,** manufacture of computer, electronic and optical products, manufacture of machinery and equipment , other manufacturing, land transport and via pipelines, sports activities and amusement and recreation activities and in other personal service activities: Անհրաժեշտ է հավելել, որ այս ոլորտներում ՕՈՒՆ զուտ հոսքերը որոշ տարիների եղել են դրական, իսկ որոշ տարիների բացասական:

Նշված ոլորտներում ներդրումների մեծ ծավալ կազմելը պայմանավորված է մի շարք գործոններով.

- առհասարակ տրանսնացիոնալ ոլորտում տենդեր չեն անցկացնում:
- ֆինանսական շուկան (բանկերը) և հանքարդյունաբերությունն առավել ընկալելի են օտարերկրյա ներդրողների համար:
- ենթակառուցվածքները պետության կողմից արդյունավետ չեն կառավարվում
- Հանքարդյունաբերության ոլորտում էկոլոգիական չափանիշների պահպանման խիստ պահանջներ չեն գործում.

Կախված ա ոլորտից: Ընդհանրապես տրանսնացիոնալ ոլորտում տենդեր չեն անում: Դու նայում ես, խոսում ես հետները, հետո ընտրում ես: Ստեղ ռիսկեր կան: Ռուսաստանը ցույց ա տալիս, չէ՞, էդ հսկայական ռիսկերը. որ դու, ենթադրենք, քեզ սխալ ես պահում ու քեզ պատժում ա: Էդ կախվածությունը տրանսնացիոնալ կազմակերպություններից կա, ու հնարավոր չէ դրանից խուսափել: Դրա համար իրանք որոշակի առավելություն տալիս են, տեխնոլոգիա են տալիս, գիտելիք են տալիս: Բայց երկրներ կան, որ սեփականն են զարգացնում: Կլասիկ օրինակը Կորեան ա Հարավային, Ճապոնիան: ...Բայց դա ավելի թանկ ա նստում, դրա համար էստեղ պետք ա լինի սեգմենտային... Մի տեղ գան, օգնեն:

Վերլուծաբան-փորձագետների հետ ՃԽՔ մասնակից

…Ֆինանսական շուկան և հանքաարդյունաբերությունը (commodity կոչվածը) դրանք ամենարնկալելին են օտարերկրյա ներդրողների համար: Իրենց համար շատ ավելի քիչ ընկալելի է, օրինակ, Հայաստանում շատ զարգացած ՀՈՌԵԿԱ-ն՝ էդ հյուրանոցներ, ռեստորաններ: ...Դրա համար ներդրողները հենց էդ երկու ոլորտում են հիմնական ներդրումները անում…

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

...Հասկանալի ա, որ առանց հանքարդյունաբերության երկիրը չի կարա զոյատևի ու առաջ շարժվի: Նույն ձևի ոնց որ նավթային երկրի ասես՝ մի արտադրի: ...Էս մասով ուղղակի, կարծում եմ, բավականին մեծ ռեսուրս ծախսվի ու ստանդարտիզացման մի շարք ուղղություններ մտցվեն շատ կարևոր: Աշխարհում հիմա կա responsible mining ասվածը: Տենց երկիր չկա, որ mining-ով չզբաղվի, բայց մեզ մոտ էս responsible mining-ի միակ քեյսը, որ կարար լիներ, դա Ամուլսարն էր, որը չէղավ: Հիմա մենք պետք ա էս տարանջատումը շատ հստակ դնենք՝ էլի չխրախուսելով mining-ը... Բայց եթե մենք ունենում ենք բոլոր հավասար պայմաններում ներդրող, որը գտել է, որ սա ավելի մրցակցային դաշտ է, էստեղ կարելի է ներդրում անել: Ունենանք էնպիսի ստանդարտների, մոտեցումների բազա,

որով մենք կարողանանք մի փոքր ավելի հանգիստ էս հարցին վերաբերվել, ոչ թե ամեն անգամ դարձնել քաղաքական զգվռտոցների…

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ-փորձագետ

Որպես այդպիսին, ներդրումներ, որոնց կարիքը չունենք, ես չեմ տեսնում… Ասենք, մենք կարիք չունենք հանքահումքային հնացած տեխնոլոգիաների, բայց հանքահումքային նոր տեխնոլոգիաների կարիք ունենք: Այսինքն՝ եթե ինչ-որ մի տեղից դուրս գրված, հնացած տեխնոլոգիա կա, որը էականորեն արտադրողականություն չի ավելացնելու, բնապահպանական ծախսերը մեծացնելու ա, ապա մենք դրա կարիքը չունենք… Հիմա ձեզ բոլորը կասեն, որ մենք հանքահումքայինի ներդրումների կարիք չունենք: Ես էդ կարծիքին չեմ, որովհետև հանքահումքային չի նշանակում աղտոտում, և դա չի նշանակում, որ դուք չեք կարող նորագույն տեխնոլոգիաներ բերել, և դուք չեք կարող կամաց-կամաց ավելի բարձր ստանդարտների գնալ…

Վերլուծաբան-փորձագետ

1.3 Քայքայիչ և կառուցողական կապիտալի ադեպտներն[55] ու պրակտիկաները ՀՀ-ում

Սույն հետազոտության կարևոր նպատակներից էր պարզել թե առանցքային տեղեկատուներն ու փորձագետները Հայաստանում իրականացվող օտարերկրյա ո՞ր ներդրումներն են համարում քայքայիչ կամ կառուցողական, ինչպիսի՞ կոնկրետ պրակտիկաների մասին են տեղեկացված և ի՞նչ հատկանիշներ նկատի ունեն կապիտալի քայքայիչ կամ կառուցողական տեսակների մասին խոսելիս: Նշված հարցերի պատասխանները կարևոր են ոչ միայն որոշակի պատկերացումներ և պրակտիկաներ բացահայտելու տեսանկյունից, այլև այն առումով, թե որքանով են դրանք նպաստավոր կամ ոչ նպաստավոր քայքայիչ կապիտալի թափանցման համար: Որովհետև, ի վերջո, կոնկրետ պատկերացումներն են հաճախ որոշիչ դեր խաղում մեր կյանքի որևէ բնագավառում արատավոր տարբեր երևույթների հաստատման կամ բացառման համար: Թե ընդհանուր առմամբ մեր հանրության ու նույնիսկ փորձագիտական որոշ շրջանակներում ինչպիսի չափանիշներ են կարևորվում օտարերկյա ներդրումների վերաբերյալ, բավականին տիպական կերպով արտահայտվում է Երևանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի՝ Սանիթեք կազմակերպության մասին մի հայտարարության բացասական և զավեշտական արձագանքներում, որում նախկին քաղաքապետը բառացի ասում էր հետևյալը՝ «Խոշոր ներդրողը չի նշանակում լավ ներդրող»[56]: Սա կարող է բացատրվել նրանով, որ հայաստանյան հասարակության պատկերացումներում հաճախ խոշոր ներդրողը լավի ու վատի գնահատականներից անդին մեկն է

Իշխող պատկերացումների տեսանկյունից, բնականաբար, արտառոց ու անսպասելի չէր այն իրողությունը, որ մեր քննարկումների ու հարցազրույցների մասնակիցների մի զգալի մասը, և հատկապես առանցքային տեղեկատուների մեծամասնությունը (պետական կառույցների, բանկային և գործարար ոլորտների ներկայացուցիչները) “սխալ” կամ ծայրահեղ տեսական է համարում “քայքայիչ” և “կառուցողական” եզրերի բնութագրերը: Նրանցից ոմանք կարծում են, որ կարևորը կապիտալի այլ չափանիշներն են, որոնք ունեն քանակական դրսևորումներ (ծավալ,

[55] Հետևորդ, կողմնակից, ադեպտ:

[56] Խոշոր ներդրողը չի նշանակում լավ ներդրող. Հայկ Մարությանը «Սանիթեք»-ի մասին: Աղբյուր՝ https://www.youtube.com/watch?v=ReP_YRMWW34

շահույթի մեծություն, բյուջեի մուտքեր և այլն): Վերջիններիս որոշ մասն էլ համոզված է, որ Հայաստանն առահասարակ ամեն տեսակ ներդրումների կարիքն էլ ունի, իսկ քայքայիչ կապիտալի ռիսկեր, ըստ էության, չկան: Այդ թվում, ռիսկային չեն նաև բնական մոնոպոլիաները: Հնչեց նաև կարծիք, որ կապիտալը կարող է լինել քաղաքական, աշխատել վնասով, բայց չլինել քայքայիչ, ինչպես, օրինակ, Հարավկովկասյան երկաթուղիների պարագայում է.

Ես ձեզ անկեղծ ասեմ, դրա ռիսկը [քայքայիչ կապիտալի ներհոսքի ռիսկը] տենց մեծ չի, էդտեղ իզուր մի կենտրոնացեք: ...Ընենց մեծ ռիսկ մենք չունենք: Եթե մաքուր փող ա գալիս, ես մեծ ռիսկ չեմ տեսնում: ՀՀ-ում ընենց քայքայիչ կապիտալ չկա, էլի՛, որ էկել ա, եսիմ ինչ ա անում և այլն: Տենց փողեր մենք չունենք Հայաստանում: Որոշ երկրներ կարող ա էդպիսի ռիսկեր ունեն, մենք էդ երկրներից չենք:

Գործարար միության ներկայացուցիչ

...Երկաթուղին պետական ա, ինքը բիզնես չի: Ռուսական երկաթուղին իրականում պետական ա: Եվ երկրորդը՝ ինքը ինվեստիցիա չի, ինքը կոնցեսիա ա: Իրանք ցանկություն ունեին ավելի մեծ խնդիրներ լուծելու, և էդ մեծ խնդիրները լուծել՝ տարածաշրջանային ազդեցության տեսակետից: Բայց ոչ թե տարածաշրջանային տեսակետից կոնկրետ Ռուսաստանի դերը միայն ավելացնել, այլ հետագայում, երբ որ կապեր լիներ, երկաթուղու դիրքերը՝ որպես առաջնային փոխադրող ամրապնդել: ...Իրանք ունեին մի շարք խնդիրներ, այդ թվում՝ իրանց երկաթուղու ենթակառուցվածքների համար ավելի մեծ շուկա ունենալը մշտապես: Դա ի՞նչ ա նշանակում.իրանք ունեն երկաթուղու սպասարկման գործարաններ և այլն, և այլն..., վագոն են արտադրում, ռելս են արտադրում... Թափանցիկությունը այլ խնդիր ա: Ուզում եմ ասեմ՝ ստեղ միայն ռազմաքաղաքական տրամաբանություն ման մի եկեք: Էդտեղ կա ռուսական երկաթուղու համար բիզնես որոշակի տրամաբանություն ևս...

Վերլուծաբան-փորձագետ

Այդուհանդերձ, մեր քննարկումներին ու հարցազրույցներին մասնակիցների մեկ այլ փոքրաթիվ խումբ հակված է կապիտալի բնույթը դիտարկել այլ հատկանիշների հիման վրա, որոնք վերագրելի են “քայքայիչ” կամ “կառուցողական” կապիտալներին: Դրանց շարքում առավել հաճախ նշվել է թափանցիկությունը: Ընդ որում, վերջինիս տակ փորձագետները նկատի ունեն ոչ միայն որևէ օտարերկրյա կազմակերպության գրանցման գործարքի, այլև ընթացիկ գործունեության թափանցիկությունը: Նրանցից ոմանց դիտարկմամբ՝ թափանցիկության ապահովման առումով հատկապես կարևոր նշանակություն ունի կազմակերպության կառավարման կորպորատիվ մոդելը.

Հանքաարդյունաբերության բոլոր ներդրումները քայքայիչ են, բոլորը գալիս են օֆշորայինից... Հայաստանի ֆոնդային բորսայի շահառուները թափանցիկ չեն, մինչև հիմա էլ թափանցիկ չեն...

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Քայքայիչ կապիտալի օրինակներ են, իմ կարծիքով, հանքարդյունաբերական կազմակերպությունների մեծ մասը, երբ որ մենք չգիտենք՝ տենց հանքերը ոնց են, ինչ առքուվաճառքի պայմանագրերով, առհասարակ ինչ պայմանագրերով ու պայմաններով են տրվել: Էներգետիկ կազմակերպությունները՝ հատկապես մեծերը... Ասենք, ՀԷՑ-ի հետ կապված հարցեր կան, դրանք քայքայիչ կապիտալի օրինակներ են: Հետո քայքայիչ կապիտալի օրինակներ կարան լինեն նաև էն իրավաբանական անձինք, որոնք որ տենց հատուկ, ձևական ստեղծվում են, տենց ինչ-որ գործարքի համար... Կամ ասենք, իրար փոխառություններ են տալիս, բոլորը իրար շարունակական վարկեր են տալիս, որ դու ընտեղ խճճվես, բայց սև փող ա դա...

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

…Մենք գալիս ենք էլի կորպորատիվ կառավարման դաշտ… Բարենպաստ կապիտալի ներգրավման կամ կազմակերպությունների թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման [մեջ] ամենամեծ դերակատարում ունի բաժնետերը, բաժնետիրոջ մոտեցումը, ոչ միայն բաժնետիրոջ, այլ նաև կառավարման կառուցվածքում խորհրդի դերակատարումը, որ էդ խորհուրդը լինի անկախ՝ անկախ էն հանգամանքից՝ իրեն վերահսկող հանձնաժողովը իրա անկախության գործառույթը իրականացնում ա, թե չի իրականացնում…

Վերլուծաբան-փորձագետ

Ճանապարհաշինությունը դա սարսափելի ա, այսինքն՝ ինքը քայքայիչի [քայքայիչ կապիտալի] մեջ ա: Տենց գազամատակարարումը, այսինքն՝ մենք չգիտենք՝ ով ոնց, որտեղ, ում, ինչ, ինչ գնով: Շուտով նաև էներգետիկան կլինի: …Ովքե՞ր են լիցենզիաներ ստացել, որ պետք ա մատակարարեն: Ընդեղ կան կազմակերպություններ, որոնք սերտորեն, անմիջապես կապված են ՀԷՑ-ի ժողովրդի հետ: Տենց բաները «Հետք»-ը լավ մանրամասն գրեց[57]*:*

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

Հիշատակվելու հաճախականությամբ երկրորդը հովանավորչության և անձնական կապերով բնութագրվող ներդրումների պրակտիկաներն են: Չնայած այն հանգամանքին, որ որոշ դեպքերում գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումները նպաստում են վերոհիշյալ պրակտիկաների դրսևորմանը կամ գոնե չեն խոչընդոտում դրանց, այդուհանդերձ, փորձագետների զգալի մասը կարծում է, որ նման երևույթներն ունեն քայքայիչ բնույթ, քանի որ բացառում են հավասար մրցակցությունը.

Դե հիմա կա տենց դեպք, որ վարչապետի աշխատակազմը՝ հենց ինքը իրան համարում ա, որ ինվենստեցիայա բերել: Մի հատ ռեստորան կա… Ընդեղ պետությունը փայ[ատեր] ա: Չգիտեմ, Սովետից հետո տենց բան չի էղել, որ պետությունը ռեստորաններում, վետերոկներում փայ ա: Հիմա ընդեղ պետությունը փայ ա… Նախ՝ նորմալ չի, որ վարչապետի աշխատակազմն ա դրանով զբաղվում, այսինքն՝ տենց մի հատ ռեստորանի հարցով ինչի՞ պիտի պառլամենտական երկրի վարչապետի աշխատակազմը զբաղվի, երկրորդ՝ նորմալ չի, որ ընդեղ ներդրում ա արել… Ինչի՞ պիտի ուրիշ դեպքերում, ասենք, ներդրողին գովազդի իշխանության ներկայացուցիչը: …Հետո՞ ինչ, որ ինքը մեծ գումարով ա էկել, մեծ ներդրումով, դա չի՞ ազդում բանի [մրցակցության] վրա…

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

Իմ ասածը էն ա, որ պետք ա օրենսդրությամբ լինի, որ եթե համայնքի ավագանին դեմ ա… ինչ-որ ներդրումային ծրագրի, պետք ա էդ դեմ լինելը ինչ-որ ձևով ազդի ծրագրի չլինելու վրա: Հիմա տենց չի… Ես առնվազն մի քանի դեպք գիտեմ, որ ավագանին դեմ ա, հա՛, ասենք, ինչ-որ բանի հայտարարություն ա դնում, բայց ներդնողը կառավարության հետ ա խոսում, ի վերջո, էդ ավագանու թուղթը տենց անկապ կորում ա…

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

---

[57] Նկատի ունեն Հետք-ում հրապարակված հետևյալ հոդվածը՝ Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացում. ովքե՞ր են նոր մատակարարները, Քրիստինե Աղալարյան: Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/142781

Ես չեմ հասկանում էլի, ինչի՞ են գալիս Կառավարության ձեռքը սեղմում: Այ սա արդեն միջավայրի խնդիր ա… Էդ մարդիկ հասկանում են, որ իրանց հարստության մի մասը բերում են էս երկիր ու իրենք այդ ձեռքը սեղմելով՝ մտածում են, որ ապահովագրում են իրենց ներդրումները: Այդ ձեռք սեղմելու պրոցեսը իմ համար մի հատ նոն-սենս էր: …Բաժնետերը եկել ա, Կառավարությունից մի հատ էնպիսի ներկայացվածություն ա, ընդհուպ՝ վարչապետ, փոխվարչապետ, ԱԺ փոխնագահ…

Պետական կառույցի ներկայացուցիչ

Փորձագետներից մի քանիսի կարծիքի համաձայն՝ էթնիկական հիմքի վրա ներդրում անելը չնայած հանգեցնում է որոշակի խնդիրների, բայցևայնպես, դրանք քայքայիչ կապիտալ համարելը ճիշտ չէ: Այն ավելի շատ որակվում է որպես "էմոցիոնալ" ներդրում, որը ռիսկեր ներառելով հանդերձ կարող է դառնալ նաև կառուցողական ներդրում: Մասնագետները հարցը դիտարկում են այդ ներդրումները էմոցիոնալ դաշտից կարգավորումների դաշտ տեղափոխելու և իրատեսական ուղղություններում ներդրումներ կատարելու շրջանակում.

…Որպես կանոն դա կառուցողական չէ, բայց կոչել քայքայիչ, կոռոզիոն, այստեղ սխալ ձևակերպում կլինի: Սփյուռքի կողմից կատարված ներդրումներն, այն ներդրումներն են, որ դժվար է տարբերակել՝ սա կառուցողական է, սա քայքայիչ է: Այնտեղ երրորդ կատեգորիա էլ կա. ամբողջությամբ ինքը էմոցիոնալ է: Դա կարող է լինել և՛ կառուցողական, և՛ քայքայիչ…

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ-փորձագետ

Փորձագետներից ոմանք ուշադրություն են հրավիրում նաև երկար տարիներ վնասով աշխատող մի շարք կազմակերպությունների հանգամանքի վրա, որում արտատնտեսական նպատակներ են տեսնում[58].

Երկաթուղային ցանցն էլ է միանշանակ քայքայիչ կապիտալ: …[Վնասով է աշխատում], Էդ նշանակում ա, որ միայն քաղաքականությունն ա ընտեղ, ուրիշ բան չկա… Էլեկտրաէներգիայի ոլորտը եկավ, հասավ էս վիճակը, ինչի՞ց էր. քայքայիչ կապիտալի, քայքայիչ ներդրումների արդյունքն էր: Բերեց, հասցրեց էնտեղ, որտեղ դու ոչ մի բանի չես տիրապետում, և իրանք բոլոր լծակներով քո վրա ազդում են: Նաև իրանական գազի պատմությունը գիտենք…

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

Հայաստանում օտարերկրյա ներդրումների յուրահատուկ պրակտիկաներից մեկը, որը հարցվողների կարծիքով կարող է դիտարկվել որպես քայքայիչ կապիտալի դրսևորում, կեղծ (fake) ներդրումներն են[59]: Առաջին հայացքից սրանց բացասական կողմը արտատնտեսական նպատակներով (օրինակ, ընտրությունների ժամանակ) շահարկման առարկա լինելն է: Սակայն,

---

[58] Հարցվողներից մեկը ընդունելով, որ ՀԿԵ-ի գործունեությունը Հայաստանում ավելի շատ քաղաքական նպատակներ է հետապնդում, այդուհանդերձ, հակված չէ այն քայքայիչ կապիտալ համարել՝ հիմնավորելով, որ դրա գործունեությունը չի հակասում ՀՀ օրենքներին:

[59] Սրանց շարքին կարելի է դասել օֆշորում ձևավորված մի շարք կազմակերպությունների կապիտալը: Տե՛ս, օրինակ,
Օֆշորներում թափառող հայկական հանքերը: Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/136311
Օֆշորային բանկի փաստաթղթերը բացահայտել են «Գոլդեն Փելիսի» սեփականատերերի գործարքները. ԱԱԾ-ն հյուրանոցի դիմաց կարճել է քր. գործը: Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/116946

որոշ դեպքերում նմանատիպ պրակտիկաների նկարագրությունից պարզվում է, որ դրանց հիմնական քայքայիչ հատկանիշը թափանցիկության բացակայությունն է.

Իմ կարծիքով՝ մեր քաղաքականությունը բնորոշվում ա ֆեյք ու իրական ներդրումներով: Ֆեյք ներդրումներ ես շատ եմ տեսել. որ մեկը գալիս ա, ասում ա՝ ես անմոռուկի շենք եմ բարձրացնում, մեկը գալիս ա, ասում ա ՝ եկե՛ք կուկուռուզնիկը քանդենք, տեսեք՝ ինչ հյուրանոց ենք անում: Ու ոնց որ պետության քաղաքականությունը էնպիսին չի, որ էդ ներդրումները դառնան իրական…

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

Ըստ հետազոտության որոշ մասնակիցների՝ քայքայիչ կապիտալն օգտագործում է տարբեր մեխանիզմներ հարկերից խուսափելու և ոչ օրգանական գործունեությամբ հարստանալու համար: Այդպիսի մեխանիզմներից մեկը բազմաթիվ փոքր կազմակերպությունների ստեղծումն է, որոնք միմյանց փոխառություն և վարկեր են տալիս.

Քայքայիչ կապիտալի օրինակներ կարան լինեն նաև էն իրավաբանական անձինք, որոնք որ տենց հատուկ, ձևական ստեղծվում են տենց ինչ-որ գործարքի համար: …Ֆիզիկական անձը, օրինակ, չի կարա գնա, սա առնի, ֆիզիկական անձը հիմնում ա հինգ հատ հաջորդական կազմակերպություններ… Ի վերջո, դրանք ևս տենց ակնհայտ ա, որ փողի ծագումը քողարկելու նպատակ ունեն…

Լրագրող-փորձագետների հետ խմբային քննարկման մասնակից

Առանցքային տեղեկատուները և փորձագետները ուշադրություն են հրավիրում մի շարք ոլորտներում այսօր առկա քայքայիչ կապիտալի հատկանիշ ունեցող գործունեությունների վրա, որոնք անցյալի ժառանգություն են, որոնց հետ, մի շարք հանգամանքներով պայմանավորված, դժվարանում է պայքարը.

Ինձ թվում ա՝ էդ մթնոլորտը ահագին փոխվել ա հիմա, ընդհանուր համակարգն ա փոխվել, բայց Հայաստանը, կարծում եմ, դեռ շարունակում ա, կոպիտ ասած, տանջվել նույնիսկ էն 20-30 տարի առաջ արված ներդրումներից. որովհետև պայմանագրերը կնքվել են, օրինակ, իշխանությունների կողմից կամ այլ մարմինների կողմից 20-30 տարով՝ առանց հաշվի առնելու, որ հետո էդ կիրառվելու են արդեն նոր պայմաններում, նոր միջավայրում: Ու պետությունը չի կարողանում դրանք վաղաժամ կասեցնել, կամ փոխել, կամ ինչ-որ խնդիրների առաջացման դեպքում մեխանիզմներ չունի՝ նույն էներգետիկայի ոլորտում: Էդպես շատ ունենք պայմանագրեր, որ էս պահին ոչ մի բան չենք կարողանում անել, բայց հարց ա՝ իրանք ինչքանով են թափանցիկ, կամ հաշվետվողականությունը էդտեղ շատ ցածր ա…

Պետական կառույցի ներկայացուցիչ

…Մինչև 2018 թ-ը՝ մինչև հեղափոխություն, կլասիկ քայքայիչ կապիտալի ֆորմատներ են մեզ մոտ գործել… Մինչև 15 քեյս ինձ մոտ նշած կա, թե ոնց է ստացվել, որ մի ներդրող, գալով Հայաստան, մեկ տարի ունենալով շատ բարձր շահութաբերություն և այն, վերջում ստիպողաբար լքել է երկիրը՝ իր ամբողջ asset-ները վաճառելով իքս մեկին՝ օլիգարխիկ համակարգի ներկայացուցիչներից որևէ մեկին: Երկրորդ մոդելով մենք սկսել ենք, փորձել ենք շարժվել 2018-ից հետո, բայց էստեղ էլ պետք ա հասկանալ… Տեսական սահմանումների ամրագրումը, դա դեռ չի նշանակում, որ ձեր մոտ ներդրումը կգա: …Պետք ա քո փաթեթավորումը բաղկացած լինի մի քանի օղակներից. մեկը ձեր տված սահմանումն է, մյուսը՝ դրա տակ օրենսդրական բազան և դրա իմպլեմենտացիան, երրորդը ու ամենակարևորը, հատկապես մեր նման երկրների մասով՝ success story-ները ու չորրորդը՝ կանխատեսելիությունը՝ էս բոլոր էլեմենտների կանխատեսելիությունը…

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ-փորձագետ

Որպես կառուցողական կապիտալի հատկանիշներ՝ բացի էկոլոգիական ռիսկերը նվազեցնելուց, աշխատուժի որակը բարձրացնելուց, տեխնոլոգիական փոփոխություններ բերելուց, արտադրողականության աճին և ինստիտուցիաների զարգացմանը նպաստելուց՝ հարցվողները նշում են ներդրման երկարատևությունը, ներդրողների սոցիալական պատասխանատվությունը, հակակոռուպցիոն տրամադրվածությունը.

Մենք երկարաժամկետ ներդրումների կարիք ունենք, լուրջ ինստիտուցիոնալ կառույցների կողմից ներդրումների կարիք ունենք… Մեր երկրում մարտահրավերները մեծ են, փոփոխությունները մեծ են, և արագ փախչող փողեր մեզ պետք չեն: Այսինքն՝ եթե մեկը գալիս ա կարճաժամկետ, բարձր տոկոսի հետևից և այլն, ու էստեղ ինչ-որ բան ա ուզում անի, նաև շատ արագ էլ փախչելու ա՝ մի հատ իրավիճակը փոքրիկ փոփոխվեց կամ լրացուցիչ ռիսկ բացվեց: Դրա համար, ես կարծում եմ՝ ինստիտուցիոնալ կառույցների կողմից երկարաժամկետ ներդրումների կարիք կա:

Գործարար միության ներկայացուցիչ

…Ոչ կոնստրուկտիվ կապիտալի հոսք կա… Դրան հակառակ՝ մենք ունենք հնարավորություն, որը չի օգտագործվել՝ կապիտալի շուկան: …Երբ որ կապիտալի շուկայի միջոցով հայկական կազմակերպությունները ցուցակվում են, և նրա բաժնեմասը գնում է լիբանանյան կազմակերպության ինչ-որ մի բաժնետեր կամ ֆիզիկական անձ Լիբանանում, որը կարևոր չէ՝ ինչպես է հարստացել, այդ մարդը գնում է հայկական կազմակերպության բաժնետոմսը ու այդ կազմակերպությունը հաշվետվություն է ներկայացնում ոչ միայն որպես բաժնետեր իր բաժնետիրոջը, այլ նաև ֆոնդային բուրսան ունի չէ՞ իր կանոնները. թե ոնց վերահսկի, որ կառավարումը թափանցիկ լինի և հանրահայտ ESG կամ կառուցողական, կայուն զարգացման տարրեր ունենա այդ կազմակերպությունը, սոցիալական պատասխանատվություն, բնապահպանական պատասխանատվություն [ունենա], …ինչպես նաև ինչ-որ մեխանիզմներ կոռուպցիայի հսկման…

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ-փորձագետ

Խոսելով կառուցողական կապիտալի աղեպտներից՝ հարցվողները հիմնականում հիշատակում են ՏՏ ոլորտի կազմակերպությունները, Պեռնո Ռիկար Արմենիան, Օրանժ բջջային օպերատորը, գյուղատնտեսության զարգացման մեջ ներդրում անող կազմակերպությունները: Փորձագետների կարծիքով՝ դրանք ոչ միայն նպաստում են կոնկրետ ոլորտների զարգացմանը և միտված են արտադրողականության աճին, այլև մեր երկրում կորպորատիվ մշակույթ են փոխում.

Օրինակ, ես համարում եմ, որ Հայաստանի էդ IT ներդրումները բավականին կառուցողական են: Բացի էն որ աշխատատեղ են ստեղծում՝ նաև իրենք շատ լուրջ մշակույթ են բերում ՏՏ ոլորտի մարդկանց մեջ, այսինքն՝ էդ ՏՏ ոլորտի մարդիկ էլ մեզ հետ են ապրում նույն երկրում, ու դա մշակույթ է փոխում:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Օրինակ, եկեք ալկոհոլային խմիչքների ոլորտը վերցնենք: …Նույն Պեռնո Ռիկարը՝ կորպորատիվ էթիկա է: Տեխնոլոգիա էլ է ինչ-որ մի տեղ, չնայած՝ դա այն ոլորտն է, որտեղ տեխնոլոգիան միգուցե ամենակարևորը չի, որը պապականով կարելի է անել… Այդ մի կազմակերպությունը, որը մեր երկրում հայտնվեց, ինքը այդ ոլորտը փրկեց, որովհետև ինքը բերեց իր հետ իր այդ կառավարման մշակույթը: …Հաճախ կորպորատիվ կառավարումը մեզ մոտ շատ նեղ է ընկալվում. խոսքը միայն գործադիր

տնօրեն ու խորհրդի հարաբերություններ չի, ընդհանուր կառավարման էթիկան, ընֆիանուր բիզնես որոշումները, պլանավորումը, ասենք, ...մարկեթինգը:

Պետական կառույցի ներկայացուցիչ-էքսպերտ

Բաժին 2. Ներդրումային միջավայրը քայքայիչ և կառուցողական կապիտալների համատեքստում

ՓՀ-երին և ՓԽՔ-ներին մասնակցած մի շարք փորձագետներ համարում են, որ քայքայիչ կամ կառուցողական կապիտալի ներթափանցման և ծավալման համար առավել կարևոր են ոչ թե կապիտալի, այսպես ասած, արտաքին բնութագրիչները (նպատակը, ծագումը, ներդրումային ոլորտը), այլ այն հանգամանքը, թե գործառնության ինչպիսի նպաստավոր պայմաններ են նրանք գտնում ստացող երկրում:

Նշված առումով՝ մեր ուսումնասիրությունները ավելի հաճախ բացահայտում են ոչ թե ուղղակիորեն կապիտալի այս կամ այն տեսակի տարածմանը նպաստող գործոնները, այլ քայքայիչ կապիտալի տարածման ու ծավալման ռիսկերը: Կարելի է ասել, որ քայքայիչ կապիտալի տարածմանը նպաստող գործոնները հազվադեպ են իրենց ուղղակիորեն ի ցույց դնում: Դրանք փնտրվում և գտնվում են ներդրումային քաղաքականությունը հիմնավորող, կարգավորող փաստաթղթերում ու որոշումներում, դրանց նպատակների և իրականացման մեխանիզմների անհստակության և անմիանշանակության մեջ, վերահսկողության անարդյունավետ մեխանիզմների մեջ, ինչպես նաև դրանց իրականացման տարբեր ռեպրեզենտացիաներում, այդ թվում՝ իրականացնողների կոմպետենտության և հետևողականության փաստերում: Քայքայիչ կապիտալի տարածման ռիսկերը աճում են նաև քաղաքական համակարգի բնույթով, քաղաքացիական հասարակության կայացածության մակարդակով, աշխարհաքաղաքական ազդեցություններով, արտակարգ հանգամանքներով և ուրիշ այլ գործոններով պայմանավորված:

2.1 Ներդրումային քաղաքականության պետական տեսլականը

Օտարերկրյա ներդրումներին վերաբերող ՀՀ հայեցակարգը մշակվել է 2015 թ[60]: Մինչ այդ, ոլորտին վերաբերող քաղաքականության համար ուղեցույց են համարվել գլխավորապես 1994 թ. ընդունված Օտարերկրյա ներդրումների մասին ՀՀ օրենքը[61] և 2011 թ. Ազատ տնտեսական գոտիների մասին ՀՀ օրենքը[62]: Միջազգային փորձագետները համարում են, որ ՀՀ ներդրումային օրենսդրությունը լուրջ բացեր չունի և մի շարք առումներով (բիզնեսների գրանցման, հողի մատչելիության) Հայաստանը նույնիսկ օրինակ է ծառայել այլ երկրների համար[63]:

Հետազոտությանը մասնակցած հարցվողները, սակայն, նկատում են, որ ներդրումային քաղաքականությունը ուղղակիորեն չի բխում հայեցակարգից և ամեն հաջորդ նախարար կամ փոխնախարար «*գալիս է, այդ ռազմավարությունը իրեն դուր չի գալիս, չի իրականացնում, այլ ինքն է սկսում նորը մշակել*»: Նրանք նշում են, որ ներդրումային հայեցակարգը «չի իջնում ներքևի օղակներ» և չի դառնում քաղաքականություն: Այդ հանգամանքին անդրադառնում են նաև

[60] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, 8 հոկտեմբերի 2015 թվականի N 45: Աղբյուր՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=82676

[61] Հայաստանի Հանրապետության օրենքը օտարերկրյա ներդրումների մասին, ընդունված ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1994 թ. Հ.Ն-1093-I: Աղբյուր՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872

[62] Հայաստանի Հանրապետության օրենքը ազատ տնտեսական գոտիների մասին, ընդունված 2011 թվականին: Աղբյուր՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=69095

[63] UNCTAD "Investment Policy Review- Armenia",United Nations, 2019, p. 8, Source: https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf

ներդրողները[64]: Հայեցակարգի հիմնական դրույթներից հարցվողների մեծ մասի անտեղյակությունը որոշ իմաստով նույնպես վկայում է այդ փաստաթղթի անգործունակ լինելու մասին: Նշվածը թույլ է տալիս ենթադրել, որ բուն խնդիրը լավ հայեցակարգ ունենալու մեջ չէ: Կարելի է ունենալ աշխարհի լավագույն հայեցակարգը կամ քաղաքականության ուղեցույցը, բայց չունենալ երաշխիքներ (գործուն մեխանիզմներ), որ այն կվերածվի քաղաքականության: Հետևապես իմաստ չունի ներդրումային հայեցակարգում առկա խութերի (gap) մանրամասն վերլուծությունը: Առավել կարևոր է վեր հանել այն պատճառները, որոնք անգործունակ են դարձնում հայեցակարգը: Այդ առումով քննության առարկա կարող են դառնալ ներդրումային քաղաքականության ընդհանուր փիլիսոփայությունը, դրա իրագործման իրական հիմքերն ու հնարավորությունները: Դա կարող է օգտակար լինել նաև քայքայիչ կապիտալի թափանցման և ծավալման պատճառները նույնականացնելու տեսանկյունից:

Առհասարակ, տարբեր հայեցակարգերին հայաստանյան իշխանությունների մոտեցումը նմանվում է այն ավանդական ընկալմանը, որ եթե երեխայի անունը Երջանիկ կամ Արևշատ դնեն, ապա երեխան երջանիկ ու բախտավոր կմեծանա: Տպավորություն է ստեղծվում, թե քաղաքականություն մշակողների համար ամենակարևորը հռչակագրային ակտերն են. Սահմանադրության մեջ՝ ժողովրդավարության մասին նշելը կամ Ներդրումային հայեցակարգում՝ բաց դռների քաղաքականության մասին նշելը: Իսկ թե ինչպիսի քայլեր են անհրաժեշտ, որպեսզի Երջանիկը երջանիկ մեծանա և ինչպիսի իրական հիմքեր կան դրա համար, հաճախ երկրորդական նշանակություն է վերագրվում: Կարևորությունը տրվում է հայեցակարգի հրաշագործ հատկությանը: Ի դեպ, միջազգային փորձագետները նույնպես գլխավորապես ուշադրության առնում և գնահատում են տարբեր հայեցակարգերն ու օրենքները: Թե դրանց իրականացման համար ինչպիսի՞ իրական հիմքեր ու հնարավորություններ կան, սովորաբար լուրջ քննության չեն արժանանում: Լավագույն դեպքում ուսումնասիրվում ու գնահատվում են հայեցակարգն ու հայեցակարգային օրենքները սպասարկող ուրիշ օրենքներն ու իրավական փաստաթղթերը[65]:

Ներդրումային քաղաքականության նպատակների հռչակմանը գերկարևորություն տալու չհիմնավորված լինելը բացահայտվում է ոչ միայն ներդրումային քաղաքականության իրականացմանը կոչված օրենսդրական փաստաթղթերում առկա բազմաթիվ անորոշություններում և ենթաօրենսդրական ակտերի բացակայության փաստերում: Բաց դռների և ազատ գոտիների ներդրումային փիլիսոփայությունը իրականացման փուլում բախվում է քաղաքական, դատական, կրթական և այլ ինստիտուտների չկայացածությանը, աշխարհաքաղաքական անբարենպաստ ազդեցություններին, էթնիկ հիմքի վրա նախահակումներին, ներդրումներն օժանդակող ռեսուրսների ու ենթակառուցվածքների բացակայության կամ սակավության խնդիրներին[66]: Թվարկված խնդիրների մասին բարձրաձայնում են հարցվողները[67], դրանց գոյությունը խոստովանում են նաև միջազգային

[64] UNCTAD "Investment Policy Review- Armenia",United Nations, 2019, pp. 9-21, Source: https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf
[65] UNCTAD "Investment Policy Review- Armenia", United Nations, 2019, pp. 21-44, Source: https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf
[66] Հիշատակված խնդիրները քննության են առնվում սույն բաժնի 5-10-րդ ենթաբաժիններում
[67] Տե՛ս, սույն բաժնի 1-10-րդ ենթաբաժիններում հոված մեջբերումները

փորձագետները[68]: Եվ, չնայած այդ հանգամանքին՝ անհասկանալի պատճառներով դրանց դերակատարությունը պատշաճ կերպով չի գնահատվում և չի հաշվառվում:

Անշուշտ, հիշատակված խնդիրների մի զգալի մասը պայմանավորված է ՀՀ՝ տակավին երիտասարդ կամ ինչպես ընդունված է ասել՝ անցումային պետություն լինելու հանգամանքով, որին, ինչպես երիտասարդ այլ պետություններին, բնորոշ է իր կայացման ճանապարհին համաշխարհային լավագույն փորձառությունների նախ ձևական կողմի յուրացումը: Բայց սա նույնպես խնդիր է, որը հաշվի չի առնվում իրատեսական հայեցակարգեր մշակելիս.

Մենք կարող ենք ունենալ 1000 հայեցակարգեր, ռազմավարություններ, բայց այդ բոլորի 90 տոկոսին պակասում է մեկ կարևոր բան՝ չափելիություն:

Լրագրող-փորձագետ

Չի կարող լինել ուղղակի օտարերկրյա ներդրումների հայեցակարգ, եթե մենք ի սկզբանե չենք ընկալում, թե մենք ինչ ենք ուզում: …Երկրներ կան, որոնք օտարերկրյա ներդրումներով իրականացնում են, օրինակ, աշխատատեղերի ստեղծում. վատ պրոյեկտ չի, բայց Հայաստանի համար, իմ կարծիքով՝ անհուսալի և աննպատակ: Կան երկրներ, որոնք փորձում են օտարերկրյա ուղղակի ներդրումներով ապահովել տեխնոլոգիաների տրանսֆեր և բերել համապատասխան մոդեռնիզացիա իրանց երկրում: Կան երկրներ, որոնք օտարերկրյա ներդրումների իմաստով փորձում են տվյալ երկիրը ինտեգրել համապատասխան գլոբալ value chain-ի [արժեշղթայի] մեջ՝ որպես ինչ-որ բաղկացուցիչ մաս: Կան երկրներ, որոնք փորձում են օտարերկրյա ներդրումների միջոցով ապահովել որոշակի շուկաների հասանելիություն և շուկաների մեծացում: Էս բոլոր խնդիրները գալիս են նրանից, որ էդ երկրները սկզբից հասկանում են, թե ինչ են իրենք ուզում, հետո նոր դրա տակ կառուցում են հայեցակարգային փաստաթուղթ…

Վերլուծաբան-փորձագետ

.Ինձ թվում ա, մեր մոտ էդ ռազմավարություններ, հայեցակարգեր մշակելը ավելի լավ ա ստացվում, քան հետո ինչ-որ կիրառման հետ կապված վերահսկողություն դնելը:

Պետական կառույցի ներկայացուցիչ

2.2 Ներդրումները կարգավորող օրենսդրությունը և որոշումները

Ներդրումային քաղաքականությանը նվիրված միջազգային զեկույցում ոլորտին վերաբերող օրենսդրական կարգավորումներում բազմաթիվ բացեր և անճշտություններ են ներկայացվում[69]: Այս ենթաբաժնում քննության են առնվում հիմնականում այն կարգավորումները, որոնք խնդրականացվում են հարցվողների կողմից և որոնք կարող են նպաստավոր լինել քայքայիչ կապիտալի թափանցման համար:

Ներդրումային դաշտը կարգավորող օրենքների ամենամեծ թերությունը, որ նշում են հարցվողները, կապված է դրանց բարդության, ոչ միանշանակության հետ: Ընդ որում, սա

[68] Տե՛ս՝ UNCTAD "Investment Policy Review- Armenia: Տարբեր տեղերում գրված է, որ Հայաստանը անցումային երկիր է, որ աշխարհաքաղաքական ազդեցությունների է ենթակա, որ փակ սահմաններ ունի, որ բեռնափոխադրումների նվազ հնարավորություններ ունի և այլն:
[69] Տե՛ս՝ նույն տեղում

վերաբերվում է դաշտը կարգավորող գրեթե բոլոր օրենքներին, որոնք հարցվողների կարծիքով՝ վաղուց հնացած են.

Օրենսդրության մասով ես կարծում եմ, որ պետք ա գնանք Վրաստանի ճանապարհով, որը պարզեցված հարկային, մաքսային կամ մնացած այլ օրենսդրական համակարգ ունենալն ա, որովհետև տենց չեն խճճվում բիզնեսմենները:

Պետական կառույցի ներկայացուցիչ-փորձագետ

Որոշ դեպքերում հստակ չի ձևակերպվում, թե ո՞ր կառույցներն են պատասխանատու օրենքի կիրառման համար: Հարցվողների մեծ մասը հատկապես թիրախավորում է Գնումների մասին ՀՀ օրենքը.

Հայաստանում երևի ամենատարածված case-ը գնումների ոլորտում պետական պաշտոնատար անձանց ազդեցությունն ա: Ու քանի որ էս պահին օրենսդրական թերություններ ունենք հենց շահերի բախման կառավարման հետ կապված, էդ ազդեցությունը հնարավոր չի լինում գնահատել, ինչ-որ իրավական գործընթաց ապահովել:

Պետական կառույցի ներկայացուցիչ

Գնումների մասին օրենքը, իրականում, բավականին համապարփակ, լավ գրված ա, ու նույնիսկ միջազգային գեկույցներով գործընկերները էլի լավ են գնահատում օրենքը, բայց էլի կիրառման ու արդեն էդ վերահսկողության մասին բացթողումն ա: Ինֆորմացիան ամբողջությամբ (համարյա պայմանագրերի կնքումից, կիրառումից) հասանելի ա Ֆինանսների նախարարության համապատասխան կայքերով, Armeps, Gnumner.am և այլն, որտեղով նաև մամուլն ա կարողանում գտնել, ծանոթանալ: Այսինքն՝ հետաքննական լրագրությունն ա էդ ռեսուրսներից օգտվում, նաև հանձնաժողովը [Կոռուպցիայի կանխարգելման]: Բայց պայմանագիրը կնքելուց հետո վերահսկողությունը արդեն ավելի թույլ ա: Այսինքն՝ մինչև պայմանագիրը կնքելը կարա ամեն ինչ լավ լինի, պայմանագիրը կնքելուց հետո ինչ-որ էական բաներ փոխվեն կամ ուրիշ ձև գնա էդ պայմանագրի կատարումը, բայց էդ արդեն չի ֆիքսվում: Էլի [վերահկող] պատասխանատու մարմինը չկա, ու էլի էդ ամեն ինչը բաց ա մնում:

Պետական կառույցի ներկայացուցիչ

Ուշագրավ է, որ Գնումների մասին օրենքի մասով չարաշահումների մեջ կասկածվում են ՀՀ տնտեսության մեջ մենաշնորհային դիրք ունեցող ընկերությունները.

…Ցանկացած ընկերություն, որը կա՛մ ռեգիոնի մակարդակով, կա՛մ երկրի մակարդակով, կա՛մ ոլորտի մակարդակով, ցանկացած ոլորտում ունի որոշակի մենաշնորհային դիրքեր, օրինակ, ինքը ինչ-որ քաղաքում ա, ինքը էնքան մեծ ա, ինքը մենաշնորհային դիրք ունի, կամ ինքը ինչ-որ ռեգիոնում ա, Սյունիքում ա, ՀայՌուսգազարդը և այլն, չգիտեմ, ինքը ստիպված ա, պետք ա որոշակի խաղի կանոններ պահպանի իրա գնումային քաղաքականության մեջ: Որովհետև իրա գնումների միջոցով ինքը խաթարում ա մրցակցությունը: …Կապանում գոյություն կունենան միայն այն բենզալցակայանները, որոնց գոյությունը ընդունելի կլինի Զանգեզուրի պղնձամոլիբդենային համար: Ասում ենք ի՞նչ կապ, հետևյալն ա. ումի՞ց գնի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը բենզինը, էդ մարդը մրցակցային լրջագույն առավելություն ա ստանալու բոլորի նկատմամբ…

Վերլուծաբան-փորձագետ

Այսպիսով, օրենսդրական կարգավորումներում առկա թերությունները ոչ միայն նվազեցնում են ներդրումային դաշտի գրավչությունը, այլև սողանցքներ և նպաստավոր հիմքեր են ստեղծում քայքայիչ կապիտալի թափանցման համար:

2.3 Ներդրումային քաղաքականությանն առնչվող ինստիտուտները

Դաշտային հետազոտությունների ընթացքում բացահայտվեցին քայքայիչ կապիտալի թափանցման և ծավալման հետ կապված մի շարք ռիսկեր ու պրակտիկաներ, որոնք առնչվում են ներդրումային քաղաքականություն մշակող, իրականացնող և վերահսկող կառույցներին, դրանց գործունեության թափանցիկությանը, կադրային խնդիրներին, գործառույթների հստակությանը և գործունեության արդյունավետությանը:

Գործառույթների առումով քաղաքականություն մշակող և իրականացնող հիմնական պետական կառույց է համարվում Էկոնոմիկայի նախարարությունը: Ներդրողներին և ներդրումները խթանելու և աջակցելու նպատակով ստեղծվել է Ներդրումների աջակցման կենտրոնը (Էնթրփրայզ Արմենիա հիմնադրամը)[70], որի հոգաբարձուների նախագահը ՀՀ վարչապետն է: Նշված կառույցներն ունեն գործունեության քիչ թե շատ միջազգային ստանդարտներին համապատասխանող կանոնակարգեր, ինչը չի կարելի ասել ներդրումային քաղաքականությունը վերահսկող կառույցների մասին: Ուստի ստորև առավել մանրամասն կներկայացվի դրանց առաքելություններն ու լիազորությունները:

<u>Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՏՄՊՊՀ)</u>
Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն անկախության բարձր կարգավիճակ ունեցող ինքնավար մարմին է, և համաձայն հանձնաժողովի կանոնադրության՝ ինքնավար են նաև հանձնաժողովի անդամների պաշտոնները: Անկախ և ինքնավար են նույն գործառույթներն իրականացնող կառույցները նաև Ավստրիայում, Բելգիայում, Չեխիայում և Եվրամիության այլ երկրներում: Շատ դեպքերում կառույցի ղեկավարը նշանակվում է երկրի նախագահի կողմից՝ կառավարության կամ խորհրդարանի առաջարկությամբ: Սակայն, հանդիպում են նաև տարբերվող դեպքեր, որոնց շարքից են.

- Էստոնիան, որտեղ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի իշխանությունները Արդարադատության նախարարության մաս են,
- Գերմանիան, որի Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի իշխանություններն անկախ են, սակայն գործում են Federal Ministry for Economic Affairs and Climate Action դաշնային նախարարությանը կից,
- Իսպանիան. երկրի Ազգային շուկաների և մրցակցության հանձնաժողովն անկախ է կառավարությունից, բայց հաշվետու է խորհրդարանին:

ՀՀ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում ամրագրված է, որ «հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Սահմանադրությանը, սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան և իր գործառույթներն ու լիազորություններն

[70] Ինչպես նկատեց էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչներից մեկը՝ *"Ներդրումային քաղաքականությունը մշակում են նախարարության պատերի ներսում, իսկ Enterprise Armenia-ի նման կառույցները, իրենք ավելի շատ էդ քաղաքականությունը իրականացնող մարմիններն են: Այսինքն՝ ուղեղային կենտրոնը էստեղ է: Իսկ իրենք մեր ձեռքերն ու աչքերն են: Ներդրումային քաղաքականությունը մշակվում է մեզ մոտ, բայց ներդրումներով և խրախուսմամբ զբաղվում ա Enterprise Armenia-ն"*:

իրականացնելիս ինքնուրույն է»: Հանձնաժողովի նախագահի թեկնածությունն առաջադրելու իրավունքը պատկանում է Կառավարությանը, անդամների թափուր պաշտոնին թեկնածություն կարող են առաջադրել Կառավարությունը և Ազգային Ժողովի իշխող և ընդդիմադիր խմբակցությունները: Հանձնաժողովի անդամն անկախ է և իր ընտանիքի անդամների հետ հանդերձ գտնվում է հատուկ պաշտպանության ներքո:
Այսպիսով, հանձնաժողովն օրենսդրական տեսանկյունից շատ ավելի անկախ է, քան նման կառույցները մի շարք եվրոպական երկրներում, և դրա աշխատանքը վերահսկողության ենթակա չէ: Որպես ապացույց՝ կարելի է նշել, որ հանձնաժողովի գործունեության մասին նախորդ տարվա հաշվետվությունը հաստատվում է հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովն՝ ինքը մասնակցում է պետական քաղաքականության շրջանակներում մրցակցության ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակմանը: Թափանցիկության առումով հարկ է նշել, որ հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները, ինչպես նաև գործունեության վերաբերյալ տեղեկությունները՝ ներառյալ տարեկան հաշվետվությունը, հրապարակվում են. դրանք հասանելի են հանձնաժողովի պաշտոնական կայքում, զանգվածային լրատվամիջոցների հարթակներում և այլուր:
Սույն հետազոտության նպատակներից ելնելով՝ հարկ է անդրադառնալ հանձնաժողովի դերին՝ պետության օժանդակության վերահսկման հարցում: Քանի որ պետական օժանդակությունը սահմանափակում է մրցակցային պայմանները շուկայական տնտեսությունում, հանձնաժողովն իրականացնում է տվյալ գործընթացի վերահսկողություն՝ օրենքով նախատեսված կարգով: Հանձնաժողովը գնահատում է օժանդակության թույլատրելիությունը և այն ստանալու համար թույլատվություն է տալիս՝ համապատասխան դիմումի հիման վրա: Արգելված օժանդակություն ստանալու դեպքում այն ենթակա է վերադարձման և/կամ դադարեցման: Բացի այդ, հանձնաժողովն իրականացնում է պետական գնումների վերաբերյալ հսկողություն՝ “Մենք ունենք նաև պետական գնումների վերահսկողություն: …Գնումներում եթե կան մրցակցային խնդիրներ դիտարկում ենք:”

<u>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)</u>

Ինչպես Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը՝ ՀԾԿՀ-ն նույնպես ինքնուրույն պետական մարմին է, որը գործում է ՀՀ Սահմանադրության «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա: Նախագահի և անդամների պաշտոններն ինքնավար են և անկախ: ՀԾԿՀ թեկնածուները նշանակվում են Ազգային ժողովի կողմից, սակայն, նախագահի թեկնածությունն առաջարկվում է միայն Կառավարության կողմից, իսկ անդամներինը՝ Կառավարության, այնուհետև՝ Ազգային Ժողովի իշխող և ընդդիմադիր խմբակցությունների կողմից: Հարկ է նշել մի առանձնահատկություն. Հանձնաժողովի աշխատողների թիվը պետք է համաձայնեցված լինի վարչապետի հետ:
Հանձնաժողովի գործառույթները ներառում են շուկայի «խաղի կանոնների» սահմանում, առանձին ճյուղերում ծառայությունների մատուցման կանոնների և որակի չափանիշների սահմանում, լիցենզավորման գործընթացների կարգավորում և վերահսկում, սակագների սահմանում, սպասարկման որակի կարգավորում և վերահսկում, ինչպես նաև իր գործունեության ոլորտում ներկայացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրություն: ՀԾԿՀ-ի գործունեությունը կարգավորվում է նաև հետևյալ օրենքներով և իրավական փաստաթղթերով.

- «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք,
- Ջրային օրենսգիրք,
- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք,

- «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենք,
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք,
- «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք,
- «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենք,
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք:

Բացի այդ, հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է նաև ԵԱՏՄ իրավական փաստաթղթերին համապատասխան, քանի որ ԵԱՏՄ ստեղծման մասին պայմանագրով նախատեսված է բնական մենաշնորհ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորելու միասնական կանոններ ու սկզբունքներ ստեղծելը: Պայմանագրի կետերից մեկը նախատեսում է կարգավորման այնպիսի մեխանիզմների կիրառում, որոնք թույլ կտան ապահովել որոշումների ընդունման անկախություն, թափանցիկություն և անաչառություն:
Հաշվի առնելով, որ ՀԾԿՀ-ն կարգավորում է բնական մենաշնորհների գործունեությունը՝ այս ոլորտում գործող իրավաբանական անձանց գործառույթների վերաբերյալ որոշումները կայացվում են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հետ համատեղ՝ համագործակցության սկզբունքով: Լինելով անկախ մարմին՝ հանձնաժողովն իր գործունեությանն առնչվող հարցերի շրջանակում մասնակցում է պետական քաղաքականության փաստաթղթերի մշակմանը: Հանձնաժողովի գործունեության արդյունքները հրապարակվում են ՀԾԿՀ կայքում՝ տարեկան հաշվետվությունների տեսքով, իսկ յուրաքանչյուր տարվա ծրագիրը ներկայացվում է նաև Ազգային ժողովին: Նշված տեղեկության և այլ տեղեկատվական նյութերի հետ մեկտեղ՝ հասանելիությունն ապահովվում է ՀԾԿՀ պաշտոնական կայքի և զանգվածային լրատվամիջոցների հարթակների միջոցով: Կարգավորման գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար գործում է նաև հանձնաժողովի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման կարգ»:
Համեմատելով երկու վերոնշյալ հանձնաժողովների գործունեության իրավական հիմքերը՝ հարկ է նշել նաև հետևյալը. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կայքում հասանելի են Հանձնաժողովի կարիքների համար իրականացված գնումների վերաբերյալ տարեկան տեղեկանքները: ՀԾԿՀ կայքում ներկայացված են այն հղումները, որտեղից հնարավոր է ստանալ տեղեկություն հանձնաժողովի կողմից կատարվող գնումների ընթացակարգի վերաբերյալ[71]:

<u>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով</u>

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հիմնական գործառույթներն են «բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց, բացառությամբ՝ պատգամավորների, դատավորների և դատախազների, էթիկայի կանոնների, իրավիճակային շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը» և հայտարարագրման գործընթացը կարգավորելը: Բացի այդ, սույն թվականին ստեղծվել է Հակակոռուպցիոն կոմիտե, որի հիմնական դերակատարումը պետք է լինի կոռուպցիոն դեպքերի բացահայտումը և հետաքննումը: Դրա հետ մեկտեղ 2004 թ-ից գործում է նաև Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, որը գլխավորում է վարչապետը, իսկ անհատական կազմն ընդգրկում է կառավարության ներկայացուցիչներին և այլ

[71] ՀԾԿՀ կայքում ներկայացված հղումները՝ կատարվող գնումների ընթացակարգի վերաբերյալ՝ procurement.am, armeps.am, armeps.am/ppcm:

պետական պաշտոնյաներին: Հարկ է նշել, որ կազմավորման փուլում են գտնվում հակակոռուպցիոն դատարանները: Ներկայումս նշանակվել է 6 դատավոր, և գործում է առաջին հակակոռուպցիոն դատարանը, որն արդեն դիտարկում է կոռուպցիոն հանցագործությունների դեպքերը:
Հանձնաժողովը կոլեգիալ ինքնավար մարմին է, որի նախագահն ընտրվում է անդամների կողմից՝ ձայների մեծամասնությամբ: Ի տարբերություն վերոնշյալ հանձնաժողովների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոնները համարվում են քաղաքացիական: Այլ է նաև անդամների ընտրության գործընթացը. անդամների ընտրության համար Ազգային ժողովի կողմից ձևավորվում է հատուկ մրցութային խորհուրդ: Հանձնաժողովի անդամներն անկախ են և գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով: Հանձնաժողովի գործունեությունը թափանցիկ է, դրա վերաբերյալ հաշվետվություններն ու ծրագրերը ենթակա են պաշտոնական կայքում բաց հրապարակման:
Ընդհանուր առմամբ, կոռուպցիայի դեմ պայքարի հիմքը 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունն է: Գալիք տարիների ռազմավարության մշակումը հիմնվելու է այս ռազմավարության իրականացման հաջողությունները և ձախողումները հաշվի առնելով (ինչպես որ եղել է ներկա ռազմավարության դեպքում): Սույն փաստաթղթում նշվում է, որ «հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի թերություններից մեկը դրա ընթացիկ մոնիթորինգի կառուցակարգի բացակայությունն է»[72], ինչպես նաև իրականացված միջոցառումների արդյունավետության վերլուծության բացակայությունը, ինչը ռազմավարության իրականացումը դարձնում է ձևական: Նախորդ միջոցառումների իրականացման խնդիրներից էր նաև ռազմավարությունն իրականացնող կառույցների հստակ ձևավորված շրջանակի բացակայությունը, ինչը լուծում է գտել ներկայումս:

Ներդրումներին առնչվող տնտեսական կառույցների մասին խոսելիս հարցվողներն, ըստ էության, ընդունում են, որ տեղեկատվությունը հասանելի է, կառույցների կայքերում տեղադրվում են հաշվետվություններ և նախագծեր, սակայն բովանդակային առումով դրանք սովորաբար միանշանակ և ամբողջական չեն, իսկ երբեմն նաև մեթոդաբանորեն հնացած են: Այդ ամենում հարցվողները թափանցիկության բաց են տեսնում: Փորձը ցույց է տալիս, որ նման իրողությունները հաճախ նպաստում են այդ կառույցների հեղինակության նվազմանը, ինչը հանգեցնում է ներդրողների՝ այսպես ասած, ոչ կանոնադրական հարաբերությունների օգնությամբ իրենց խնդիրները լուծելուն.

Կարծում եմ՝ այդքան թափանցիկ չի… Օրինակ, ես ներդրող եմ, ուզում եմ տուրիզմի ոլորտում ներդրում կատարել, որտեղի՞ց պետք է տեղեկատվություն ստանամ՝ ինչ է կատարվում այդ ոլորտում, հատկապես որ ճյուղերում արժե ներդրում կատարել Հայաստանում… Վիճակագրություն Կոմիտեն տալիս է, բայց այդ վիճակագրությունը խորքային ու համակողմանի չի, վերլուծած չի: Եկանք Էկոնոմիկայի Նախարարությանը. այդ կառույցը պետք է ունենա սպասարկող կառույցներ, այդ կառույցը պետք է ունենա նման վերլուծություններ, որ ես վերցնեմ ու տեսնեմ, թե որ ոլորտներում կարելի է ներդրումներ կատարել, կամ գերակա ուղղություններ որոնք են հայտարարված՝ գինեգործություն, զբոսաշրջություն, IT ոլորտ:

Լրագրող-փորձագետ

[72] ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը եվ դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2019 թվականի N 1332-Ն որոշում: Աղբյուր՝ https://www.irtek.am/views/act.aspx?tid=168292#

Երկրորդը՝ ֆորմալ մեխանիզմները կան, բայց էտ ֆորմալ մեխանիզմների վերաբերյալ ձևակերպված բան չկա: Ենթադրենք, մենք դրեցինք e-draft-ում, ստացանք 30,000 հատ կարծիք, ընդ որում, էդ 30,000 հատ կարծիքից 20,000-ը շատ դեպքերում նույն աղբյուրից, տարբեր մեյլերով եկել ա, ենթադրենք: Հետո դա ո՞նց ենք անում, ի՞նչ ենք անում. այ էդ կտորը թույլ ա, ... հաշվետվողականությունը: ...Ամփոփաթերթում նշվում ա՝ էսքան բան ա եկել, էս ինչը ընդունել ենք, էս ինչը չէ: Բայց ամփոփիչ նարատիվ՝ ինչի համար ենք գլոբալ առումով 10 հիմնական թեմաներից, որոնք բարձրացվել են, 8-ը ընդունվել է, 2-ը չի ընդունվել, ինչ տրամաբանությամբ ա եղել, դա բացակայում ա:

Վերլուծաբան-փորձագետ

Հարցվողներից ոմանք թափանցիկության խնդիրը տեսնում են հաղորդակցման մեխանիզմների հնացածության մեջ: Նրանցից մեկը նկատում է, որ.

"Ունենք համակարգեր, որտեղ զանգով չեն պատասխանում, պետք ա գրություն գրես, 15 օր սպասես, մի հատ էլ զանգես, որ մի հատ քեզ պատասխանեն: Աշխարհը գնում ա նոր բառ կա agile են ասում, էտ agile-ին ա գնում, մենք դեռ փաստաթղթերով ենք… Եթե մենք ուզում ենք ներդրող ներգրավել մեր էս փոքրիկ երկրում, մենք մեր մեջ, մեր ներսում պետք է մեր աշխատանքը կատարենք, հասկանաք, որ արդյոք մեզ մեր հարկային համակարգը թույլ ա տալիս ճկուն լինել:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Ներդրումային քաղաքականությանը առնչվող մյուս խնդիրների խումբը, որ հնչեցնում են հարցվողները, վերաբերում է տարբեր կառույցների գործառույթների միջև գոյություն ունեցող հակասություններին կամ ինչպես նրանցից մեկն է նշում էկոնոմիկայի նախարարության օրինակով՝ *"նախարարության աշխատանքները սինխրոնիզացիայի չեն ենթարկվում մյուս կառուցների հետ"*[73]: Ներդրողներին հաճախ հասկանալի չէ, թե որ կառույցը ինչի համար է պատասխանատու: Բյուրոկրատական քաշքշուկները, որոնք հաճախ վկայակոչվում են հարցվողների կողմից, հիմնականում այդ գործոնների հետևանք են.

...Վիճակագրության կոմիտեն ասում է՝ տեսե՛ք, ես սա եմ համարում օտարերկրյա ներդրում, էկոնոմիկայի նախարարությունը ասում է՝ չէ՛, ճիշտը սա է, Կենտրոնական բանկը ասում է՝ չէ՛, բայց սա էլ պետք է հաշվի առնեք: Հիմա, ստացվում է մեր գործադիր իշխանությունը, ֆինանսական այդ իշխանությունը՝ Կենտրոնական բանկը, վիճակագրական ծառայությունը ամեն մեկը մի տարբերվող կարծիք ունեն, թե որն է:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

Հիմնական խնդիրը մեր համակարգում ...հստակ, հասկանալի և տարակարծություններ թույլ չտվող տեղեկատվության հասանելիությունն է, որովհետև մի գերատեսչություն գնում ես, մի բան են ասում նույն թեմայով, մեկ այլ գերատեսչություն կարող է գնաս, մեկ այլ բան ասեն...

Լրագրող-փորձագետ

Որոշ հարցվողների կարծիքով՝ ներդրումային քաղաքականությանն առնչվող կառույցների կողմից իրենց գործառույթները լիարժեք կատարելուն խոչընդոտում է այդ կառույցների ոչ բավարար հեղինակությունը.

[73] Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից:

...[Էկոնոմիկայի նախարարության] ֆունկցիան է ներդրումային քաղաքականությունը, բայց էդ ֆունկցիան ավելի շատ խորհրդատվական է: Այսինքն՝ իրանք կարան աշխատեն ինչ-որ մարդու հետ, հետո վերջում ոչ մի բան չստացվի, որովհետև կարա վերև բարձրանա ու էնտեղ լռվի: ...Խոսքը պլանավորման մասին ա: Սովորաբար տակը պետք ա ֆինանսական ռեսուրս լինի, ու էդ ֆինանսական ռեսուրսը տնօրինի էդ նախարարությունը: ...Այսինքն՝ որոշում ընդունելու ավտորիզացիան պետք ա բաժանված լինի՝ կախված ներդրման չափից. ...50-100 միլիոն դոլար էդ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվության տակ ա, ավել՝ պետք ա բարձրանա կառավարություն, ենթադրենք, վարչապետը որոշի: Այսինքն՝ էտ մարդը, որը որ ղեկավարում ա Էկոնոմիկայի նախարարությունը, պետք ա լծակ ունենա, լծակ՝ փողի և ավտորիզացիայի տեսքով: ՈԵթե դա չկա, ուրեմն, իրանց աշխատանքը ջուրն ա ընկնում: ...Ինչ-որ մեկը վերևներում տոռմուզ ա տալիս, իրա մարդուն կամ իրա դուրը չի գախս, դրա համար էլ էդ մեխանիզմը չի աշխատում: Խոսքը եթե ավելի լայն ձևով տանք՝ նախարարությունների ինքնուրույնության մասին ա:

Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից

Մեկ այլ հարցվողի կարծիքով՝ ինստիտուցիոնալ գործառույթների լիարժեք իրականացման համար հաճախ պակասում է պատասխանատուների կամքն ու վերջնաարդյունքի հանդեպ հետաքրքրվածությունը.

...Խնդիրը կայանում ա նրանում, որ մարդկային գործոնով ա պայմանավորված, այլ ոչ թե ինչ-որ կառուցակարգեր կան: Այսինքն՝ եթե ղեկավարը կամ, չգիտեմ, ստորաբաժանման ղեկավարն ա, փոխնախարարն ա, նախարարն ա այն համագործակցության կարիքը ունեն, իրենք կարողանում են շատ օպերատիվորեն էդ մեխանիզմները ձևավորել. աշխատանքային խմբեր ձևավորել, քննարկումներ կազմակերպել: Բայց գալիս ա պահ, երբ այ էն խնդիրը իրենց օրակարգում դառնում ա ոչ առաջնային՝ չնայած որ եթե մենք դիտարկում ենք մեր Կառավարության ծրագրերը, տարբեր տեսակ պարտավորությունները միջազգային, որ Կառավարությունը ստանձնել ա, պետք ա կորպորատիվ կառավարում, ներդրումային միջավայր՝ իրենք առաջին հորիզոնականները զբաղեցնեին: ...Բայց խնդիրը ինչո՞ւմ ա կայանում. մենք միտված չենք վերջնարդյունքի: Իհարկե՛, ես հասկանում եմ, որ կորպորատիվ կառավարման բարելավումները կամ ներդրումային դաշտի բարելավումները սկիզբ ունեն, բայց վերջ չունեն, բայց մենք կարող էինք, օրինակ, միջանկյալ թիրախներ սահմանել, այդ միջանկյալ թիրախներին հասնելու պրոցեսները վերլուծել, տեսնել՝ որտեղ ենք սխալվել, ճշգրտումներ անել...

Վերլուծաբան-փորձագետ

Վերոհիշյալ կառույցների կողմից իրենց գործառույթները ոչ լիարժեք կատարելու պատճառներից մեկը հարցվողները տեսնում են արհեստավարժ կադրերի սակավության մեջ.

Նայեք, աշխարհում ամենամեծ բիզնես կառույցը, ամենամեծ բիզնես ցանցը, դրանք պալատներն են: Կան բազմաթիվ պետական կառույցներ, չգիտեմ, մասնավոր, հասարակական, ասոցիացիաներ, շատ-շատ կան, բայց բիզնեսի մասով, եթե մենք ուզում ենք, ըստ էության, լուրջ մոտեցում ցույց տալ, ...կարծում եմ՝ առաջին հերթին պետք է պալատներ գնալ: Բայց պալատների հետ աշխատելու համար բավականաչափ թիմ է պետք...

Պետական կառույցի ներկայացուցիչ

...Հանձնաժողովները պիտի վերահսկեն, որ դու իրավունք չունես գնում կատարես, որովհետև դու հանրային տենդեր չես արել: Հանրային տենդերի ժամանակ դու պետք ա անկախ գնահատողներ ունենաս, որ տենդերի արդյունքները գնահատեն, որովհետև դու եթե դա չես անում, դու փաստորեն հանրային տրված մանդատի շրջանակներում բերում ես ամբողջ համակարգի քայքայմանը, տնտեսական միջավայրի քայքայմանը,

Վերլուծաբան-փորձագետ

Բարձրաձայնվող խնդիրների մի մեծ խումբ թիրախավորում է ՏՄՊՊՀ կառույցի գործունեությունը, մասնավորապես՝ վերջինիս անկախության մակարդակը և օբյեկտիվությունը.

...Հետևելով կառույցի [ՏՄՊՊՀ-ի] աշխատանքներին կողքից՝ ինձ մոտ ավելի շատ ինչ-որ վերլուծական, անալիտիկ կենտրոնի տպավորություն է թողնում: Որովհետև իրենք այդ տիպի ինչ-որ վերլուծական աշխատանքներ են անում ավելի շատ, բայց ռեալ քայլեր, որոնք որ մրցակցային ինչ-որ դաշտի են բերում, ինձ թվում է՝ իրենք չկան:

Պետական կառույցի ներկայացուցիչ-փորձագետ

...ՏՄՊՊՀ-ն տնտեսական արդար մրցակցություն պիտի ապահովի: Եթե իրենք էն, ինչ որ գրված ա, էս պահի դրությամբ իրականացնեն, արդեն հաջորդ հարցը կառաջանա՝ ինչպես բարելավել: ...Խնդիրը կարամ վերագրեմ, որ այդ անկախությունն ա, որ ինչ-ինչ առումներով իրենք կաշկանդված են որոշակի հավասար խաղի կանոններ սահմանել բոլոր տնտեսվարողների նկատմամբ: ...Հետո մի հատ ուրիշ բան էլ կա. ՏՄՊՊՀ-ն ոնց որ մահակ էլ լինի, տուժ ու տուգանքները ահավոր են ՏՄՊՊՀ-ի, ու դրանց ընտրանքային կիրառումը ևս այ էդ գործարար միջավայրի վրա բավականին բացասական ազդեցություն ա ունենում...

Վերլուծաբան-փորձագետ

2.4 Շուկայական և մրցակցային միջավայրերը

Տեղացի և նաև միջազգային փորձագետները հայաստանյան շուկայի նվազ գրավչությունը բացատրում են դրա փոքր լինելու, ի մասնավորի՝ բնակչության փոքրաթիվության և սպառողական ցածր կարողություններ ունենալու հանգամանքով: Ներդրողներն, ըստ նրանց, լավագույն դեպքում կարող են "ինչ-որ բաներ էստեղ արտադրել և արտահանել այլ երկրների շուկաներ": Սակայն, ներդրումային շուկայի գրավչությունը փոքրության պատճառով չէ միայն, որ նվաղ է: Կառուցողական ներդրողի համար պակաս կարևոր չեն շուկայում առկա հավասար մրցակցության հնարավորությունները:

Փորձագետներից մեկը նկատում է, որ "եթե որևիցէ երկրում, որևիցէ ոլորտում մոնոպոլիա կա, էդ սեկտորում մի սպասեք ներդրումներ"[74]: Հայաստանյան մի շարք շուկաներում առկա է կենտրոնացվածության բարձր աստիճան, ինչը փաստացի սահմանափակում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ներդրումները[75]: Անկախացումից հետո շատ ակտիվներ մնացին պետության ձեռքում, որոնք սեփականաշնորհման արդյունքում, հանգեցրեցին շուկայի կենտրոնացման:

[74] Գործարար միության ներկայացուցիչ:
[75] UNCTAD "Investment Policy Review- Armenia",United Nations, 2019, p. 10, Source: https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf

Այդպիսի ոլորտներ են անտառտնտեսությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, էլեկտրաէներգիա, վառելիքի և գազի բաշխման ոլորտները, երկաթուղային բեռնափոխադրումներ, որոնք ունեն տիպիկի մենաշնորհային շուկայական կառուցվածքներ[76]:

Հարցվողներից մեկի դիտարկմամբ՝ Հայաստանը կարող է դասվել թույլ շուկաների թվին, որին վերաբերող տեղեկատվությունը հանրային չէ և "որի տնտեսության մի ահագին մասը ստվերային է դեռ մնացել"[77]: Մեկ այլ հարցվողի կարծիքով՝ "հարյուրավոր հանքարդյունաբերող ընկերություններ կան, որոնց մեծ մասը հաշվետողականություն չունեն"[78]:

Մենաշնորհային դիրք ունեցող մի շարք ընկերությունների ոչ թափանցիկ և ոչ հաշվետվողական պահվածքը դրսևորվում է նաև իրենց կողմից վարվող գնային կամայական քաղաքականության մեջ: Ապրանքների և ծառայությունների համար նրանց կողմից սահմանված գները չեն հետևում միջազգային միտումներին: "Առանցքային պետական ծառայություններում՝ այնպիսին, ինչպիսին են էներգետիկան, ջրի մատակարարումը և հեռահաղորդակցությունը, գների սահմանման գործընթացը բավականին թափանցիկ չէ, որպեսզի արտահայտի հանրային շահերը"[79]: Նմանատիպ դրևսորումների պատճառները հարցվողները տեսնում են պետության կողմից այդ ընկերություններին օրենքով տրամադրած արտոնություններում: Բնական մենաշնորհների համար մշակված չեն թափանցիկություն ապահովող խաղի կանոններ, իսկ մասնավոր ներդրողի համար գործում է կոմերցիոն գաղտնիքի սկզբունքը[80].

…Էդ կոմերցիոն գաղտնիքի տակ հանրությունը իրականում ստանում է կոռոզիա՝ հարաբերությունների, որովհետև թե՛ բաշխիչ ցանցերը, թե՛ Հրազդան Կասկադը, թե՛… Ես կարամ էս շարքը շարունակեմ: Էդ բոլորը վառ օրինակներ են՝ ինչպես ա կոռոզիայի ենթարկվում մեր ինստիտուցիոնալ համակարգը:

Վերլուծաբան-փորձագետ

Դաշտային հետազոտությունների ընթացքում գրանցված մի շարք պրակտիկաներ հավաստում են, որ որոշ դեպքերում պետական կառույցները իրենք են մասնակից մրցակցությունը խաթարող գործընթացներին՝ օգտվելով օրենսդրության "ընձեռած" բացերից.

…Կա տենց դեպք, որ վարչապետի աշխատակազմը՝ հենց ինքը իրան համարում ա, որ ինվեստիցիայա բերել: Մի հատ ռեստորան կա… Ասենք, ըտեղ պետությունը փայ ա: …Նորմալ չի, որ վարչապետի աշխատակազմն ա դրանով զբաղվում… Ինչի՞ պիտի պառլամենտական երկրի վարչապետի աշխատակազմը զբաղվի: …Նորմալ չի, որ ըտեղ ներդրում ա արել… Ինչի պիտի ուրիշ դեպքերում, ասենք, ներդրողին գովազդի իշխանության ներկայացուցիչը…

Լրագրող-փորձագետ

---

[76] UNCTAD "Investment Policy Review- Armenia",United Nations, 2019, p. 10, Source: https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf

[77] Բանկային ոլորտի ներկայացուցիչ:

[78] Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ:

[79] BTI 2018 Country Report – Armenia, Bertelsmann Stiftung 2018. Source: https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/reports/country_report_2018_ARM.pdf

[80] «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 16 https://www.arlis.am/documentview.aspx?docID=90816 , Բնական մենաշնորհներ http://www.eurasiancommission.org/hy/act/energetikaiinfr/transport/Pages/estestv.aspx

...Hard Rock-ի ներդրումը կոնկրետ օրինակ ա կոռոզիվ ներդրումի, որովհետև ինքը քայքայում ա մրցակցային դաշտը: Ինքը բերել ա նրան, որ կողքը գոյանում ա, ասենք թե, "Պոլ" ռեստորանը (կամ գոյացել ա), կամ, ասենք, Sega Fredo գոյություն ունի կամ "Կոֆե Շոփը" գոյություն ունի և այլն: Եվ էդ մարդիկ իրավասու են հարցնել, ասել՝ մենք էլ ենք փող ներդրել, ինչի՞ Հայաստանի հանրային փողը գնում ա օգնելու Hard Rock կաֆեի ներդրողին, իսկ չի օգնում, օրինակ, "Պոլ" ռեստորանին, էլ չեմ ասում՝ "Ուստան" ռեստորանին, որը ընդհանրապես հայկական ռեստորանա: Խնդիրը ոչ միայն քաղաքականացված ներդրումներն են, այլ մեր պետության կողմից էդ ներդրումների կառավարման մոդելը պետք ա ենթադրի մեծ պատասխանատվություն: Երբ որ դու ուղղորդում ես ներդրումներ, դու պիտի շատ հստակ հասկանաս՝ հանուն ինչի, և էդ հանրությունը պետք ա շատ հստակ հասկանա՝ ես արել եմ Hard Rock-ը, որովհետև ունեցել եմ սենց-սենց նպատակներ:

Վերլուծաբան-փորձագետ

Մի շարք ոլորտներում շուկաների գերկենտրոնացվածության և մրցակցության հնարավորությունների սահմանափակման մեջ հարցվողները մեղադրում են նաև վերահսկող պետական հանձնաժողովներին, մասնավորապես՝ ՏՄՊՊՀ-ին: Չնայած վերջին տարիներին այդ կառույցի լիազորությունները ավելացվել են[81]՝ այդուհանդերձ, մի շարք պատճառներով վերագրված գործառույթները արդյունավետ չեն իրականացվում.

...Հանձնաժողովների խնդիրն ա, հանձնաժողովները պիտի դա կարգավորեն, հանձնաժողովները պիտի վերահսկեն, որ դու իրավունք չունես գնում կատարես, որովհետև դա դու հանրային տենդեր չես արել: Հանրային տենդերի ժամանակ դու պետք ա անկախ գնահատողներ ունենաս, որ տենդերի արդյունքները գնահատեն, որովհետև դու եթե դա չես անում, դու փաստորեն հանրային տրված մանդատի շրջանակներում բերում ես ամբողջ համակարգի քայքայմանը, տնտեսական միջավայրի քայքայմանը...

Վերլուծաբան-փորձագետ

Որոշ ոլորտներում (օրինակ, բանկային) պետական կառույցները հակված չեն նոր մրցակիցների հայտնվելը թույլ տալուն՝ նկատի ունենալով ներդրումային կապիտալի չափը: Այդ պատճառով բիզնես գրանցելու գործընթացը կարող է անհարկի ձգձգվել.

Եթե ես ճարեմ 60 հազար եվրո ներդրող, օրենքը ասում ա՝ ես կարամ բանկ բացեմ: Ես վստահ չեմ՝ ես եկա, 60 հազար բերեցի, էս պրոցեսը կլինի օրենքով գրած կարճ ժամկետներում: Էլի պիտի քննարկեն՝ պետք ա արդյոք լրացուցիչ բանկ, արդյոք էդ բանկը կարամ կառավարեմ, կարա մրցակցի: Որովհետև ընդեղ օրենքում նենց ա գրած, որ կարան իրանք դիտարկեն՝ համակարգային ռիսկեր կառաջացնի էդ բանկը: ...Ամեն դեպքում, էդ հարթ պրոցես չի, վստահ եմ: Օրենքը ասում ա՝ բերում ես էս-էս թղթերը նրկայացնում ես, տալիս եմ նախնական համաձայնություն, գնում ես աշխատում ես, հետո գնում ես նախնական օրենսդրությունում գրանցում՝ լիցենզիոն սենց փուլեր կան: Թվում ա, թե շատ արագ էդ փուլերում թղթերդ պատրաստ ա, բայց հանկարծ պետությունը չի ուզում լրացուցիչ նոր բան գա,

[81] Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնումը հանգեցրել է ավելի ակտիվ կիրարկման: Հանձնաժողովը հայտնում է, որ 2010-2017 թվականներին իրականացվել է 425 շուկայական ուսումնասիրություն և հարուցվել է 1253 գործ, որոնց մեծ մասը վերաբերել է միաձուլումներին (mergers) և անբարեխիղճ մրցակցությանը: Դատարաններում վիճարկվել են հարյուրավոր որոշումներ, որոնցից 83-ը մնացել է անփոփոխ:
UNCTAD "Investment Policy Review- Armenia",United Nations, 2019, p. 37, Source: https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf

որովհետև իրանք պարզ ասում են, որ չեն ուզում, որ շատ ա 18 հատ բանկը, պետք չի նոր բանկը: …Շատը ու քիչը պիտի պետությունը չորոշի: Մարդիկ հանցագործություն չեն անում, բիզնես են ստեղծում, ուզում են աշխատեն: Թող մրցակցություն լինի, երբ որ մրցակցություն լինի, կհասկանաս նոր խաղացողների մուտքը: Բայց կարող ա նոր խաղացողներ գան, հին խաղացողներ դուրս թռնեն, տենց շուկան ավելի առողջ կլինի:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Ըստ ՀՀ ներդրումային քաղաքականության մասին 2019 թ. հրապարակված զեկույցի՝ բաժնետերերը Հայաստանում ունեն ձայնի իրավունքի և տեղեկատվության հասանելիության որոշակի խնդիրներ, ինչը նույնպես կարելի է դիտարկել որպես շուկայական մրցակցության հնարավորությունները նվազեցնող հանգամանք[82]:

Ամփոփելով նշենք, որ համաձայն 2019 թ. Գլոբալ մրցունակության զեկույցի գնահատականների՝ ՀՀ ներքին շուկայում մրցակցությունը (Domestic competition) գնահատված է առավելագույնը՝ 100-ից 63 միավորով[83]: Ըստ այդմ՝ Հայաստանը զբաղեցնում է 24-րդ հորիզոնականը 141 երկրների ցանկում:

2.5 Դատական համակարգը

2017-2020 թթ. ժամանակահատվածում ՀՀ-ի դատական անկախության ինդեքսի արժեքը բարձրացել է՝ 0.36-ից հասնելով 0.49-ի[84]: Չնայած դատական անկախության աստիճանի բարձրացմանը՝ տարբեր հարցումները ցույց են տալիս, որ դատական համակարգը ՀՀ-ում շարունակում է մնալ ամենացածր վարկանիշ ունեցող ոլորտներից մեկը[85]: Այդ առումով, ամենևին պատահական չէ, որ հարցումների մասնակիցները օտարերկրյա ներդրումների հետ կապված հիմնախնդիրների մասին խոսելիս անդրադարձել են դատական համակարգի հետ կապված որոշակի պրակտիկաների: Հատկապես հաճախ հանդիպող դեպքերից են երկար ձգձգվող դատական գործերը, որոնք ներդրողների համար ֆինանսական և ժամանակի առումով թանկարժեք կորուստներ են պատճառում: Նման խնդիրներից խուսափելու համար ներդրողները ստիպված են կամ հրաժարվել իրենց գործունեությունը շարունակելուց կամ գործի դնել այլ միջոցներ, այդ թվում դատավորներին կաշառելը կամ տեղի իշխանությունների հետ անձնական կապեր հաստատելը, «փոխշահավետ» գործարքներ կնքելը[86]: Այսինքն՝ նրանք դիմում են քայքայիչ

---

[82] Օրենսդրության փոփոխություն՝ բաժնետերերի դիրքը բարելավելու իրենց ձայնի իրավունքի և տեղեկատվության հասանելիության հարցում: // UNCTAD "Investment Policy Review- Armenia",United Nations, 2019, p. 98, Source: https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf

[83] Klaus Schwab ՚Global Competitiveness Report՚ 2019, p.64. Source: https://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

[84] The World Bank. TCdata360. Judicial Independence. Armenia. Source: https://tcdata360.worldbank.org/indicators/h87720a86?country=ARM&indicator=41953&countries=SWE&viz=line_chart&years=1975,2020

[85] Ըստ կովկասյան բարոմետրի ՀՀ-ում դատական համակարգին լիովին վստահում է հարցվողների 3.7 տոկոսը, ավելի շուտ վստահում է 15 տոկոսը: Աղբյուր՝ https://www.crrc.am/wp-content/uploads/2022/06/%D4%B2%D5%A1%D6%80%D5%B8%D5%B4%D5%A5%D5%BF%D6%80_%D5%BA%D6%80%D5%A5%D5%A6%D5%A5%D5%B6%D5%BF%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1_2021_PDF_Final-Final.pdf

[86] Տե՛ս, օրինակ՝ Օֆշորներում թափառող հայկական հանքերը: Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/136311 Նորանշանակ վարչապետի հետ առնչություն ունեցող բիզնեսները և օֆշորային կազմակերպությունները: Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/70589

կապիտալին բնորոշ հատկանիշների կիրառմանը: Հարցվողների դիտարկմամբ՝ փորձառու ներդրողները նախքան ներդրում անելը ներդրումային երկրին վերաբերող տեղեկույթի մեջ անպայման ուշադրություն են դարձնում դատական համակարգի կայացածությանը, փորձում են կանխատեսել, թե իրավական բնույթի խնդիրների ծագման դեպքում որքան արագ է հնարավոր դրանց լուծումը: Եթե համակարգը կայացած չէ, ապա դժվար թե օրինապաշտ ներդրողը ցանկություն ունենա ներդրում անելու: Եթե ներդրման ոլորտով հետաքրքրված ուրիշ օրինապաշտ ներդրողներ նույն պատճառով հրաժարվեն տվյալ ոլորտում ներդրում անելուց, ապա ոլորտը, այսպես ասած, կմնա քայքայիչ կապիտալի հատկանիշներով ներդրում անելու պատրաստակամ ներդրողներին.

Կառավարման համակարգի արդյունավետության հետ կապված խնդիր կա, հատկապես դատաիրավական համակարգի: Ներդրողները բավականին լավ կարողանում են գնահատել, թե ներկայիս դատաիրավական համակարգի պարագայում, եթե ինքը որևէ խնդիր ունենա գործընկերոջ կամ պետության հետ, ինչքան կտևի էդ վեճի լուծումը: ...Ասենք՝ 1 տարի, 10 տարի, թե 20 տարի: Ներկայիս էս դատական համակարգի, իրավական համակարգի պայմաններում կամ, ընդհանրապես, պետական կառավարման արդյունավետության տեսակետից էս համակարգի պայմաններում՝ սա որևէ խթանիչ դեր չի կատարում, որպեսզի ներդրողը այդ ռիսկերից ապահովագրված լինի:

Վերլուծաբան-փորձագետների հետ ՃԽՔ մասնակից

Կարծում եմ՝ դատական համակարգի հանդեպ վստահության անբավարար մակարդակը կարա շատ լուրջ խոչընդոտ լինի էս առումով: Որովհետև մեր օրենսդրությամբ՝ բոլոր վեճերը ներդրումների ոլորտում կարգավորվում են ՀՀ դատական համակարգը կարգավորող օրենսդրությամբ, ու դա նշանակում ա, որ աշխատանք պետք ա տարվի նաև դատական համակարգի նկատմամբ՝ վստահությունը ավելացնելու համար...

Գործարար համայնքի ներկայացուցիչների հետ ՃԽՔ մասնակից

Քննվող հիմնախնդրի պատճառներից մեկը փորձագետները տեսնում են դատական միջանկյալ կառույցների և հատուկ տնտեսական գործերով մասնագիտացված կադրերի բացակայության մեջ.

...Դատական համակարգը պետք է լինի էֆեկտիվ ու արագ գործող: Այսինքն՝ մարդը չի կարող ինչ-որ հարցով դիմել դատարան, որը միլիոնների հետ է կապված ու ռեալ խանգարում է իր բիզնեսին զարգանալ, ու տարիներով սպասել, թե դատավորը երբ որոշում կկայացնի: Դրա համար պետք է մասնավոր տնտեսական բնույթի դատավորներ կամ դատարաններ, ...գոնե մասնագիտացված դատավորներ, որտեղ գործը կմտնի և բավականին արագ լուծումներ կլինեն... Դրանք արբիտրաժները կարող են լինել, միջդատական որոշակի պրակտիկա պետք է լինի, մինչև դատարան մտնելը խնդիրները կարգավորող...

Լրագրող-փորձագետ

Դատական համակարգի մատչելիության և ճկունության հետ կապված խնդիրներից մեկը, թերևս, այն է, որ անվճարունակ ձեռնարկությունները գրեթե շանս չունեն վերակազմակերպվելու: Բանկերը, շահագրգռված լինելով գրավադրված գույքի բռնագանձմամբ և գրավի ուղղակի

Թալանի ընկերները կամ Էռնեկյանի աջակցությունը Քոչարյանին: Աղբյուր՝ https://www.1in.am/2404709.html

հավաքագրմամբ, սովորաբար գործը հասցնում են ձեռնարկությունները սնանկ ճանաչելուն և լուծարելուն[87]: Նման գործերը սովորաբար դատարաններում չեն վիճարկվում: Հայաստանը վերջին տարիներին սնանկության լուծմամբ զբաղեցրել է 95-րդ տեղը՝ 44,6 միավորով: Վրաստանը 56,2 միավորով զբաղեցնում է 64-րդ տեղը: ԱՄՀ-ի 2018 թվականի Երկրի զեկույցում նաև ընդգծվում է, որ «հետագա բարեփոխումները պետք է ուղղված լինեն վերականգնման հաջող դեպքերի քանակի ավելացմանը և լուծարվող պարտատերերի վերականգնումն առավելագույնի հասցնելուն»[88]:

Այսպիսով, փաստաթղթային ուսումնասիրությունների և փորձագետ-դերակատարների դիտարկումների հիման վրա կարելի է ասել, որ դատաիրավական համակարգի ներկա վիճակը քայքայիչ կապիտալի ներհոսքի համար ստեղծում է հարմար միջավայր՝ միևնույն ժամանակ խոչընդոտելով թափանցիկ, հաշվետու, երկարաժամկետ ներդրումների ներհոսքը:

2.6 Քաղաքական համակարգը

Որոշ փորձագետներ կառուցողական բնույթի օտարերկրյա կապիտալի ներգրավման կարևոր պայմաններից մեկն են համարում ներդրում ստացող երկրի՝ ժողովրդավարական քաղաքական համակարգ ունենալու հանգամանքը[89]: Այս առումով, բացի, իհարկե, ՀՀ գործող Սահմանադրությամբ Հայաստանը ժողովրդավարական երկիր հռչակվելու հանգամանքից՝ կարևոր է ուշադրության առնել 2018 և 2021թթ. ԱԺ ընտրությունները, որոնք անց են կացվել ժողովրդավարական ընտրությունների համար սահմանված սկզբունքների համաձայն (ինչն, ի դեպ, ՀՀ ներկայիս իշխանությունները ներկայացնում են որպես իրենց իշխանության օրոք տեղի ունեցած ամենամեծ ձեռքբերումը): Նշվածի օգտին մեկ այլ վկայակոչում (որը նույնպես վերջին տարիներին բարձրաձայնվում է գործող իշխանությունների կողմից) վերաբերում է այն փաստին, որ Հայաստանը 2021 թ. աշնանը ԱՄՆ հրավերքով կայանալիք Ժողովրդավարական երկրների առցանց գագաթաժողովում տարածաշրջանից հրավիրված երկու երկրներից մեկն է[90]:

Ժողովրդավարության մակարդակը գնահատող մի շարք միջազգային ինդեքսներ նույնպես ամրագրում են ժողովրդավարության ուղղությամբ ՀՀ-ի ձեռքբերումները: Ի մասնավորի՝ Freedom House -ի Nations in Transit 2022 թ. զեկույցի համաձայն՝ Հայաստանը գրեթե 7 միավորով բարելավել է իր ցուցանիշը՝ ստանալով 3.04 միավոր[91]: 2022 թ. մայիսին կայացած Ժողովրդավարության հայկական ֆորումի ժամանակ վարչապետ Ն. Փաշինյանը հայտարարեց, որ Ժողովրդավարությունը Հայաստանի միջազգային հիմնական բրենդն է[92]:

---

[87] World Bank. (2020). Doing Business 2020: Economy Profile: Armenia, Comparing Business Regulation in 190 Economies: Source: https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/a/armenia/ARM.pdf , page 59

[88] IMF (2018). Republic of Armenia: Financial System Stability Assessment – press release; staff report; and statement by the executive director for the Republic of Armenia, IMF Country Report No. 18/361

[89] Democracy Talks: Andrew Wilson, Center for International Private Enterprise: Source: https://www.bushcenter.org/publications/articles/2020/05/democracy-talks--andrew-wilson--center-for-international-private-enterprise.html

[90] ԱՄՆ-ն Հայաստանին հրավիրել է մասնակցելու «Հանուն ժողովրդավարության» համաժողովին. Հրաչ Մելքումյան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/31547327.html

[91] Հայաստանն առաջընթաց է գրանցել Freedom House-ի՝ ժողովրդավարության մակարդակը գնահատող նոր զեկույցում: Աղբյուր՝ https://iravaban.net/379029.html

[92] Փաշինյանը վերստին հայտարարում է՝ ժողովրդավարությունը Հայաստանի միջազգային հիմնական բրենդն է, Արտակ Խուլյան, Վահե Օհանյան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/31859850.html

Սակայն Freedom House-ի նույն զեկույցի մեջ Հայաստանը դասվում է հիբրիդային ժողովրդավարական երկրների շարքին: Տոկոսային ցուցանիշով ՀՀ-ի ժողովրդավարության զարգացման մակարդակը կազմում է 34%[93]: Սա ենթադրում է, որ ՀՀ քաղաքական ինստիտուտները դեռ կայանալու[94], հանրային վերահսկողության մեխանիզմները կատարելագործվելու կարիք ունեն: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ իշխանական որոշումները (այդ թվում՝ երկրի տնտեսությանը վերաբերող որոշումները) կայացվում են առանց հանրության և փորձագիտական շրջանակների կարծիքը հաշվառելու[95]: Որոշակի խնդիրներ կան ներդրումային միջավայրի կարգավորումների, ինչպես նաև կայացված որոշումները համապատասխան պետական կառույցների կողմից ըստ պատշաճի իրականացնելու հարցում[96]:

ՀՀ-ում Ժողովրդավարական համակարգի կայացման տեսանկյունից հետքայլ կարելի է համարել 2021 թ. խորհրդարանական ընտրությունների հետևանքում իշխող կուսակցության պատգամավորների կազմում երկու խոշոր գործարարների (Խաչատուր Սուքիասյանի, Գուրգեն Արսենյանի) հայտնվելը ԱԺ-ում:[97] 2018 թ. կայացած ԱԺ ընտրություններում ձևավորված խորհրդարանում իշխող Իմ քայլը դաշինքում նման գործարարներ չկային և Դաշինքի կողմից դա դիտարկվում էր որպես օրինակելի երևույթ: Ինչպես նկատում է Ա. Կյուրումյանը՝ «Վարչապետ Փաշինյանը նա էր, ով պահանջում էր բիզնեսի և պետության տարանջատումը: Նա այդ բանը հատուկ շեշտեց 2018 թ. խորհդրարանին ուղղված ելույթի ժամանակ, երբ ԱԺ-ին ներկայացնում էր իր կառավարության ծրագիրը»[98]:

Մեր քննարկումների ու հարցազրույցների մասնակիցների զգալի մասը որոշակի դժվարություններ են ունեցել քաղաքական համակարգի բնույթը որպես քայքայիչ կամ կառուցողական կապիտալի միջավայր դիտարկելու հարցում: Պետք է նկատել, որ հանրային դիսկուրսում ևս չեն հանդիպում օտարերկրյա ներդրումները այդ տեսանկյունից դիտարկելու խոսույթներ (դիսկուրսներ)[99]՝ չնայած այն հանգամանքին, որ ներդրումային նոր հայեցակարգում,

---

[93] Հայաստանն առաջընթաց է գրանցել Freedom House-ի՝ ժողովրդավարության մակարդակը գնահատող նոր զեկույցում: Աղբյուր՝ https://iravaban.net/379029.html
Հայաստանը ժողովրդավարության ամրապնդման քայլեր է ձեռնարկել, բայց դեռ ժողովրդավարական պետություն չէ. Freedom House: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/31813865.html

[94] «Այնուամենայնիվ, հիբրիդային ռեժիմով պետություններում թեև տեղի են ունենում ազատ և անկախ ընտրություններ, այդ պետություններին բնորոշում են նաև թույլ ժողովրդավարություն ունեցող ինստիտուտներով, և դա ևս կոչ է Հայաստանի իշխանություններին, որպեսզի արագացնեն նաև ժողովրդավարությունն ինստիտուցիոնալիզացնելու պրոցեսը ու դրանք նաև կիրառեն կառավարության բոլոր մարմիններում»,- ասաց Ճիրինյանը: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/31813865.html

[95] Ֆոկուս խմբային քննարկումներ, փորձագիտական հարցազրույցներ, առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ, ՁԼՄ հաղորդումներ: Տե՛ս, օրինակ, Մենակ մնալով իր խնդիրների հետ՝ ԿԲ-ն ստիպված կգնա վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման, իսկ արտահանումը կհայտնվի ուղղակի հարվածի տակ. Աղբյուր՝ https://finport.am/full_news.php?id=46499&lang=1,
Կա՛մ ցանկություն չկա, կա՛մ ֆայմ. Գագիկ Մակարյանը՝ վարչապետ-գործարարներ հանդիպման մասին. «Փաստ»: Աղբյուր՝ https://www.1in.am/2793815.html

[96] Նույն տեղում: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս սույն զեկույցի 2-րդ բաժնի 1-4 ենթաբաժիններում:

[97] «ՔՊ-ն էլ չդիմացավ. փողատերերը կհայտնվեն ցուցակում», 2021, Աղբյուր՝ https://epress.am/2021/05/25/qp_cant_differenciate.html

[98] Internal Brief; Assessment of current feasibility and relevance of the recommendations developed during the first phase of "Eurasia: Creating Enabling Environment for Constructive Capital" project. Prepared for the Center for International Private Enterprise By Artak Kyurumyan, 2021

[99] Հետհեղափոխական ժամանակահատվածում լրատվամիջոցներում շրջանառության մեջ է դրվել «տնտեսական ժողովրդավարացում» եզրը, բայց ոչ որպես ժողովրդավարական համակարգի արգասիք, այլ որպես վերջինիս կայացման նախապայման: Սակայն, այդ ձևակերպումը լայն տարածում չի գտել: Տե՛ս՝ Քանի չկա տնտեսական ժողովրդավարացում, քաղաքական ժողովրդավարության մասին խոսելը սոսկ պատրանք է: Աղբյուր՝ https://infocom.am/hy/article/5300,

օրենսդրական կարգավորումներում թափանցիկություն, հաշվետվողականություն, մասնակցություն ապահովելու նպատակով նախատեսվող փոփոխություններն, ըստ էության, բխում են ժողովրդավարական քաղաքական համակարգի հիմնարար սկզբունքներից: Ավելին, ըստ դաշտային հետազոտությունների՝ առանցքային տեղեկատուների մեծամասնությունը ևս անհաղորդ է այդ հղացքին (կոնցեպտին): Մյուս կողմից, հնարավոր է նաև, որ նշվածի կարևորության գիտակցմանը խանգարում են այնպիսի պրակտիկաների մասին տեղեկացվածությունը, որոնցում ակնհայտ է ավտորիտար համակարգ ունեցող երկրներում ժողովրդավարական երկրների գործարարների կողմից իրականացվող արդյունավետ ներդրումները.

[Ժողովրդավարական համակարգ ունենալը] կարևոր է, բայց ամենակարևորը… Խոշոր ինստիտուցիոնալ ներդրողները, խոշոր ներդրումային հիմանդրամը, իրենց ավելի շատ պետք են խաղի կանոնները, ոչ թե՝ ինչքանով են մարդու իրավունքները պաշտպանված: Չինաստանը դրա օրինակներից մեկն է: Եվ շատ երկրներ կան, որտեղ դեմոկրատիա չէ, բայց ներդրումներ կան: Գալիս են, որովհետև խաղի կանոնները հստակ են, որովհետև վեճերի լուծման կանխատեսելիություն կա՝ լինի դա դատական՝ ազգային դատական համակարգի միջոցով, թե վեճերի այլընտրանքային լուծման, ասենք՝ արբիտրաժի կամ մեդիացիայի միջոցով: …Ամենակարևորը այստեղ կանխատեսելիությունն է: …Նախկինում մեր հաջողված կամ չհաջողված ներդրումների պատճառները միշտ չեն, որ կապված են դեմոկրատիայի կամ մարդու իրավունքների հետ, կամ թափանցիկության հետ: …Եթե 1-10 [բալանոց] սանդղակով [գնահատեմ]՝ 5 միավոր եմ գտնում այն կարևորությունը, որը միջին վիճակագրական օտար ներդրողը տալիս է երկրի դեմոկրատիայի որակին կամ աստիճանին:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

2.7 Քաղաքացիական հասարակությունը և մասնակցությունը

Արևելյան եվրոպայի մի շարք երկրներում իրականացված ուսումնասիրություններում կարևորվում է քաղհասարակության դերակատարությունը՝ որպես քայքայիչ կապիտալի ներթափանցմանը և ծավալմանը խոչընդոտող գործոն[100]: Ենթադրվում է, որ քաղաքացիական հասարակության դերը հատկապես կարևոր է իշխանական որոշումների վրա ազդեցության տեսանկյունից: Այդ առումով, չնայած Հայաստանում յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցելու որոշումների կայացմանը, իսկ իրավական դաշտը քաղաքացիների և ՔՀԿ-ների մասնակցության համար մի շարք հնարավորություններ է ընձեռում՝ սակայն, մասնակցության պահանջները չկատարելու համար պատասխանատվության մեխանիզմներն անբավարար են: Ըստ ՀՀ Սահմանադրության՝ քաղաքացիները կարող են որոշում կայացնողներին օրենսդրական նախագծերի նախաձեռնություններ և հանրագրեր ներկայացնել[101]: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում առանձին դրույթ կա օրենսդրական ակտերի նախագծերի՝ պարտադիր հանրային քննարկման ենթակա լինելու վերաբերյալ: Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է: Հանրային քննարկումների արդյունքները և լրամշակված նորմատիվ իրավական

Քանի չկա տնտեսական ժողովրդավարություն, քաղաքական ժողովրդավարությունը կմնա հակահեղափոխության ենթակա https://hetq.am/hy/article/90563

[100] Տե՛ս, օրինակ՝ Danger Almost Deferred? Chinese Corrosive Capital in Bulgaria and Romania, by Rumena Filipova: Աղբյուր՝ https://ceias.eu/chinese-corrosive-capital-bulgaria-romania/,
Many a Mickle Makes a Muckle. Chinese Corrosive Capital in Croatia, By Nina Pejič https://ceias.eu/chinese-corrosive-capital-croatia/ , Oligarchs and Party Folks. Chinese Corrosive Capital in Slovakia and Czechia. By Matej Šimalčík: Source: https://ceias.eu/chinese-corrosive-capital-sk-cz/

[101] ՀՀ Սահմանադրություն, հոդված 109/6. Աղբյուր՝ https://www.president.am/hy/constitution-2015/

ակտի նախագիծը նույնպես ենթակա են հրապարակման: Եթե կառավարություն է ներկայացվել հանրային քննարկում չանցած նախագիծ, ապա կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին:[102] Այս դրույթները, սակայն, չեն տարածվում խորհրդարանի կողմից նախաձեռնած, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված օրենսդրական նախագծերի վրա[103:] Խորհրդարանական նախագծերի դեպքում հանրային քննարկումների պահանջի չկիրառումը մասնակցության ոլորտի իրավական դաշտի ամենաակնառու խնդիրն է: Բացի այդ, 2021 թ-ի ապրիլին ընդունված օրենսդրական փոփոխություններով սահմանվեց, որ ռազմական և արտակարգ դրությանն առնչվող իրավական ակտերը ենթակա չեն պարտադիր հանրային քննարկման[104], ինչը ևս իրավական դաշտի սահմանափակումներից է: «Գործնականում 2020-2021 թթ-երի ընթացքում մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ ընդունվեցին առանց հանրային քննարկման»[105]:

2020 թ-ի Արցախյան պատերազմի հետևանքում երկրի ներսում սկսված քաղաքական հուզումների և ՔՀԿ դեմ տարվող հակաքարոզչության պայմաններում ՀՀ ներկայիս իշխանությունը «ինքնապաշտպանական դիրք գրավեց և էլ ավելի հեռացավ ՔՀԿ համայնքից, քան պատերազմին նախորդած արտակարգ դրության ժամանակ: Այսպիսով, որոշումների կայացման գործում ՔՀԿ-ների ներգրավելու գործելակերպն ավելի պակասեց»[106]: Մյուս կողմից, «իշխանության օրակարգում հայտնվեցին խոսքի ազատությունը սահմանափակող մի շարք նախաձեռնություններ, որոնք պայմանավորված էին ատելության խոսքի ահագնացող ծավալների, ապատեղեկատվության և պետական պաշտոնյաների հասցեին հնչող (երբեմն վիրավորանքի հասնող կամ որպես այդպիսին ընկալվող) սուր քննադատության միտումներով: 2021 թ-ի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո հասարակական լարվածությունը և ՔՀԿ-ների դեմ արշավները փոքր-ինչ մեղմվեցին»[107]:

«Կառավարության հետ ՔՀԿ հաղորդակցությունը թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ գործնական մակարդակում ավելի սերտ բույթ ունի՝ խորհրդարանի համեմատ: Եղել են նաև երկխոսության և համագործակցության մի քանի հաջողված դեպքեր: Սակայն, վերջին երկու տարիներին ՔՀԿ-ները մասնակցության հետընթաց են նկատում՝ ի հակադրություն հետհեղափոխական վաղ շրջանում արձանագրված կառավարության բաց աշխատելաոճի և ՔՀԿ-ների մեծ ակնկալիքների: Պետության կողմից հանրության ներգրավման ուղղությամբ պրոակտիվ ջանքերի և ՔՀԿ-ների փորձագիտական գիտելիքների նկատմամբ հետաքրքրության պակաս է նկատվում, իսկ ՔՀԿ-ների մասնակցության ազդեցությունը սահմանափակ է: Որոշ համայնքներում թափանցիկության և մասնակցության դրական միտումներ կան՝ պայմանավորված համայնքների ղեկավարների անձնական վերաբերմունքով, ինչպես նաև տեղական ՔՀԿ-ների հետևողական ջատագովության շնորհիվ»: Սակայն, ընդհանուր առմամբ՝ տեղական մակարդակում մասնակցության մակարդակը ցածր է»[108]: «ՔՀԿ չափիչի» 2019 թ-ի զեկույցի առաջարկների իրականացման հետ կապված առաջընթաց չկա[109]:

---

[102] ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, վերջին փոփ. 19.04.2021, հոդվածներ 3 և 4: Աղբյուր՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139 :
[103] Տե՛ս՝ նույն տեղում, հոդված 1:
[104] ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», 19.04.2021: Աղբյուր՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152130
[105] ՔՀԿ չափիչ 2021, էջ 28: Աղբյուր՝ https://transparency.am/hy/publication/287
[106] Տե՛ս՝ նույն տեղում, էջ 5-6: Աղբյուր՝ https://transparency.am/hy/publication/287
[107] Տե՛ս՝ նույն տեղում: Աղբյուր՝ https://transparency.am/hy/publication/287
[108] Տե՛ս՝ նույն տեղում, էջ 27 -28: Աղբյուր՝ https://transparency.am/hy/publication/287
[109] 2021-2022 թթ. Կովկասյան բարոմետրի հարցումները վկայում են, որ ՀՀ-ում ՔՀ ոլորտի վարկանիշը 2020 թ-ի պատերազմից հետո որոշակի անկում է գրանցել: ՔՀ կազմակերպություններին վստահողների

Անշուշտ, առկա են նաև որոշակի հաջողությունների օրինակներ, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումների հետ կապված որոշումների կայացման ասպարեզում: ՔՀ դիմադրության և ճնշման ներքո 2019 թ-ին հաջողվեց կասեցնել Լիդիան Արմենիայի կողմից Ամուլսարի հանքի հետագա շահագործումը[110]: Freedom House-ի 2022 թ-ի զեկույցում նշվում է[111], որ Հայաստանում քաղաքացիական հասարակության խմբերը կարողացել են կանխել իշխող կուսակցության կողմից առաջ քաշված մի օրինագիծ[112], որի արդյունքում՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը կհայտնվեր կառավարական վերահսկողության ներքո: Քաղհասարակության համար կարևոր ձեռքբերումներից մեկը Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ստեղծումն էր, որտեղ աշխատում է հասարակական կազմակերպություններից ձևավորված խումբը[113]: Այս ամենը վկայում են այն մասին, որ չնայած որոշակի խնդիրներին՝ ՔՀ ոլորտը Հայաստանում, այնուամենայնիվ, դիմադրության որոշակի ներուժ ունի.

Իրականում, էդ քաղաքացիական ակտիվության ցուցանիշը (այսպես կոչենք, էլի՛), սահագին փոխվել ա Հայաստանում: Լուրջ բարելավվել ա, որովհետև էս բանը մենք տարիներ առաջ դժվար կպատկերացնեինք՝ մինչև Թռչկանը [նկատի ունի Ջրվեժի համար ակտիվիստների պայքարը]: Նույն էլեկտրիկ Երևանը, հազար ու մի շարժումներ՝ բոլորը ծնունդ տվեցին, որ քաղաքացին ակտիվանա: Իսկ երբ, որ ակտիվանում ա, ակտիվություն ա ցուցաբերում, ինքը արդեն ռեալ հասկանում ա՝ որտեղից ինչ կարա պահանջի: Ինքը սկսում ա արդեն համագործակցել իրավապաշտպանների հետ, սկսում ա իրա իրավագիտակցության մակարդակը բարձրանալ, ...և պահանջատիրության ինչ-որ բաներ ա առաջ գալիս:

Լրագրող-փորձագետների հետ քննարկման մասնակից

Քաղաքացիական հասարակության հաստատությունների ցանկում մի փոքր այլ կարգավիճակ ունեն բիզնեսի հետ կապված տարբեր միավորումները (ասոցիացիաներ, միություններ), որոնք իրենց հետաքրքրությունների, միգուցե նաև գործունեության որոշակի պրակտիկաների պատճառով հաճախ նույնականացվում են հենց բիզնես սեկտորի հետ: Փորձագետներից մի քանիսի դիտարկմամբ՝ դրանց մեծ մասը տարբեր գերատեսչությունների որոշումների անվերապահ հաստատողներ անվերապահ հաստատողներ դակիչներ են, ֆիկտիվ կառույցներ, և այդ «դաշտը մաքրելու» անհրաժեշտություն կա: Փորձագետներից ոմանց կարծիքով էլ՝ դրանք բավարար չափով կայացած չեն, որպեսզի արձագանքեն պետական գերատեսչությունների կողմից նախաձեռնված մասնակցային գործընթացներին.

համախառն տոկոսը 28.7 է (5 տոկոսը լիովին է վստահում, 23.7 տոկոսը՝ ավելի շուտ): ՀՌԿԿ Հայաստան, Կովկասյան Բարոմետր 2021-2022: Աղբյուր՝ https://www.crrc.am/wp-content/uploads/2022/06/%D4%B2%D5%A1%D6%80%D5%B8%D5%B4%D5%Հ A5%D5%BF%D6%80-2021_pptx_Final_13.06.22-2.pdf

Համեմատության համար նշենք, որ Վրաստանում վստահության համախառն արդյունքը 20 տոկոս է (լիովին վստահողները՝ 4, իսկ ավելի շուտ վստահողները՝ 16 տոկոս): Աղբյուր՝ https://caucasusbarometer.org/en/cb2021ge/AGEGROUP/

[110] Փաշինյանը «Էլարդ»-ի ներկայացուցիչների հետ քննարկելու է Ամուլսարի հարցով փորձաքննության եզրակացությունը, Նարինե Ղալեչյան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/30125346.html

[111] Հայաստանը ժողովրդավարության ամրապնդման քայլեր է ձեռնարկել, բայց դեռ ժողովրդավարական պետություն չէ, Freedom House, Անուշ Մկրտչյան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/31813865.html

[112] Թաթոյանը ՄԻՊ տարեկան բյուջեն կրճատելու հնարավորություն տվող նախագիծը խտրական է համարում, Մարինե Խաչատրյան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/31149326.html

[113] ԱՃԹՆ-ի մասին, Աղբյուր՝ https://www.gov.am/am/eiti/, https://www.eiti.am/hy/%D5%AB%D5%B6%D5%B9-%D5%A7-%D5%A1%D5%B3%D5%A9%D5%B6-%D5%B6

…Կառավարությունում ես դա առաջարկել եմ. ասել եմ՝ …եթե ուզում եք բովանդակային կարգավորումներ, պիտի մաքրվի էս դաշտը: Դրանք [միավորումները] պետք ա վերագրանցում արվեն, ու պիտի որոշակի կրիտերիաներ սահմանվեն, որոնց դեպքում դու կարող ես վերագրանցվես: …Քո [միության] ֆինանսական աղբյուրները պիտի լինեն թափանցիկ, քո ֆինանսական հաշվետվությունում պիտի թափանցիկություն լինի՝ մեկ, երկրորդը՝ քո եկամուտների առնվազն 50 տոկոսը պետք ա լինեն քո անդամավճարները: …Անդամավճարի ֆունկցիան կարևորագույն էլեմենտ ա: Կառավարման նկատմամբ պահանջներ պետք ա լինեն, փոփոխություններ: Էդ կառույցը պետք ա ինչ-որ մեկին ներկայացնի: Էդ հստակ պիտի հասկացվի անվանումից՝ ում ես ներկայացնում: Չի կարա լինի… SMM-ի ասոցացիա: Նշանակում ա՝ Հայաստանում 8000 մարդու ներկայություն: Դու քանի՞ հոգի մարդ ունես քո մոտ գրանցված… Պետությունն էլ իրա հերթին, իրան ձեռնտու չի ունենա նմանատիպ counterpart, որովհետև եթե counterpart-ը տենց բան ա, անորոշ կենդանի ա, շատ լավ ա նախարարի համար ասել՝ մենք ստեղծեցինք հանրային խորհուրդ, որտեղ քննարկեցինք էսինչ օրենքը ու էդ հանրային խորհրդում ներկայացված են 6 հոգի մարդ, որոնք ոչ մի աղերս չունեն բիզնեսի շահերի, ներդրողների շահերի հետ…

վերլուծաբան-փորձագետ

…Օրենքի մակարդակով պետք ա ամրագրել ասոցիացիային տրվող արտոնությունները ու ֆորմատները: Այսինքն՝ մոտավոր լինի հետևյալը, որ բիզնես ասոցիացիա կարող է կոչվել այն ասոցիացիան, որն ունի, մինիմում ունի էսքան member ու էսքան fee-ով: …Ասոցիացիայի էսքան անդամների քվեարկության հիման վրա՝ պարտավոր է իր մոտ ընդունի նախարար, փոխնարար, մինիմում՝ նախարար ու փոխնախարար: Ավելի բարձր մակարդակով՝ Deputy Prime Minister՝ էսքան պարբերականությամբ, որպեսզի լսեն իրանց բարձրաձայնած խնդիրները: Ու պետք ա վերջ տալ էդ պրակտիկային, այսինքն՝ որ ինչ-որ մեկը զանգի, ասի՝ հանդիպենք, խոսենք, հասկանանք՝ ինչ խնդիրներ ունենք: Էս երեքը իրար հետ որ լինեն, կարծում եմ՝ բավականին նորմալ աշխատող համակարգ կստացվի:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ-փորձագետ

Անդրադառնալով երկրի զարգացման հեռանկարների մասին ընդհանուր խոսույթում օտարերկրյա ներդրումների դերակատարության առանցքային կարևորմանը և դրանում զանգվածային լրատվամիջոցների դերկատարությանը, հարկ է նշել, ոչ վերջիններս հազվադեպ են անդրադառնում ներդրումների հետ կապված հիմնախնդիրներին: Առցանց տեսանյութերում, օրինակ, օտարերկրյա ներդրումների վերաբերյալ ընդամենը մեկ հանրային քննարկում է հանդիպել[114]: Տեսանյութերի մեծ մասը խոշոր ներդրումների մասին տեղեկացնող կամ խոստումներ պարունակող հրապարակումներ են: Եզակի լրատվամիջոցները, որոնք պարբերաբար անդրադառնում են օտարերկրյա ներդրումների հետ կապված տարբեր ասպեկտներին՝ Հետք.am-ը և Սիվիլնեթ.am-ն են:

[114] Հանրային քննարկում. Տնտեսության զարգացում, Ներդրումներ. Աղբյուր՝ https://www.youtube.com/watch?v=0zca2ix6oho

2.8 Ներդրումների վրա ներազդող աշխարահաքաղաքական գործոնները

Հարցվողների մեծ մասը նկատում են, որ ՀՀ-ում օտարարեկրյա ներդրում իրականացրած կազմակերպությունների տարապատկերում ռուսական կազմակերպությունների գերակայությունը պայմանավորված է աշխարհաքաղաքական գործոնով, ի մասնավորի՝ Հայաստանի վրա ՌԴ ունեցած քաղաքական ազդեցությամբ: Դրանով է պայմանավորված հաճախ, որ դժվար է տարանջատել տնտեսական քաղաքականությունը քաղաքական գործոնից: Որպես նշված աշխարհաքաղաքական գործոնի դրսևորում՝ հարցվողները վկայակոչում են այն իրողությունը, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ-ի) պահանջներին առավել համապատասխանող Լիդիան Արմենիայի գործունեությունը Հայաստանում կասեցվեց, մինչդեռ այդ պահանջներին նվազ համապատասխանող և ռուսական կազմակերպությունների կառավարման տակ գտնվող հայաստանյան հանքերը շարունակվում են շահագործվել: Որոշ հարցվողներ էլ ներդրումների մեջ Ռուսաստանի կշռի մեծությունը պայմանավորում են խորհրդային տարիներից եկող իներցիայով: Հարցվողներից ոմանք նաև համարում են, որ ռուսական կազմակերպությունների ներդրումների 60 տոկոս աճը պայմանավորված է 2015 թ-ին Հայաստանի՝ ԵԱՏՄ մտնելու հանգամանքով: Դատելով հարցվողների դիտարկումներից՝ այդ ազդեցությունը հատկապես արցախյան պատերազմում կրած պարտությունից հետո ավելի է մեծացել, ուստի և առավել նպաստավոր իրավիճակ է ձևավորվել նոր քայքայիչ ներդրումների թափանցման համար:

Առավելությունը միշտ տրվել ա ռուսական կողմին: Միգուցե սխալ ա համեմատությունը, բայց ո՞նց ա Ամուլսարը չի շահագործվում, բայց Զանգեզուրը շարունակում ա մնալ. որովհետև ներդրումները տարբեր են: ...Ռուսական կապիտալը միշտ ստեղ ազդեցություն ա ունեցել: Ո՞նց ա լինում, որ միշտ էն բեղումնավոր, շատ եկամուտներ ունեցող ոլորտներում ոնց որ հանքարդյունաբերությունն ա՝ ոսկի, պղինձ, բան, ռուսներն են միշտ լինում ...Տարանջատել ներդրումները բուն քաղաքականությունից, դժվար է:

Լրագրող-փորձագետների հետ քննարկման մասնակից

Արևմտյան երկրներից կապիտալի հոսքերի նվազումը պայմանավորված է [20]15 թվի փորձանքով՝ ԵԱՏՄ [մտնելով]... Մեզ քարշ տվեցին ընդեղ:

Լրագրող-փորձագետների հետ քննարկման մասնակից

2.9 Ներդրումների վրա ներազդող արտակարգ գործոնները

Պարբերաբար պատերազմական գործողությունների մեջ ներքաշվելու սպառնալիքը, սահմանային լարված վիճակը այն կարևոր գործոններն են, որոնք օտարերկրյա շատ ներդրողների համար ավելացնում են անորոշության զգացումը և նվազեցնում են ներդրում անելու ցանկությունը: Այդ հանգամանքը հավելվում է Հայաստանի՝ բավականին նեղ սպառողական շուկա ունենալուն և բեռնափոխադրումների համար տարանցիկ երթուղիների սահմանափակությամբ, որոնք մեծ մասամբ հարատևող պատերազմական վիճակի և հարևանների հետ լարված

հարաբերությունների հետևանքով պայմանավորված խոչընդոտներ են (արտագաղթի աճ[115], փակ սահմաններ)[116]:

Այնինչ, օտարերկրյա ներդրողներն *«ավելի մակրո են նայում»* ու *սովորաբար «երկարաժամկետ են մտածում»*: Թվարկվածը հետադարձ էֆեկտով նվազեցնում է մեծաթիվ ներդրողների հայտնվելը Հայաստանում և ընդհակառակը՝ նպաստում է առանց մրցակցային պայմանների՝ քայքայիչ կապիտալի ներթափանցման հնարավորությունը: Ուկրաինայում 2022 թ. փետրվարի 24-ին սկսված պատերազմը և դրան հաջորդող իրադարձությունները դեպի Հայաստան քայքայիչ կապիտալի թափանցման որոշակի ռիսկներ են առաջացրել, այդ թվում՝ կառուցողական մրցակցային կապիտալի ներթափանցման համար նոր խոչընդոտներ հարուցելու տեսանկյունից: Ի մասնավորի՝ փորձագետներից մեկը նկատում է, որ նման վտանգը առաջանում է Ուկրաինայում ընթացող պատերազմի և Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների արդյունքում՝ ՌԴ կողմից Հայաստանի տնտեսական հիմնարկություններին որոշակի ստվերային գործարքների մեջ ներքաշելու, Հայաստանում ռուսական կապիտալի ծավալները մեծացնելու պատճառով: Ստեղծված իրավիճակում ՀՀ տնտեսական ու ֆինանսական քաղաքականությանը մասնակից կառույցները որոշակի ջանքեր են գործադրում քայքայիչ կապիտալի ներթափանցմանը դիմագրավելու համար՝ օգտվելով նաև ՌԴ և Բելոռուսի դեմ արևմտյան պատժամիջոցների հանգամանքից: Սակայն, ինչպես նախորդ ենթաբաժիններում է ներկայացվել՝ կան *ինստիտուցիոնալ, օրենսդրական, դատական* բնույթի խնդիրներ, որոնք դժվարեցնում են քայքայիչ կապիտալի դիմագրավումը.

…Ինչի՞, օրինակ, [օտարերկրյա ներդրողները] չեն գալիս Հայաստան: Այնպես չի, որ մեր մոտ հարկերը շատ բարձր են, կամ մեր մոտ ներդրումային միջավայրը վատն ա շատ, կամ, օրինակ, շուկան էդքան էլ մրցակցային չի: …Մեր մոտ անորոշությունն ա, որ շատ-շատ բարձր ա լինում ու դա հետ ա պահում ներդրողներին: Նկատի ունեմ և՛ քաղաքական անորոշությունը, և՛, օրինակ, պատերազմական իրավիճակի հետ կապված: …Որովհետև ներդրողները սովորաբար երկարաժամկետ են մտածում: Դրան եթե ավելացնենք էս վերջին տարիներին քաղաքական հաճախակի տեղի ունեցող փոփոխությունները, էդ առումով՝ դա լուրջ խնդիր ա…

Պետական կառույցի ներկայացուցիչ-փորձագետ

Մենք ունենք Լարսի խնդիր՝ արտահանման դեպի արտաքին շուկաներ, մենք ունենք փակ սահմաններ: Առայժմ, մենք ունենք հարևան՝ Իրանի նման, որը շատ կոնսերվատիվ ա: Մենք չենք կարողանում շատ ապրանքներ արտահանել հենց իրանական շուկա: Մենք երկաթգիծ չունենք՝ դեպի Մերձավոր Արևելք,

---

[115] Министерство Внутренних Дел Российской Федерации /Главная/Деятельность/Статистика и аналитика /Статистические сведения по миграционной: https://xn--b1aew.xn--p1ai/dejatelnost/statistics/migracionnaya/7/; Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին: Աղբյուր՝ https://armstat.am/file/article/migration_profile_am__2020.pdf

[116] Որոշ փորձագետներ նկատում են, որ անկախ ստեղծված իրավիճակից՝ խնդիրը միջավայրը ճիշտ գնահատելն է և նկարագրված մարտահրավերներից առավել քիչ կախված տնտեսության ճյուղերում ներդրումային հնարավորություններ ստեղծելը: Նրանցից մեկը այդ ամենը որակում է «սոսկ արդարացումներ»՝ նշելով, որ նույնիսկ փակ սահմանների և փակ տնտեսության պարագայում կարելի է պրոակտիվ քաղաքականություն վարել. «*…անընդհատ պատճառաբանություններ են, որ լոգիստիկան ա թույլ… Տեսե՛ք, Թուրքիայի հետ՝ փակ սահման, չէ՞, միջնորդավորված առևտուր, այսպես ասած, և Իրանի պարագայում. Իրանի հետ ապրանքաշրջանառությունը գրեթե նույնն ա՝ Թուրքիայի հետ ապրանքաշրջանառության հետ համեմատած: Եթե վերցնենք, հանենք էներգակիրների հատվածը, զուտ գազի մատակարարումը, …պետությունը պրոակտիվ քաղաքականություն չի իրականացնում շուկաների հետ աշխատելու… Այսինքն՝ ինքնահոսի ա թողնված. տնտեսվարողները ինչքան կարողանում են, անում են, մնացած հատվածներով որևէ քաղաքականություն, էս պարագայում, չկա…»: Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից*

որ այնտեղ էժան արտահանում կազմակերպենք: Այսինքն՝ լիքը խնդիրներ կան: ...Ներդրողը ասում է՝ զահլա չկա այսքան չարչարվել այս երկրի համար, եկե՛ք հաջորդ երկիրը նայենք, օրինակ, չգիտեմ, Մոլդովան, օրինակ, Վրաստանը:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ-փորձագետ

2.10 Կառուցողական ներդրումների հնարավորությունը նվազեցնող այլ միջավայրեր

Ֆոկուս խմբային քննարկումների, փորձագիտական և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների ժամանակ հիշատակվել են բազմաթիվ այլ գործոններ, որոնք կարող են նպաստավոր միջավայր լինել կառուցողական կամ քայքայիչ ներդրումների թափանցման (flow) համար: Այդ գործոնների մի խումբը վերաբերում է ՀՀ տնտեսական կացությանը և տնտեսական կարողությունների հանրայնացմանը: Առաջին դեպքում կառուցողական կապիտալի համար խոչընդոտ կարող է լինել մեր տնտեսության անցումային բնույթը: Փորձագետներից մեկը նկատում է, որ 2008 թ. մեծ ինֆլյացիայից հետո զարգացած երկրներից ներհոսող կապիտալը փոխեց իր ուղղությունը, դադարեց հոսել զարգացող երկրներ և սկսեց հիմնականում հոսել զարգացած երկրներ: ՀՀ-ում այդ միտման համար լրացուցիչ խթան է տոկոսադրույքների բարձր մակարդակը: Մեկ այլ փորձագետի կարծիքով՝ ներդրումային միջավայրի գրավչության տեսանկյունից կարևոր բաց է, որ բաժնետոմսեր չեն թողարկվում: Տարբեր փորձագետներ բացերի թվում նշել են նաև ֆոնդային բորսայի de facto (ըստ էության) "բացակայությունը".

...Սովորաբար ներդրումները կատարվում են՝ հաշվի առնելով եկամտաբերությունը: Եկամտաբերությունը մեծամասամբ կախված ա տոկոսային մակարդակից... Եթե ինչ-որ մեկը որոշի իրա դոլլարը բերի, Հայաստանում ավանդ ներդնի՝ շատ ավելի եկամտաբեր կլինի, քան, օրինակ, նույն իր երկրում՝ Ամերիկայում: Բայց դրա հետ մեկտեղ՝ կան ռիսկեր և էդ ռիսկը պրեմիում ասվածն ա, էլի՛, որ պետք ա բավարարի իրենց: ...Ուրեմն, մենք անցումային տնտեսություն ենք, չէ՞՝ emerging market ենք... Էս շուկան իրենից ենթադրում է որոշակի ռիսկեր. դրանք կարող են լինել քաղաքական, կարող են լինել տնտեսական: ...Հիմա ներդրողը ինչպե՞ս է ընտրում երկիրը: Ինքը կարող է երկու տեսակ ներդրում ունենալ. կան ովքեր ավելի ռիսկին հակված են և ընդհակառակը՝ ռիսկը վերցնել չեն ուզում... Էն մարդիկ, ովքեր ռիսկին հակված են, իրենց ներդրումները սովորաբար անում են, նաև ունենում են, էդպես կոչված, էդ emerging market-ում ներդրումներ... Եվ իրենց համար ամենակարևորը, այսպես կոչված, ռիսկի պրեմիումն է:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

...Եթե էդ ներդրողը կա, բայց ներդրումային գործիքը չկա... Ասենք, հազարավոր մարդիկ ասում են՝ լա՛վ, գանք, բաժնետոմս առնենք, բայց էդ բաժնետոմսը թողարկողը չկա: Էդ էլ երկրորդ խումբն ա խնդիրների: Եվ երրորդ խումբը՝ դա ենթակառուցվածքներն են: Եթե էդ երկուսն էլ կան, բայց բորսա չկա՝ հարթակ չկա, կամ հարթակը կա, բայց ինտեգրված չի, կամ կա, բայց լավը չի, կամ կա, բայց մենեջմենթը լավ չի իրականացվում և այլն...

Գործարար համայնքի ներկայացուցիչների հետ ՖԽՔ մասնակից

Փորձագետները կառուցողական կապիտալի ներգրավման տեսանկյունից կարևորում են նաև երկրի տնտեսական կարողությունների մասին միջազգային հանրայնացումը և տեղեկատվության

պատշաճ ապահովումը: Նրանցից մեկի դիտարկմամբ՝ «թույլ շուկան» գալիս է, որովհետև պրոպագանդան թույլ է.

...Ընդհանրապես, գոյություն ունեն երեք տեսակի շուկաներ՝ թույլ, միջին և ուժեղ: Էդ ուժեղ շուկան նա է, որ հիմնականում ամբողջ ֆինանսական ինֆորմացիան հանրային է, այսինքն՝ քեզ էնտեղ ոնց որ սյուրպրիզների բան չի մնում: Իսկ Հայաստանը թույլ շուկա է, որովհետև էստեղ նույնիսկ էն դեպքում, երբ պետք է լինեին իրենք public, մենք բոլորս շատ լավ հասկանում ենք, որ տնտեսության մի ահագին մաս ստվերային է դեռ մնացել:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Մենք մի ժամանակ Էկոնոմիկայի նախարարության հետ, որ քննարկումներ էինք ունենում, խոսում էինք նաև՝ ինչպես իրախուսել բիզնեսին, ինչպես աջակցել... Իրականում աջակցության անհրաժեշտություն կա, որ բիզնեսին իրազեկել: Ոչ միայն բիզնեսին, այլ նաև հանրային իրազեկումը... Եթե լավ կառավարման մասին ենք խոսում, որ պիտի բերի ներդրումային միջավայրի բարելավման, կարևոր շահակիցները, էդ թվում՝ ՀԼՄ-ները, ցանկացած քաղաքացի, որ կարողանա պահանջատիրական մոտեցում ունենալ կազմակերպության կողմից բացահայտվող տեղեկատվության, կազմակերպության վարքագծի վերաբերյալ...

վերլուծաբան-փորձագետ

Օտարերկրյա կառուցողական ներդրումների հնարավորությունը նվազեցնող գործոնների երրորդ խումբը վերաբերում է քաղաքականություն մշակող և իրականացնող ինստիտուտների հեղինակությանը: Քաղաքականություն մշակող և իրականացնող ինստիտուտների հեղինակության բարձրացումը՝ ըստ փորձագետների, կարող է նպաստել անձնական կապերով և այլ միջոցներով (քաղաքական ազդեցությամբ) ներդրումներ բերելու դեպքերի նվազեցմանը.

Առանց անձնական ծանոթության չի լինում: Մեծ ինվեստորը չի գալիս օդի մեջ, ինքը գալիս ա՝ կոնկրետ մարդկանց հետ պայմանավորվելու: Իսկ ինստիտուցիոնալ կառույցը պիտի հստակ լինի, ինստիտուցիոնալ կառույցը պետք ա ունենա որոշակի ավտորիզացիա: Իսկ եթե դա չունի, ինքը խոսակցություններից էն կողմ չի գնում...

Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից

Օտարերկրյա կառուցողական ներդրումների հնարավորությունը նվազեցնող գործոնների չորրորդ խումբը ուշադրություն է հրավիրում հանրային գիտակցության մակարդակի և մեր մշակութային առանձնահատկությունների վրա: Հանրային գիտակցության և իրազեկության մակարդակի բարձրացումը կարևորվում է ներդրումային քաղաքականության թափանցիկության ապահովման համատեքստում: Իսկ մշակութային առանձնահատկությունը (ինստիտուցիաների թույլ զարգացվածության պայմաններում) կապվում է մեր մտածելակերպի, ի մասնավորի՝ նորույթների ու փոփոխությունների նկատմամբ մեր ոչ բարյացկամ տրամադրվածության և ավանդություն դարձած ոչ ֆորմալ պրակտիկաները գերադասելու հետ, ինչը մեր կարծիքով՝ կառուցողական ներդրումները խոչընդոտող ևս մի գործոն է.

...Ներդրումների մասով, թափանցիկության մասով՝ խնդիր ունենք ընդհանրապես հանրային գիտակցության, իրազեկության բարձրացման հետ. որովհետև յուրաքանչյուր ներդրում, հատկապես, խոշորածավալ ներդրում, վերաբերվում է, առնչվում է հանրային լայն շրջանակների հետ: Էդ հանրային լայն շրջանակները, եթե իրենք հետաքրքրված չեն ներդրումներով, էդ ինչքան էլ, ինչ օրենք էլ փոխես, ինչ որոշում էլ կայացնես, ինքը չի լինի թափանցիկ, ինքը արդյունավետ չի լինի: Օրինակ, նույն իմ ասած հանրային քննարկումների գերակշիռ մասը մենք տեսնում ենք մի կողմից բնապահպանների, մյուս

կողմից՝ ներդրող՝ տվյալ հանքարդյունաբերող, կամ շենք սարքող և այլն, ու շատ քիչ ենք տեսնում քաղաքացի…

Լրագրող-փորձագետների հետ քննարկման մասնակից

Մտածելակերպի, մշակույթի [հարց է]: …Դժվար ենք ընդունում նոր բաները: Հնդիկները շատ են, պարսիկների ներկայացուցիչներից շատ են… Ասենք, Արաբական էմիրություններում ինը միլիոնից մեկուկես միլիոնն են տեղացիներ, որովհետև միջազգային պետություն ա: Այսինքն, իրանք խրախուսել են ներդրումները… բայց իրանք հաշտվել են էդ կետում, որ տեղացիները քիչ են լինելու: Բայց մենք հաստատ դրանց հետ չենք հաշտվել: Կարող ա՝ ես էլ անձամբ տենց հեշտ չհաշտվեմ, որ Հայաստանում, գիտե՞ք վաղը, մյուս օրը ապրի 10 միլիոն մարդ, որից ընդհամենը 3 միլիոնը հայ ա: …Նույնն էլ, երևի՝ դրսից եկող բիզնեսը: Երբ Carrefour-ը մտավ Հայաստան, սկզբից ես մտածում էի՝ Երևան-Սիթի, բան, դուրս կթռնեն շուկաներից, բայց Carrefour-ը չկարաց մտնի Հայաստան:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Փորձագետները որպես կառուցողական ներդրումներին խոչընդոտող գործոն են նշում նաև ՀՀ աշխատուժի և մասնագետ կադրերի ոչ բավարար արհեստավարժ կարողությունները և տեխնոլոգիական որոշակի ռեսուրսների անբավարարությունը.[117]

…Եթե մենք կորպորացիաների մասին ենք խոսում, ըստեղ ամեն մի էլեմենտով առանձին աշխատանք պիտի լինի: Այսինքն՝ եթե ուզում եք մեկին բերեք, ենթադրենք՝ Սամսունգը ստեղ հեռախոս արտադրի, դա առանձին ծրագիր ա. ոչ մարդ կա, որ դրանով զբաղվում ա, ոչ գիտելիք կա: …Ամեն մեկի հետ աշխատանքը, տարիների աշխատանք ա, եթե ուզում եք կորպորացիաներ բերեն: Քո ներքին շուկան կորպորացիայի համար հետաքրքիր չի…

Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից

…Ընդհանրապես ՀՀ-ում կոռուպցիոն ռիսկերի գնահատման ոլորտը բավականին բաց է, և մեր բուհերը չեն պատրաստում ռիսկերի գնահատողների, և չունենք պրակտիկայում «ռիսկավիկ» կոչվածները, և դա գալիս է հենց կրթությունից: Այսինքն՝ այդ ռեսուրսի տեսանկյունից խնդիրը շատ ավելի խորքային է, քան կառույցը ունի, թե չունի…

Պետական կառույցի ներկայացուցիչ

իմ համար ներդրում ասվածը բոլորովին միայն ֆինանսական ներդրումները չեն: Այսինքն՝ երբ որ մենք խոսում ենք ներդրումների մասին և այսօրվա աշխարհում տեղակայումների մասին, մենք պետք ա հասկանանք, որ ժողովրդավարական գործիքների զարգացումը կամ կրթությունը կամ հենց բուն պետական կառավարման ոլորտում ներգրավված ծառայողների կարողությունների զարգացումը մեծ ներդրում է: Որովհետև եթե մենք չենք ունենում արհեստավարժ կիրառող, ներդրումները որքան էլ լինեն, դրանց արդյունավետությունը, կարծում եմ՝ ցածր կլինի: …Դա կոնկրետ ինձ համար բավականին կարևոր է, որովհետև այնուամենայնիվ, ֆինանս կիրառողը անձն է, և անձի որոշման հիմա վրա է

[117] Global competitiveness index -ի՝ ինստիտուցիոնալ որակի չափման 2019 թ. տվյալների համաձայն՝ 141 երկրների մեջ Հայաստանը գրավում է 62-րդ տեղը, իսկ կարողությունների որակի տեսանկյունից՝ 61-րդ տեղը: Ընդ որում՝ ինստիտուցիոնալ առումով 2017 թ. համեմատ Հայաստանը առաջընթաց է գրանցել՝ 67-րդ հորիզոնականից 61 բարձրանալով, իսկ նույն ժամանակահատվածում ունեցել է կարողությունների նվազում՝ 53-րդ հորիզոնականից 61-ը իջնելով: Աղբյուր՝
GCI 4.0: Pillar 1: Institutions - TCdata360 (worldbank.org); GCI 4.0: Pillar 6: Skills - TCdata360 (worldbank.org)

ուղղվում ներդրումը այս կամ այն ոլորտ: Եթե մենք ունենում ենք գրագետ, այսօրվա աշխարհի մարտահրավերներին ծանոթ կիրառողներ, ապա կունենանք նաև ճիշտ կիրառվող ներդրումներ…

Պետական կառույցի ներկայացուցիչ

Առանձին դեպքերում և հատկապես խոշոր ներդրողների պարագայում լրջագույն խնդիրներից մեկը, որ ծագում է, դա համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունն է: Սրա հետևանքում բիզնեսն արագ կազմակերպելու նպատակով ներդրողները հարկադրված են լինում ոչ օրինական գործարքների մեջ մտնել ենթակառուցվածքներն ապահովող ընկերությունների տնօրենների հետ կամ զանգել "վերևներին".

…Շատ էապես տխուր քեյս էր, երբ որ գտանք ներդրողին Դիլիջանում շատ մեծ պրոյեկտի համար՝ մինչև 1000 հոգու capacity-ով հյուրանոցային համալիրի համար, բայց մեզ օֆիցիալ տեղեկանքով տվեցինք Դիլիջանի քաղաքապետարանից, հետո նաև "Վեղիա ջրից", որ էդտեղ էդ capacity-ով բան դուք չեք կարող անել, որովհետև էդ ճնշման ջրի հնարավորությունները մենք էդտեղ չունենք… Եթե ես գալիս եմ քո երկիր ներդրում անելու, դու պետք ա էն բազային պայմանները [ապահովես]: Դրանք են՝ ջուր, գազ, լույս, ասֆալտ… Դրա համար infrastructure ու դրա հետ related բոլոր թղթաբանությունը՝ construction permit-ներ և այլն [պետք է ապահովել]... Construction permit-ների թվայնացման պրոցես ա հիմա սկսել, որը շատ ողջունելի ա: …Օրինակ, Երևանի քաղաքապետարանում համապատասխան department-ում էս պահի դրությամբ 11 հոգի ա ընդամենը աշխատում էդ ուղղությամբ, այսինքն՝ capacity-ն չի հերիքում… Դրա համար եթե էս ուղղություններով շարժվենք, կարծում եմ բավականին անձնավորվածից դեպի ինստիտուցիոնալ տրանսֆորմացիան կարա լինի:

Վերլուծաբան-փորձագետ

Բաժին 3. Քայքայիչ ներդրումների «մետաստազները» ՀՀ քաղաքական համակարգում

Զարգացող տնտեսությամբ երկրներում ներդրումային կապիտալը կարող է ժողովրդավարության աճը և ամրապնդումը ուժեղացնելու նոր ուղիներ բացել: Ներդրումային կապիտալը կարող է նաև օգտագործվել ընդունող երկրներում ժողովրդավարությունը քայքայելու և կոռուպցիան տարածելու նպատակով, ինչը բխում է ներդրումային գործարքին մասնակից ավտորիտար վարչակարգերի շահերից:[118] Հենց քայքայիչ կապիտալը հայտնվում է ընդունող երկրում, այն դառնում է զորեղ գործիք արտերկրյա քաղաքական ազդեցության համար՝ «կոշտ ուժի» (sharp power) տեսքով: Դա նշանակում է ՁԼՄ-երի, ակադեմիական շրջանակների, մշակութային և քաղաքականության ոլորտների գործիչների և ինստիտուտների կոոպտացիա[119], շահարկում և գրաքննություն[120]: Քայքայիչ կապիտալի օգնությամբ Էլիտաների այդպիսի կոոպտացիան վերջնահաշվում նպատակափոխում է (repurposing) ենթակայացված առաջնորդների կողմից կառավարվող ինստիտուտները՝ ավտորիտար իշխանության նպատակներին ծառայելու համար՝ առանց վարչակարգը փոխելու կամ օտարերկրյա անձնակազմ նշանակելու անհրաժեշտության: Ժողովրդավարական կառավարման ինստիտուտներն իրենք են վերածվում ավտորիտար միջամտության գործիքների: Հարաբերականորեն «համեստ ներդրումներով», որոնք հաճախ կապված են առանցքային դեմքերի օգուտների հետ, և կասկածելի վարկերով, որոնք տրվում են տեղական ռեսուրսների գրավադրման դիմաց՝ ավտորիտար իշխանությունը կարող է թափանցել ժողովրդավարական կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածք և խժռել այն վերևից ներքև[121]:

Վերոբերյալ դիտարկումները սոսկ դատողություններ չեն և հիմնված են տարբեր երկրներում չինական և ռուսական մի շարք կազմակերպությունների կողմից ներդրումային քայքայիչ կապիտալների գործառնության իրական փաստերի վրա: Հատկապես մերձբալթյան երկրներում և Մոլդովայում ռուսական Գազպրոմ կազմակերպության ներդրումային տխրահռչակ փորձառության նկարագրությունը[122] թույլ է տալիս վերստին իմաստավորել և գնահատել այդ կազմակերպության ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում: 1997 թ. Գազպրոմի հետ կնքված ներդրումային պայմանագրերով («Հայգազարդը» դադարեց գոյություն ունենալ և ստեղծվեց «ՀայռուսԳազարդը») Գազպրոմը ոչ թե ակտիվներ է գնել, այլ մատակարարումների կայունության և ներդրումների խոստման հիման վրա ստացել է հայկական գազատրանսպորտային համակարգի կառավարման իրավունք: Հայռուսգազարդի հետագա ռուսաֆիկացման գործընթացը (սկզբնական 45 տոկոս բաժնեմասից 2008 թ-ին 75 տոկոսի

---

[118] Corrosive & Constructive Capital Initiative Flyer: Source: https://www.cipe.org/newsroom/corrosive-constructive-capital-initiative-flyer/

[119] Կաշառակերության կամ մանիպուլյացիայի ենթարկվելու գործընթաց, որի արդյունքում անհատները/ինստիտուտները փոխում են կողմնորոշումը

[120] Deals in the Dark Russian Corrosive Capital in Latin America. By Ruslan Stefanov and Martin Vladimirov: Source: https://www.ned.org/wp-content/uploads/2020/11/Deals-in-the-Dark-Russian-Corrosive-Capital-in-Latin-America-Stefanov-Vladimirov-Nov-2020.pdf

[121] A New Invisible Hand: Authoritarian Corrosive Capital and the Repurposing of Democracy, by Martin Hála: Source: https://www.cipe.org/resources/a-new-invisible-hand-authoritarian-corrosive-capital-and-the-repurposing-of-democracy/

[122] Տե՛ս՝ Gas and Dirty Money. Russian Corrosive Capital in Latvia, by Evija Djatkoviča: Source: https://ceias.eu/gas-and-dirty-money%E2%80%8E-russian-corrosive-capital-in-latvia/;
Russian Economic Footprint in Moldova, by Ion BUTMALAI, Tatiana LARIUSIN, Ion PREAȘCA: Source: https://corrosiveconstructivecapital.cipe.org/wp-content/uploads/2021/04/Russian-Economic-Footprint-in-Moldova-Study.pdf

հասցնելով)՝ իր մութ ու ոչ հրապարակային կողմերով, պայմանավորվածությունների կամայական վերանայումներով ու խախտումներով, ՀՀ համար որոշակի կարևոր քաղաքական իրադարձությունների պահերին (նախագահական կամ ԱԺ ընտրություններ) ի ցույց է դնում դրա իրական քաղաքական-տնտեսական նպատակները:[123] Հայաստանի քաղաքական համակարգի վրա Գազպրոմ կազմակերպության ազդեցության դրսևորումները ակներև են նաև բարձրագույն քաղաքական պաշտոններին սեփական աշխատողներին նշանակելու փաստերում: Ամենացայտունը, թերևս, մինչև Երևանի քաղաքապետի, հետագայում, ՀՀ վարչապետի պաշտոնին հասած Կարեն Կարապետյանի կենսագրությունն է: Մինչև 2010 թ. Երևանի քաղաքապետի պաշտոնին նշանակվելը, Կարեն Կարապետյանը շուրջ 10 տարի գլխավորում էր «ՀայռուսԳազարդ» կազմակերպությունը: 2011 թ-ին քաղաքապետի պաշտոնը թողնելուց հետո նա նշանակվում է Գազպրոմ բանկի փոխնախագահ, իսկ 2012 թ-ին՝ «Գազպրոմ մեժրեգիոնգազ»-ի (որը Գազպրոմ ԲԲԸ-ի 100 տոկոսով դուստր ձեռնարկությունն է) գլխավոր տնօրեն: 2016 թ. սեպտեմբերին նախագահի հրամանով Կ. Կարապետյանը նշանակվում է ՀՀ վարչապետ: 2017 թ. ՀՀ ԱԺ ընտրությունների ժամանակ նա գլխավորում է ՀՀԿ-ի քարոզարշավը՝ չնայած, որ ընդգրկված չէր կուսակցության նախընտրական ցուցակում: 2018 թ. ապրիլին Կարեն Կարապետյանը նշանակվում է ՀՀ առաջին փոխվարչապետ: Նա չէր թաքցնում, որ իրեն տեսնում է ապագա ՀՀ վարչապետի պաշտոնում[124]: Թավշյա հեղափոխությունը, սակայն, խառնեց այդ պլանները: Կարեն Կարապետյանը ներկայումս «Գազպրոմբանկի» տնօրենների խորհրդում զբաղեցնում է խորհրդականի պաշտոնը[125]:

Գազպրոմը շարունակում է ՀՀ-ում մնալ որպես հիմնական «ներդրողներից» մեկը և նախկին իներցիայով շարունակում է միջամտությունը ՀՀ ներքին քաղաքական կյանքին: Լրագրողների տեսախցիկները 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ արձանագրել էին բացահայտ ռուսամետ կողմնորոշում ունեցող ընդդիմության քարոզարշավին Գազպրոմ Արմենիայի աշխատողների կոլեկտիվ ներկայությունը[126]: Հետագայում, 2021թ. ԱԺ ընտրությունների ժամանակ, տարբեր լրատվամիջոցներում շրջանառվեցին նյութեր՝ նույն կազմակերպության կողմից աշխատակիցների վրա ճնշում գործադրելու մասին, որպեսզի քվեարկեն Ռ. Քոչարյանի օգտին[127]:

Մեկ այլ դեպքում լրագրողներն արձանագրել են Երևանի կենտրոնում Կորպորասիոն Ամերիկա կազմակերպության նախագահ Է. Էռնեկյանին պատկանող շենքի (նախկինում՝ ԱԳՆ շենք) վրա կախված «Ազատություն նախագահին» գրությամբ պաստառը, որը կարելի է դիտարկել որպես միջամտություն ՀՀ Վերաքննիչ դատարանի գործունեությանը, այն հիմնավորմամբ, որ պաստառի հայտնվելու պահին հարևանությամբ գտնվող Վերաքննիչ դատարանի շենքում քննվում էր

---

[123] «Հայռուսգազարդի» ռուսիֆիկացման պատմություն, Սամվել Ավագյան: Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/31171

[124] Կարեն Կարապետյանը ՀՀԿ-ից դուրս գալու դիմում է ներկայացրել, Աստղիկ Բեղեյան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/29663321.html

[125] Երեկ չէ առաջին օրը հեռախոսով շնորհավորել եմ. Կարեն Կարապետյանը՝ Սերժ Սարգսյանի հետ կապի եւ ՀՀԿ-ից դուրս գալու մասին, Սյուզաննա Պողոսյան: Աղբյուր՝ https://www.armtimes.com/hy/article/187636

[126] Գազպրոմի աշխատակիցները «կոլեկտիվով» էին եկել Քոչարյանի հանրահավաքին: Աղբյուր՝ https://www.youtube.com/watch?v=xBe3ZyqogFU, https://www.1in.am/2963991.html, https://www.azatutyun.am/a/31315015.html

[127] Քոչարյանը հին մեթոդները գործի է դրել. Գազպրոմ Արմենիա»-ի և «ՀԷՑ»-ի աշխատողներին հրահանգվել է քվեարկել «Հայաստան» դաշինքի օգտին: Աղբյուր՝ https://armbloginfo.ru/%D6%84%D5%B8%D5%B9%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%AB%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%AB-%D5%A7-%D5%A4%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A3/

նախկին նախագահ Ռ. Քոչարյանի հայցադիմումը:[128] Նկատենք, որ Կորպորասիոն Ամերիկա կազմակերպությունը, որի հետ ներդրումային գործարքը կնքվել է Ռ. Քոչարյանի օրոք, կասկածվում է ՀՀ-ում մի շարք կոռուպցիոն գործարքներում թաթախված լինելու մեջ:[129]

Չնայած վերոբերյալ ակներև փաստերին՝ փորձագետ-դերակատարների մի մասը որոշակի դժվարություն ունի օտարերկրյա ներդրումների որակի և ժողովրդավարական համակարգի վրա դրա ուղղակի ազդեցության միջև կապ տեսնելու հարցում: Պատճառաբանությունները մի դեպքում դրանց՝ իրարից տարբեր գաղափարներ լինելն է, ուրիշ դեպքում՝ օտարերկրյա մեծ ծավալի ներդրումների բացակայությունը, երրորդ դեպքում՝ ներդրողների շուկայական միտվածությունը: Այսինքն՝ ներդրողը գումար է ներդնում, որ փող աշխատի ու ոչ թե քաղաքական ազդեցություն ունենա.

Մյ էդ ժողովրդավարությունն ու էդ կապիտալը իրար հետ չեմ կարում կապեմ, անկեղծ ասած: Որովհետև ինձ թվում ա՝ իրանք տարբեր գաղափարներ են իրարից, ու ժողովրդավարությունը կապիտալի ներհոսքի հետ [կապ չունի]:

Պետական կառույցի ներկայացուցիչ

Որպես կանոն՝ ինվեստիցիաները, որոնք ուղղակի գալիս են, որ ազդեցություն ունենան երկրի վրա, շատ քիչ են: Ոչ մեկը, ասենք, 100 միլիոնով փող չի դնի ձեր երկրում, որ հետո ձեր վրա ազդեցություն ունենա: Նա փողը դնում ա, որ փող աշխատի: Այսինքն՝ մենք պետականորեն ուղղորդված ազդեցություն ունենալու համար ինվեստիցիաներ շատ քիչ ունենք: Ես որևէ մեկին էդ տրամաբանությամբ չեմ հիշում.

Վերլուծաբան-փորձագետ

...Մեծ ֆինանսական միջոցներ կան, որտեղ ֆինանսական հատվածը բանկերում, բան փող ունեն, կապիտալ ունեն, բայց մյուս կողմից՝ մեր բանկային համակարգը քաղաքականությամբ չի զբաղվում: Էս մասով ռիսկ էլ չունենք: Քաղաքականությամբ եթե չենք զբաղվում, նշանակում ա՝ մեր գործից էն կողմ մեր միջոցները չենք ուղղում, որ, չգիտեմ, էնտեղ ինչ-որ պրոցեսների վրա ազդել և այլն, ժողովրդական բանի վրա: ...Հայաստանի բանկային համակարգը կամ բանկերը քաղաքականությամբ չեն զբաղվում... Կարող ա՝ այլ երկրներում լինեն, բայց մեզ մոտ դա չկա...

Գործարար միության ներկայացուցիչ

Այդուհանդերձ, բանասացների մեկ այլ փոքրաթիվ խումբ հստակ տեսնում է ժողովրդավարական համակարգի վրա ներդրումների որակի ազդեցության հնարավորությունը, հիշատակում է ՀՀ-ում դրա հետ կապված կոնկրետ պրակտիկաներ և ուշադրություն է հրավիրում այդ ազդեցությունը թուլացնելու կամ բացառելու հնարավոր լուծումների վրա.

...Ռուսական առանձին ընկերություններ՝ Գազպրոմը, օրինակ, լինելով օտարերկրյա ներդրող, լիարժեք ընկնում ա քայքայիչ կապիտալ հասկացության տակ: Տարիներ շարունակ մենք ականատես ենք եղել՝ ինչպես են աշխատակիցները, հազարավոր աշխատակիցներ, քաղաքական նպատակներով

---

[128] Թալանի ընկերները կամ Էռնեկյանի աջակցությունը Քոչարյանին: Աղբյուր՝ https://www.1in.am/2404709.html

[129] Տե՛ս նույն տեղում:
Տարբեր երկրներում կազմակերպության կոռուպցիոն գործարքների մեջ թաթախված լինելու մասին տե՛ս նաև՝ Արգենտինայում խուզարկություն է իրականացվել գործարար Էդուարդո Էռնեկյանի տանը և կազմակերպությունում: Աղբյուր՝ https://www.tert.am/am/news/2018/12/20/eurnekian/2878014

օգտագործվում ընտրությունների ընթացքում, քաղաքական ինչ-ինչ ազդեցությունների, գործընթացների մեջ են ներգրավվում: Բայց մյուս կողմից՝ օրինակ, մենք ունենք Վեղիա ջուրը, որը ևս կոնցեսիոն կառավարմանն ա հանձնված՝ մենք չունենք էդ ազդեցությունը: Վեղիա ջուրը, օրինակ, ներգրավված չի եղել քաղաքական գործընթացների մեջ:

Վերլուծաբան-փորձագետների հետ ՖԽՔ մասնակից

...Էտ մեծ հոսքերը [Օտարերկրյա կապիտալը]՝ իրենք կարան վերածվեն քաղաքական կապիտալի ու որոշումները թելադրվեն դրանից: Լավագույն օրինակը Ադրբեջանի օրինակն ա: Այնտեղ, ասենք, չգիտեմ, British Petroleum-ը էնքան մեծ մասնաբաժին ունի իրանց նավթային սեկտորում, որ ցանկացած որոշում էլ, եթե ուզի, կարա անցկացնի և՛ պառլամենտում, և՛ մնացած տեղերում:

Պետական կառույցի ներկայացուցիչ-էքսպերտ

Մենք չունենք [քայքայիչ ներդրումների դեմ կարգավորումներ], և ամենակարևորը՝ մենք չենք էլ հասկանում, որ դա պետք ա լինի...

Վերլուծաբան-փորձագետ

Քննարկվող տեսանկյունից փորձագետներից մեկի կողմից արտահայտված ուշագրավ դիտարկում էր այն, որ ժողովրդավարությունը ոչ միայն կարող է լինել ախտահարման թիրախ, այլև օգտագործվել որպես միջոց՝ քայքայիչ կապիտալը տարածելու համար: Որպես այդ դիտարկման հիմնավորում՝ ներկայացվում է այն իրողությունը, որ հայաստանյան հանրության շրջանում թյուր ընկալում կա, թե ժողովրդավարությունը դա միայն ժողովրդավարական ընտրություններն են: Սա վերջնահաշվում նվազեցնում է իշխանությունների գործողությունների նկատմամբ հետաքրքրությունը և վերահսկողությունը, ինչից կարող է օգտվել քայքայիչ կապիտալը.

Ամենամեծ խնդրահարույց տեղը դա էն ա, որ կոռոզիվ կապիտալը մեծ հնարավորություն ունի օգտագործել ժողովրդավարությունը: ...Շատ պարզ՝ կոռուպցիայի ամենավատ տեսակը դա ընտրությունների քվեարկության վրա ազդեցությունն ա... Երբ որ քո ժողովրդավարությունը հիմնված չի էն համակարգի վրա, այլ ձևական ֆենոմենի վրայա, կոռոզիվ կապիտալը դառնում ա ամենամեծ օգտագործումը: ...Էսօր Տաշիրը և ՀայՌուսգազարդը կարողա մեկ էլ Վեղիան, հա՞, իրանք կարող են կանխորոշել ցանկացած արդար ընտրության հետևանք: Եվ իրականում էդ ընտրությունը կլինի արդար: Ու այ էդ կապը տեսնել՝ Զանգեզուրի գործողությունների կամ Տաշիրի գործողությունների և ընտրությունների, ինքը՝ հասարակությունը, էդքան պատրաստ չի: ...Ընդեղ ա էդ պրոբլեմը գոյանում, որ ժողովրդավարությունը դառնում ա գործիք... Կոռոզիվ կապիտալը շատ հեշտ կարողանումա դա ապահովել, որովհետև, եկեք մեկ ամիս ձեզ ամեն օր երկու ժամով լույսը անջատեն, ու դուք մեծ սիրով կգնաք, դեմ քվեարկեք տվյալ քաղաքապետին՝ առանց հասկանալու...

Վերլուծաբան-փորձագետ

Բաժին 4. Ուկրաինայում ընթացող պատերազմով պայմանավորված ներդրումային զարգացումները ՀՀ-ում

2022 թ. փետրվարի 24-ին «ապառազմականացման և դենացիֆիկացման գործողության» մասին հայտարարությամբ Ռուսաստանի դաշնությունը պատերազմ սկսեց Ուկրաինայի դեմ: Պատերազմի բռնկումից դեռ 2 օր առաջ, ՌԴ կողմից Դոնեցկի և Լուգանսկի ինքնահռչակ պետությունների ճանաչման պատճառով, իսկ այդուհետ պատերազմ սանձազերծելու համար ԱՄՆ-ն, Ճապոնիան և արևմտյան եվրոպայի մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի և պատերազմում նրան նյութատեխնիկական աջակցություն ցուցաբերող Բելոռուսի դեմ[130]: Այդ պատժամիջոցների հետևանքում, ինչպես նաև պատերազմական գործողությունների տարածք դառնալու պատճառով Ուկրաինայում, Բելոռուսում և ՌԴ-ում բազմաթիվ գործարար հաստատություններ և մասնավոր ձեռներեցներ, փակման վտանգից խուսափելու նպատակով, սկսեցին իրենց բիզնեսները և դրամական միջոցները այլ երկրներ տեղափոխելու ուղիներ փնտրել, այդ թվում՝ դեպի Հայաստանի հանրապետություն: ՀՀ համար ստեղծվեց երկակի վիճակ՝ մի կողմից օտարերկրյա նոր ներդրումներ ներգրավելու հնարավորության, մյուս կողմից՝ քայքայիչ կապիտալի ներթափանցման սպառնալիքի հեռանկարի տեսանկյունից:

Վերոհիշյալ իրադարձությունների հետևանքում անցած վեց ամիսների ընթացքում դեպի Հայաստան օտարերկրյա բիզնեսների և ներդրումային հոսքերի իրական քանակի և միտումների մասին պատկերացում կազմելը, սակայն, դժվարանում է՝ պաշտոնական վիճակագրական հրապարակային տվյալների բացակայության պատճառով: ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակած վերջին տվյալները վերաբերում են 2022 թ. առաջին եռամսյակին: Երկրորդ եռամսյակի տվյալները դեռ մշակման ու ամփոփման փուլում են և ենթակա չեն հրապարակման: Նման իրավիճակում մնում է ապավինել տարբեր անկախ հետազոտական կազմակերպությունների և փորձագիտական շրջանակների ուսումնասիրություններին ու հաղորդումներին, ինչպես նաև՝ ԶԼՄ հրապարակումներին:

Տարբեր ուսումնասիրություններից և ԶԼՄ հրապարակումներից տեղեկանում ենք, որ բիզնեսներ և ներդրումային հոսքեր ՀՀ թափանցում են հիմնականում ՌԴ-ից և Բելոռուսից և ուղղվում են գլխավորապես ՏՏ, շինարարության և հագուստի արտադրության ոլորտները[131]: Այդ մասին են վկայում նաև հետազոտությանը մասնակից էքսպերտներն ու առանցքային տեղեկատուները.

…Ռուսաստանից եկող բիզնեսը հիմա շատ ա փորձում ստեղ ներդրում անի՝ զուտ էտ իրանց սանկցիաներից խուսափելու համար… Օրինակ, թեկուզ գան ստեղ, հումք առնեն Եվրոպայից, բերեն ստեղ, արտադրեն, արտահանեն Ռուսաստան[132]: Իրանք հակված են ինչ-որ ձևով շրջանցել էդ

---

[130] Պատերազմ Ուկրաինայում. թարմացվող. Աղբյուր՝ https://www.infocom.am/hy/Article/78812; Ռուսաստանի դեմ պատժամիջոցները փետրվարի 23-ի դրությամբ. *Հրաչ Մելքումյան*. Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/31718653.html; ԵՄ-ն հաստատեց Ռուսաստանի դեմ պատժամիջոցների վեցերորդ փաթեթը, Գեւորգ Ստամբոլցյան. Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/31877053.html

[131] Փորձագիտական հարցազրույցներ, Armstat.am/Foreign investments: Աղբյուր՝ https://armstat.am/en/?nid=14

[132] 2022թ. օգոստոսի 31-ին The Moscow Times թերթում տպագրված մի հոդվածում կարծես հաստատվում է Հայաստանի՝ որպես վերաարտահանող (reexporting) երկրի վերածվելու հնարավոր վարկածը: Տե՛ս՝ Armenian

սահմանափակումները՝ չնայած ոչ բոլոր ապրանքներն են արդյունքում սանկցիաների տակ… Այսինքն՝ եթե պիտի գան, Իտալիայից կտոր ներմուծեն, ստեղ հագուստ արտադրեն, տանեն Ռուսաստան, ստեղ պիտի թողենք տենց բիզնեսներ աշխատեն, որովհետև սանկցիայի տակ չի: Օրինակ, IT բիզնեսները գալիս են: Իրանք Եվրոպայի հետ են աշխատում, ծրագիր են անում Ռուսաստանից Եվրոպայի կամ արևմուտքի համար, հիմա Հայաստանից:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Քանի որ մենք ենք ծագումը որոշում [ծագման վկայագիրը տրամադրում], հիմա շատ է պահանջը տարբեր երկրներից, հիմնականում՝ Ռուսաստանից, որպեսզի Հայաստանով ինչ-որ բաներ արտադրեն ու տանեն ինչ-որ տեղեր, վաճառեն: Հիմա առաջին հերթին ստացվում է, որ շատ գործարարներ գալիս են առաջինը մեզ մոտ, որպեսզի հասկանան՝ հայկական ապրանքի ծագում կստանան, թե՝ ոչ…

Պետական կառույցի ներկայացուցիչ

Ըստ վիճպետկոմի տվյալների՝ 2022 թ. փետրվար-մարտ ամիսներին միայն ՌԴ-ից մոտ 150.000 մարդ է տեղափոխվել Հայաստան[133]: Ծանթ ՀԸ-ն, հղում անելով էկոնոմիկայի նախարարին և պետական ռեգիստրի տրամադրած տվյալները, հաղորդում է, որ Ռուսաստանի քաղաքացիները այս ընթացքում Հայաստանում բացել են շուրջ 1200 կազմակերպություններ, շուրջ 70 000 քաղաքացիներ օգտահաշիվներ են բացել տարբեր բանկերում[134]: Ըստ էկոնոմիկայի փոխնախարարի՝ 2022 թ. փետրվար-օգոստոսին ՀՀ գրանցված շուրջ 20 000 ընկերությունների մի մասը Ռուսաստանից են[135]: Հետք Մեդիա գործարանի՝ ՌԴ-ից 300 վերաբնակեցվածների շրջանում արված հարցումներից պարզվել է, որ նրանց 8 տոկոսը Հայաստան է տեղափոխվել գործատու կազմակերպության տեղափոխության հետևանքում կամ ԱՁ բացելու հնարավորություն տեսնելու պատճառով[136]: Հետքի անցկացրած մեկ այլ ուսումնասիրության համաձայն՝ 2022 թ. հունվար-մայիս ամիսներին Հայաստան է փոխանցվել շուրջ 679մլն դոլար տրանսֆեր, որի ստացողները հիմնականում Հայաստան տեղափոխված ՌԴ քաղաքացիներն են[137]: Փորձագետների կարծիքով՝ այդ գումարների զգալի մասը կապիտալ է, որը Հայաստան է տեղափոխվում ամերիկյան և եվրոպական պատժամիջոցներից խուսափելու պատճառով[138]: Արմինֆո լրատվական գործակալության տնօրեն և գործարար Էմանուիլ Մկրտչյանը ՌԴ-ից Հայաստան բիզնեսների տեղափոխվելը և դրամական հոսքերի հանգամանքը պատճառաբանում է

Trade With Russia Raises Re-Export Questions https://www.themoscowtimes.com/2022/08/31/armenian-trade-with-russia-raises-re-export-questions-a78692

[133] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-ապրիլին» 5. սոցիալ-ժողովրդագրական հատված, 5.1. Ժողովրդագրական իրավիճակը: Աղբյուր՝ sv_08_21a_510 .docx (armstat.am)

[134] «Պուտինը կոչ է արել Հայաստան տեղափոխված ռուսաստանցիներին վերադառնալ հայրենիք»: Աղբյուր՝ https://www.youtube.com/watch?v=wgYU6CSAJ5Y

[135] «Ռուսաստանցիները Հայաստանում 2 000 ընկերություն են գրանցել. Էկոնոմիկայի փոխնախարար», Օգոստոս 2022: Աղբյուր՝ https://www.civilnet.am/news/672389/

[136] "We didn't feel like we were in our country": why Russians are resettling in Armenia, 2022: Source: https://mediafactory.am/russians_ressetling_in_armenia/

[137] Հերգնյան Ս., «Ռուսաստանից ռեկորդային ծավալի գումարներ են փոխանցվում Հայաստան», 2022: Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/146730

[138] Հերգնյան Ս., «Ռուսաստանից ռեկորդային ծավալի գումարներ են փոխանցվում Հայաստան», 2022: Աղբյուր՝ https://hetq.am/hy/article/146730 , նաև այլ հարցում

«Խաղաղ նավահանգստի էֆեկտով» (a Quiet Harbor Effect): Այսինքն՝ Հայաստանը դարձել է մի երկիր, որտեղ և որի միջոցով կարելի է շարունակել տնտեսական ակտիվությունը[139]:

Այդուհանդերձ, որոշ փորձագետներ զգուշանում են պատժամիջոցների ենթակա երկրներից Հայաստան թափանցող միջոցները ներդրումներ անվանել՝ համարելով, որ դրանք ընդամենը հոսքեր են, և իրենք որևէ լուրջ ներդրման մասին չեն լսել.

Ես չեմ կարող դրանց անվանել ներդրումներ, որովհետև այս պահի դրությամբ դեռ չունեմ ստատիստիկա… Ավելի շատ հոսքեր էին… Նախ՝ ինչ-որ մի պերիոդ էր, որից հետո երբ որ Ռուսաստանը սահմանափակումների տակ դրվեց, էդ գումարները պրոստը անհնար էր ուղղակի դուրս բերել: Էլ չեմ ասում, որ բանկերը հերթով ընկան սանկցիաների տակ: Էս պահին ես չգիտեմ էտպիսի ներդրում, որ ինչ-որ տենց լուրջ ներդրում արվի…

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Էդ ամեն ինչը ներդրողների տեսանկյունից եթե դիտարկենք՝ բավականին խնդրահարույց ա ներդրումների անվտանգության համար: Ու եթե էսօր Հայաստանում որոշակի դրական տեղաշարժեր կան, դա էլ մի ուրիշ պատերազմով ա պայմանավորված: …Ռուսական ներդրումները Հայաստանում տեղայնացվում են, այսինքն՝ որոշակի պահի խնդիր են լուծում ռուսները՝ Հայաստանում կազմակերպություններ հիմնադրելով, իրենց աշխատուժը Հայաստան բերելով: …Թե դրանք որքանով կհիմնավորվեն Հայաստանում, ու որքանով կարող ենք դրանց ազդեցությունը դրական գնահատել, էս պահի դրությամբ կվախենամ ինչ-որ գնահատականներ տալ…

Պետական կառույցի ներկայացուցիչ

Հարցազրույցներին մասնակից առանցքային տեղեկացվածները և փորձագետները վերոհիշյալ ներդրումային հոսքերը, մեղմ ասած, միանշանակ դրական երևույթ չեն դիտում: Նրանցից մեկի ձևակերպմամբ՝ մենք կանգնած ենք «կորոզիվ կապիտալի մուտքի դարպասների մոտ» և անհրաժեշտ է որոշակի անվտանգության քայլեր ձեռնարկել: Քայքայիչ կապիտալի (տվյալ դեպքում՝ պատժամիջոցների ենթակա կապիտալի) թափանցման դեմ իրականացվող միջոցառումների մասին խոսելիս հարցվողները՝ որպես վերահսկող հիմնական հաստատություններ, նշում են բանկերը և բանկային կազմակերպությունները: Բանկերի ներկայացուցիչները իրենց հերթին խոսում են ստեղծված իրավիճակում գոյություն ունեցող մեխանիզմների առավել հետևողական և խստացված կիրառման մասին, ինչը մի շարք փորձագետների կարծիքով երբեմն հասնում է ծայրահեղության.

Փողերի ծագման աղբյուրը մենք միշտ ենք նայում՝ անկախ էս բանից [սանկցիաներից]… Դա փողերի լվացման կարգով ա, այսինքն՝ մենք միշտ պետք ա իմանանք, թե որտեղից ա գումարը ծագել ու չունի արդյոք, չգիտեմ, տեռորիստական, ենթադրենք, նպատակ, օվշոր-մովշոր:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

…Ես տեսնում եմ, որ կենտրոնական բանկը բավականին խիստ է կարգավորում վայուտայի հոսքը: Ես տեսնում եմ, որ բանկերը բավականին պատասխանատու են մոտենում: Միգուցե տեղեր կան, որ Հռոմի Պապից ավելի կաթոլիկ են ուզում երևալ: Ես կարծում եմ՝ մեկ-մեկ նույնիսկ արդեն չափն են անցնում…

[139] Мкртчян Э. ″Армения тихая гавань для российского бизнеса″, 2022, 1:28 -1:52 րոպե: Աղբյուր՝ https://www.youtube.com/watch?v=-mve5Mo6puw

Փոխանցում եմ փոքր ուզում անել, երբեք ինձ չեն հարցրել, բայց հարցնում են՝ ինչ նպատակով… Բայց ինչի" են չափն անցնում. որովհետև կենտրոնական բանկն է էդպես խիստ կարգավորումներ մտցնում:

Պետական կառույցի ներկայացուցիչ

Կենտրոնական բանկը տվել է որոշակի կարգավորումներ էն իմաստով, որ կենսական շահերը պիտի լինեն Հայաստանում… Թե ինչ կրիտերիաների դեպքում կսպասարկենք էս-էս բիզնեսներին, [որոշումը] կայացվել է բանկերի վարչությունների կողմից… Նույնիսկ եղել են բանկեր, որոնք էնքան էն խստացրել, որ համարյա ոչ մեկ չի գնացել էնտեղ: Բայց կարամ ասեմ, որ բանկերը, երևի, ամենազգուշավորն են եղել ու էնպիսի կրիտերիաներ են դրել, որ պետք է շատ նորմալ հաճախորդ լիներ, որ գար կոնկրետ բանկ:

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Բանկային ոլորտի տեղեկատուների հետ հարցազրույցներից տպավորություն է ստեղծվում, թե բանկերի կողմից խստացված ու հետևողական միջոցառումներ իրականացնելու խթանը, ոչ թե քայքայիչ կապիտալի թափանցման ու գործառնության հնարավորությունը նվազեցնելու ձգտումն է, այլ պատժամիջոցների տակ չընկնելու մտահոգությունը.

…Ցանկացած գումար, որ գալիս ա Հայաստանի Հանրապետություն, պետք ա լինի միջազգային, արևմտյան երկրների կողմից սանկցիաների, թույլատրելի սանկցիաների շրջանակներում, Ռուսաստանի Հանրապետության կողմից սահմանված թույլատրելի սանկցիաների շրջանակներում, որովհետև երկու կողմերից էլ սանկցիաներ կան… Այսինքն՝ մաքուր, բացահայտ աղբյուրներից ստացված կապիտալի, ցանկացած կապիտալի մուտքը ցանկալի է, կարծում եմ:

Գործարար միության ներկայացուցիչ

Եթե օգնենք, որ սանկցիաները շրջանցեն, կարող ա մենք՝ ինքներս հայտնվենք պատժամիջոցների տակ՝ թե՛ երկիրը, թե՛ բանկերը: Ու կարող ա մի բանկի պատճառով բոլոր բանկերը հայտնվեն պատժամիջոցների տակ…

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Չնայած խստացված անվտանգության միջոցառումներին՝ որոշ հարցվողներ, այնուամենայնիվ, մատնացույց են անում սանկցավորված հոսքերի ներթափանցման մի քանի հնարավոր զարտուղի տարբերակներ կամ սողանցքեր.

Դեպքեր կա, գիտեմ, որ արտահանողները կամ ներմուծողները ծագման երկրի վերաբերյալ սերտիֆիկատները վերցնում են: …Ծառայությունները, պատկերացրեք, որ ավելի դժվար վերահսկվող ա, որովհետև կարա հայկական կազմակերպությունը ծառայություն առնի ռուսական կազմակերպությունից, ծախի եվրոպական ինչ-որ կազմակերպության: Առաջ էլ կարար սենց լիներ, հիմա կարող ա՝ դա շատացել ա: Իսկ ո՞վ ա կարողանալու ֆիքսել, որ ստեղի կազմակերպությունը ֆիկտիվ ա, կամ ֆիկտիվ չի, եթե ունի տնօրեն, տնօրենը պայմանագիր ա կնքել ռուսական կազմակերպության հետ, ծառայությունը առնում ա, ծախում ա գերմանական կազմակերպությանը:

Պետական կառույցի ներկայացուցիչ

[Օֆշորային գումարները] պարտադիր չի՝ բանկով գան, կարա ինչ-որ մեկը օվշորից իր գումարները cash-ով վերցնի ու գա Հայաստան: …Երևի թե, պետք ա, ոնց որ արիոպորտում փորձել հասկանալ, թե

որտեղից էս մարդուն էսքան cash: Կամ կարա էդպես լինի, որ, չգիտեմ, ինչ-որ կազմակերպություններ ձևակերպվեն, ու էնքան փոքր-փոքր գումարներ լինի, որ աչքի համար չնկատվի…

Բանկային ոլորտի ներկայացուցիչ

Հարցազրույցներին մասնակից առանձին փորձագետներ կարևորում են հատկապես ՀՀ էկոնոմիկայի նախարարության արագ և ադեկվատ արձագանքը ստեղծված իրավիճակում: Ի մասնավորի՝ նշվում է առցանց տարբեր հարթակներում տեղեկացման և արագ արձագանքման հարթակների բացումը.

…Օրինակ, Էկոնոմիկայի նախարարությունը արագ արձագանքեց ռուսական ներհոսքին՝ մարդկանց ու հնարավոր կապիտալին… Ինչ-որ հարթակներ ստեղծեցին, ինչ-որ մարդ նշանակեցին նախարարությունում, ով զբաղվում է այդ հարցերով… Այդ տեղեկատվական աջակցությունը, որ նախարարությունը թեկուզ այդ սկզբի շրջանում արեց, այդ ակտիվ գործողությունները… շատ մեծ քայլ էր, անհրաժեշտ քայլ էր… Ամենապրիմիտիվ քայլը, հա՞ Տելեգրամ ալիքներում Էկոնոմիկայի նախարարությունը շատ ակտիվ շփվում էր պոտենցիալ Հայաստան ժամանող այդ IT ժողովրդի հետ: Նախարարը մի քանի անգամ թեկուզ հենց այդ Տելեգրամ միջավայրում պատասխանում էր ռուսների հարցերին, որոնք պլանավորել են, որ պետք է գան Հայաստան: …Այդ տեղեկատվական աջակցությունը, որ նախարարությունը անում էր, իմ գնահատմամբ՝ դա շատ կարևոր է: Հիմա կարելի էր ավելի համակարգված անել դա:

Պետական կառույցի ներկայացուցիչ-փորձագետ

Եզրակացություններ

Քանի որ մեր ուսումնասիրության վերջնանպատակը Հայաստանում կառուցողական կապիտալի թափանցման և ծավալման համար նպաստավոր և խոչընդոտող գործոնների բացահայտումն է, իսկ գործոնները որոշակի իմաստով հետագա գործողությունների ազդակներ են, հիմնվելով իրականացված հետազոտության արդյունքների վրա՝ մենք առանձնացրել ենք ազդակների երկու խմբեր, որոնք պայմանականորեն անվանել ենք *դրական* և *բացասական*.

Դրական ազդակներ

- Թեկուզ և առանց քայքայիչ ու կառուցողական կապիտալի հղացքի (concept) ձևակերպման՝ ՀՀ ներկայիս իշխանությունների ձեռնարկումներում առկա է որոշակի հակում և միտում՝ օտարերկրյա ներդրումների համար հավասար մրցակցային պայմաններ ապահովելու, շուկան ապակենտրոնացնելու, ներդրողների շահերը առավել պաշտպանված դարձնելու ուղղությամբ: Դրա մասին է վկայում հատկապես նոր մշակվող Ներդրումային հայեցակարգը[140]:
- Բիզնես միջավայրի բարելավման քայլերի իրականացում օրենսդրական մի շարք փոփոխությունները (այդ թվում՝ բիզնեսը գրանցելու գործընթացի հեշտացումը)[141],
- Որոշակի ինստիտուտների ստեղծումը՝ Ներդրումների աջակցման կենտրոն-Էնթրփրայզ Արմենիա-ի[142] և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծումը:
- Համեմատաբար կայացած բանկային համակարգը, որը հետազոտությանը մասնակից փորձագետ-դերակատարների դիտարկմամբ՝ Ուկրաինայում տեղի ունեցող պատերազմի ժամանակահատվածում բավականին հաջողությամբ է դիմագրավում քայքայիչ կապիտալի հնարավոր թափանցման փորձերին:
- Թեկուզ և Հայաստանը դասվում է *հիբրիդային ժողովրդավարական* երկրների շարքը՝ վերջին տարիներին նկատելի է ժողովրդավարական քաղաքական համակարգի բարելավման որոշակի միտումներ, ինչը արձանագրվել է միջազգային տարբեր կառույցների կողմից, ինչպես նաև տարբեր ինդեքսներում:
- Ըստ միջազգային տարբեր հետազոտությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների դիտարկումների՝ ինստիտուցիոնալ և մասնագիտական կայացման որոշակի աճի միտումներ են գրանցվել քաղաքացիական հասարակությունում:
- Միջազգային կազմակերպությունների աջակցությունը՝ ներդրումային հայեցակարգը մշակելու, օրենսդրությունը բարեփոխելու, ներդրումային միջավայրը բարելավելու ուղղությամբ:

Բացասական ազդակներ

- ՀՀ-ում իրականացվող տնտեսական, այդ թվում՝ ներդրումային քաղաքականությունը ուղղակիորեն չի բխում հայեցակարգերից և ավելի շատ կախված է օրվա իշխանությունների կողմից կարևորվող առաջնահերթություններով: Այդպիսի ձևական

[140] International Development Group LLC "Invest Reform Roadmap for Armenia", 2022. Source: https://www.mineconomy.am/media/20003/Investment%20Reform%20Roadmap%20for%20Armenia.pdf
[141] International Development Group LLC "Invest Reform Roadmap for Armenia", 2022. Source: https://www.mineconomy.am/media/20003/Investment%20Reform%20Roadmap%20for%20Armenia.pdf
[142] Enterprise Armenia, "Our mission". Source: https://enterprisearmenia.am/en

ճակատագիր է ունեցել 2015 թ. հայեցակարգը և ըստ հարցված փորձագետների և առանցքային տեղեկատուների մեծ մասի՝ այդպիսի ճակատագիր կարող է ունենալ նաև նոր մշակվող հայցեակարգը: Նման հեռանկարի «օգտին է» խոսում նաև Ներդրումային հայեցակարգերից և դրա հիմնադրույթներից հարցվածների մի զգալի հատվածի անտեղյակությունը:

- Մրցակցային հավասար պայմանների ապահովմանը կոչված պետական որոշակի ինստիտուտների ու ձեռնարկումների ընտրողական-խտրական բնույթը: Հարցվողները հատկապես թիրախավորում են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) ընտրողական գործունեությունը, դրա պետական կառույց լինելու հանգամանքը, ինչը նվազեցնում է կառույցի անաչառ գործունության հնարավորությունը: Հարցվողները ուշադրություն են հրավիրում նաև ներդրողներին ՀՀ կառավարության կողմից հատուկ աջակցություն ցուցաբերելու ջանքերի հետևանքում շուկայական միջավայրում առաջացած մրցակցային խնդիրների վրա:
- Հավասար մրցակցության սկզբունքը ոչ քիչ դեպքերում խախտվում է այն պատճառով, որ պատկան կառույցները աչք են փակում որոշ կազմակերպությունների ոչ թափանցիկ ու ոչ հաշվետու գործելաոճի նկատմամբ, ինչի հետևանքում թափանցիկ ու հաշվետու գործելաոճ որդեգրած կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք հայտնվում են նվազ մրցունակ դիրքերում: Հավասար մրցակցության սկզբունքը խախտվում է նաև որոշ կազմակերպությունների արտոնություններ տրամադրելու, բյուջեից սուբսիդիաներ տրամադրելու արդյունքում:
- Առանձին ուշադրության առարկա է պետական տարբեր գերատեսչությունների գործառույթների հստակ բաշխվածության բացակայությունը մի կողմից, տարբեր կառույցների միջև համագործակցության և տեղեկատվության փոխանակության մեխանիզմների բացակայությունը՝ մյուս կողմից:
- Հստակությունը բացակայում է նաև ներդրումային կազմակերպություն կամ ֆիզիկական անձ գրանցելու կանոնակարգերում, ինչը հաճախ պատճառ և առիթ է դառնում բյուրոկրատական քաշքշուկների համար՝ հետևաբար, առիթ ստեղծում գործընթացներն արագացնելու ոչ ֆորմալ քայլեր նախաձեռնելուն:
- Ուշադրության արժանի հիմնախնդիրներից է գնումների գործընթացի թափանցիկությունը և հանրային հաշվետվողականության հարկադրման մեխանիզմների բացակայությունը:
- Մեկ այլ ուշարժան խնդիր է ներդրումային միջավայրի վերաբերյալ ընդունվող պետական որոշումների նախագծերի՝ շահառու անձանց հետ քննարկման փաստացի գործող մեխանիզմների բացակայությունը:
- Հարցվողները օտարերկրյա ներդրումները խոչընդոտող կարևոր գործոններից են նշում նաև պատկան կառույցներում որակյալ կադրերի բացակայությունը:
- Որպես արդյունավետ ներդրումների թափանցումը խոչընդոտող գործոններ են նշվել՝ ՀՀ-ում տարբեր հեռանկարային ոլորտների համար պահանջվող աշխատուժի մասնագիտական անհամապատասխան որակը:
- Արդյունավետ և նորարար ներդրումների թափանցումը խոչընդոտող կարևոր գործոն է բազային տեխնոլոգիական կարողությունների բացակայությունը, հատկապես՝ արտադրության ոլորտում:
- Խոչընդոտների թվում նշվում են նաև նպաստավոր ներդրումային միջավայր ապահովելուն կոչված օժանդակ ենթակառուցվածքների բացակայությունը կամ անբավարարությունը (խմելու ջրի մատակարարում, ճանապարհներ և այլն):
- Քաղաքացիական հասարակության մասով բարձրացված խնդիրները հիմնականում կապված են գործարար միությունների մեծ մասի, ըստ էության, ձևական գոյության հետ:

Փորձագետ-դերակատարների դիտարկմամբ՝ այդ կազմակերպությունները պասիվ դերակատարություն ունեն գործարար համայնքներում առկա խնդիրները պատկան կառույցների համար ինստիտուցիոնալ ճանապարհով փոխանցելու, ինչպես նաև հանրայնացնելու առումով: Գրեթե բացակայում է ՁԼՄ-ների հետ այդ միավորումների հաղորդակցությունը:

- Որպես կառուցողական կապիտալի թափանցմանը խոչընդոտող գործոն՝ հիշատակվում է դերակատար հաստատություններում և, առհասարակ, հանրության լայն շրջանակներում իշխող անբարյացակամ տրամադրությունները փոփոխությունների հանդեպ, ինչը դժվարեցնում և ձգձգում է բարեփոխումների արագ իրագործումը:
- Ֆոկուս խմբային քննարկումներում և փորձագիտական ու առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներում օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից առավել հաճախ բարձրաձայնվող մտահոգությունները կապված են դատական համակարգի գործունեության հետ: Ընդ որում, առավել հաճախ մատնացույց է արվում ոչ թե կայացվող վճիռների արդրարացիությունը, այլ դատական գործերի ձգձգումը, որը հաճախ տարիներ է տևում:
- Քաղաքական միջավայրի առումով բացասական ազդակ կարելի է համարել հանրության շրջանում ժողովրդավարության մասին սահմանափակ ընկալումները, ի մասնավորի՝ ժողովրդավարությունը հիմնականում որպես ժողովրդավարական սկզբունքներով ընտրություններ անցկացնելու մասին ընկալումը:
- Քաղաքական միջավայրի առումով բացասական ազդակ է համարվում նաև ներքաղաքական անկայունությունը, մասնավորապես՝ արտահերթ ընտրությունների անցկացումը: Այս և վերոհիշյալ այլ գործոններ ոչ միայն նվազեցնում են ՀՀ-ում օտարերկրյա ներդրողների՝ երկարաժամկետ ներդրումներ անելու ցանկությունը, այլև ներդրումային պոտենցիալ ունեցող ոլորտները «ազատում են» քայքայիչ ներդրումների համար:
- Ֆոկուս խմբային քննարկումները, առանցքային տեղեկատուների և ոլորտի փորձագետների հետ անցկացված հարցազրույցները, ինչպես նաև պետական որոշ պաշտոնյաների հրապարակային հայտարարությունները վկայում են «ցանկացած ներդրման» անհրաժեշտության և «վատ ներդրումներ չկան» գերիշխող դիրքորոշման մասին: Այդ խնդրահարույց դիրքորոշումը հաճախ հիմնավորվում կամ արդարացվում է ներքոբերյալ գործոններով.
    - ՀՀ հետ երկու հարևան երկրների թշնամական հարաբերությունների պատճառով սահմանային հաճախակի կրկնվող ռազմական միջադեպերը, նույն պատճառով բեռնափոխադրումների համար անհրաժեշտ տարանցիկ ճանապարհների սահմանափակ հնարավորությունները նվազեցնում են կառուցողական ներդրումների համար ՀՀ գրավչությունը և այն դարձնում ռիսկային միջավայր:
    - ՀՀ-ն փաստացի գտնվում է ՌԴ աշխարհաքաղաքական ազդեցության գոտում, ԱՊՀ, իսկ 2015 թ-ից նաև ՌԴ գլխավորությամբ ստեղծված ԵԱՏՄ անդամ է, ինչը այդ կառույցներին չանդամակցող երկրների ներդրողների առջև որոշակի շուկայական և նաև քաղաքական դժվարություններ է հարուցում:
    - Վերոհիշյալ գործոններով պայմանավորված՝ տնտեսական մի շարք ոլորտներում (հանքարդյունաբերություն, կոմունալ ծառայություններ, հեռահաղորդակցություն) հաստատվել են մենաշնորհային (monopolistic) կամ հավատարմագրային (concession) կառավարման պայմանագրերով գործող կազմակերպություններ, որոնք ծառայությունների գների և մատուցման պայմաններում թույլ են տալիս

տարբեր կամայականություններ և խախտումներ, քանի որ վերահսկման մեխանիզմները արդյունավետ չեն:

- Քննվող ազդակների շրջանակում առանցքային նշանակության բացասական ազդակներ են կապիտալի որակի մասին իշխող քանակական պատկերացումները՝ մի կողմից, կառուցողական և քայքայիչ կապիտալի հղացքից անտեղյակությունը՝ մյուս կողմից:

Առաջարկներ

Չնայած եզրակացություններում թվարկված ազդակների բազմաթիվությանը՝ դաշտային և փաստաթղթային ուսումնասիրությունների հիման վրա մեր իրականացրած բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս կարծել, որ կառուցողական կապիտալի թափանցմանը խոչընդոտող և քայքայիչ կապիտալի ներթափանցումը հնարավոր դարձնող առանցքային գործոնը կապիտալի որակի մասին մեզանում գոյություն ունեցող պատկերացումներն են: Դրանք, ինչպես քանիցս նշել ենք, ունեն հիմնականում քանակական նկարագիր (արտադրողականության աճ, հավելյալ արժեքի ստեղծում, տեխնոլոգիաների նորացում, արտադրական արժեշղթաներ ձևավորող ներդրումներ և այլն): Ըստ էության, նաև կապիտալի որակի տակ նկատի առնվող քանակական նկարագրությունների արդյունավետությունը դիտարկվում է միայն տնտեսության համատեքստում: Տնտեսական համատեքստից դուրս օտարեկրյա կապիտալի արդյունավետությունը լավագույն դեպքում կապվում է աղքատությունը հաղթահարելու, բարեկեցության մակարդակը բարձրացնելու և արտաքին անվտանգությունը (սահմանների ամրացում, բանակի և զինտեխնիկայի արդիականացում) ապահովելու խնդիրների հետ: Պետական կառավարման և հանրային կյանքի այլ ոլորտների հետ կապիտալի որակը սովորաբար չի աղերսվում: Առավել ևս, չի գիտակցվում կապիտալի որակի հետ վերոհիշյալ ոլորտների հակադարձ կապը և ազդեցությունը: Ահա այստեղ է, որ նկատելի է կապիտալի որակի մասին ավանդական պատկերացումների անկենսունակությունը: Դա հաստատվում է այդ պատկերացումների ուղղակի արդյունք համարվող անարդյունավետ քաղաքականության պրակտիկաներում. հնարավոր չէ ապահովել արտադրողականության շարունակական աճ, արժեշղթաներ ձևավորող ներդրումներ, հավելյալ արժեքի պարբերական ավելացում, տեխնոլոգիաների մեթոդական նորացում, եթե տնտեսական քաղաքականություն մշակող, իրականացնող, վերահսկող, դրան աջակցող դերակատարները չեն տեսնում կապիտալի գործառնության ավելի մեծ համատեքստը:

Ի տարբերություն կապիտալի որակի մասին ավանդական քանակական պատկերացումների՝ կապիտալը քայքայիչ և կառուցողական տեսանկյուններից դիտարկող հղացքում նկատի են առնվում կապիտալի գործառնության ավելի լայն համատեքստ և ազդեցություններ՝ մի կողմից, լայն համատեքստը ներառող առանձին ոլորտների (քաղաքական, դատական, քաղաքացիական և այլն) հակադարձ ազդեցություններ՝ մյուս կողմից: “Քայքայել” և “կառուցել” բայերը վերաբերում են ոչ միայն տնտեսական կառուցվածքներին: Մի շարք երկրներում իրականացված քայքայիչ կապիտալի թափանցմանը և ծավալմանը վերաբերող ուսումնասիրությունները պարզորոշ ցույց են տալիս, թե ինչպես է քայքայիչ կապիտալը ախտահարում ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական, սոցիալական, ակադեմիական տարբեր համակարգերը և հաղորդակցային կառուցվածքները, և թե ինչպես են վերջիններս հակադարձ կերպով ու կրկնակի էֆեկտով ախտահարում տնտեսական համակարգը:

Եզրակացություններում հիշատակված բացասական ազդակների մի մասը գալիս է կապիտալի որակի մասին *ավանդական ընկալումներից*: Այդ ազդակների շարքում, թերևս, ամենավտանգավորը “ցանկացած ներդրում անհրաժեշտ է” մտածողությունն է, որը ազատ դաշտ է բացում ցանկացած որակի կապիտալի ներթափանցման համար: Բայց, որ պակաս կարևոր չէ՝ ավանդական այդ ընկալումը անկարևոր կամ երկրորդական է դարձնում մնացած բոլոր բացասական ազդակների դիմագրավումը. օրենսդրական կարգավորումներում առկա խութեր, ինստիտուցիոնալ ցածր կայացածություն, թափանցիկության և հաշվետվողականության ցածր մակարդակ, շուկայի գերկենտրոնացվածություն, անհավասար մրցակցային պայմաններ: Դրա ուղղակի ցուցիչներից է

Ներդրումային հայեցակարգի հիմնադրույթներից փորձագիտական և առանցքային տեղեկատուների մեծ մասի գրեթե զրոյական տեղեկացվածությունը: Դրա ցուցիչներից է ներդրումային դաշտը կարգավորող օրենքների խրթինությունն ու բազմիմաստությունը: Անկարևոր դիտարկելու ցուցիչ է այն, որ տնտեսական քաղաքականության դերակատարները հաճախ արդյունավետ և հետևողական չեն իրականացնում օրենքով սահմանված իրենց գործառույթները: Վերջապես, կապիտալի ավանդական ընկալման ցուցիչ ու արդյունք է հայաստանյան տնտեսական համակարգի խոցելիությունը արտակարգ իրավիճակների և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունների հանդեպ[143]:

Ասվածից, իհարկե, չի հետևում, որ կապիտալի որակի մասին քանակական պատկերացումները բոլորովին անպիտան են, որ արտադրողականության աճը, հավելյալ արժեքի ավելացումը, տեխնոլոգիաների նորացումը կամ աշխատուժի որակի, կառավարման կորպորատիվ ձևերի կիրառմամբ ներդրումներ անելը կամ ուղղակի ներդրումների խթանումը չեն կարող օգտակար լինել ինչպես տնտեսական, այնպես էլ ընդհանուր համատեքստի (framework) բարեփոխմանը: Խնդիրն այն է, որ երբ դրանք հայտարարվում են առաջնահերթություններ և գլխավոր նպատակ, դրանց հասնելու միջոցների հարցում հաճախ այլ ասպեկտներ հաշվի չեն առնվում: Թափանցիկության, հաշվետվողականության, հավասար մրցակցային պայմանների հանրային մասնակցության թեզերը և այլ կարևոր գաղափարներ դառնում են պակաս կարևոր կամ անկարևոր: Իսկ դա ազատ դաշտ է բացում քայքայիչ կապիտալի թափանցման համար, որն իր հետ բերում է արտոնություններ և անհավասար մրցակցություն, անհաշվետվողականություն և անթափանցիկություն, օժանդակ ենթակառուցվածքների բացակայություն, իշխանության և քաղհասարակության ներկայացուցիչների կաշառում, պետական և քաղաքացիական հաստատությունների լճացում (կոոպտացիա), միջամտություն երկրի ներքին և արտաքին քաղաքական կյանքին: Ինչ-որ պահից և հետադարձ ուժով՝ թվարկված հետևանքներն իրենք են պատճառ դառնում կապիտալի որակի մասին քանակական պատկերացումների արժեզրկման (դեգրադացման) համար: Այսինքն՝ հայտարարված առաջնահերթությունները և նպատակը թվարկվածի պատճառով աստիճանաբար դառնում են դժվար իրականանալի, հատվածային (ֆրագմենտար) և ի վերջո՝ անհասանելի: Այդ ամենին հայաստանյան հանրությունն ականատես է եղել անցած տասնամյակներում, և մեր հետազոտության մասնակիցների նկարագրած արատավոր պրակտիկաները՝ կապիտալի որակի մասին քանակական պատկերացումների դրսևորումներն են (ռեպրեզենտացիաները):

Հետևապես, ներդրումային քաղաքականության բարեփոխման առաջնակարգ լուծումը մեզ պատկերանում է կապիտալի որակի մասին ընկալման որակական փոփոխության մեջ և ստորև ներկայացվող առաջարկների առաջին խումբը վերաբերում է քայքայիչ և կառուցողական կապիտալի հղացքի վերաբերյալ իրազեկման միջոցառումներին՝ ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ հանրության լայն շրջանակների համար: Առաջարկների մյուս խմբերը բխեցվում են քայքայիչ- կառուցողական կապիտալների հղացքից:

1. ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՁԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ

Օգտագործելով իրազեկման ամենատարբեր հարթակներն ու ձևաչափերը (վիրտուալ և առերես կլոր սեղանային քննարկումներ, դասախոսություններ, սեմինարներ, ծանուցողական

[143] Չնայած Measuring Financial Stress and Economic Sensitivity in CEE Countries-ում Հայաստանի մասին չի հիտատակվել՝ այնուամենայնիվ, կարևոր է ուշադրություն դարձնել ֆինանսական ստրեսների և տնտեսական զգայունության վրա: Measuring Financial Stress and Economic Sensitivity in CEE Countries: https://www.files.ethz.ch/isn/176790/CNR_117.pdf

տեսանյութեր և այլն)՝ լայն հանրության, պաշտոնական ու մասնագիտական շրջանակներին հասու՛ դարձնել կառուցողական կապիտալի հղացքը, վերջինիս կարևորագույն առումները և առավելությունները:

2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես արդյունավետ ներդրումային քաղաքականության առանցքային նպատակ՝ ձևակերպե՛լ ներդրվող կապիտալի որակի (կառուցողական կապիտալի) չափանիշների և դրանց գործառնությանը նպաստող միջավայրերի համապատասխանության ապահովումը և խրախուսումը:

Ներդրումային հայեցակարգի կիրարկման հնարավորությունը մեծացնելու նպատակով ապահովե՛լ ներդրումային քաղաքականության տարբեր փուլերին (*մշակում, իրականացում, վերահսկում*) գործարար կառույցների և անհատների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը, ներդրումային քաղաքականության տարբեր փուլերի վերաբերյալ հաշվետվություններն ու դրանց հանրայնացումը:

Հաշվի առնելով փորձագիտական և հետաքրքրված քաղաքացիների լայն շրջանակների դիտարկումներն ու առաջարկները՝ մշակե՛լ մեխանիզմներ ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունն ու վիճակագրությունը առավել մատչելի, ամբողջական և պարբերական ներկայացնելու համար:

Հաշվի առնելով փորձագիտական և հետաքրքրված քաղաքացիների լայն շրջանակների դիտարկումներն ու առաջարկները՝ մշակե՛լ մեխանիզմներ ներդրողների ընթացիկ գործունեությունը առավել թափանցիկ և առցանց մատչելի դարձնելու համար: Թափանցիկությունն այս դեպքում հատկապես վերաբերվում է տարբեր ներդրող կազմակերպությունների և մասնավորապես ծառայություններ մատուցող կազմակերպությունների գնային քաղաքականությանը, դրանց հիմքերին:

Ապահովե՛լ ՀՀ ներդրումային միջավայրի վերաբերյալ պոտենցիալ ներդրողներին անհրաժեշտ մանրամասն տեղեկատվություն համապատասխան առցանց հարթակներում. սկսած՝ հայեցակարգից, նորմերից ու որոշումներից, վերջացրած՝ հողերի և էլեկտրաէներգիայի գների մասին տեղեկություններով:

Ապահովե՛լ ներդրողների պարզեցված առցանց գրանցում՝ հաշվի առնելով կառուցողական կապիտալի չափանիշները:

Հետամուտ լինելով Եվրոպական Միության հետ կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) ստանձնած պարտավորությունների իրականացմանը՝ առավել հետևողական քայլեր ձեռնարկե՛լ հայաստանյան կորպորատիվ կառավարման միջավայրը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) սկզբունքներին համապատասխան դարձնելու ուղղությամբ:

Հեռուստադիտողների և ընթերցողների լայն լսարան ունեցող լրատվամիջոցներով տարածե՛լ և ջատագովե՛լ կառուցողական ներդրումների հաջողված պրակտիկաներն ու պատմությունները:

Խրախուսե՛լ և հետամուտ լինե՛լ թափանցիկության հետազոտությունների (visibility studies) անցկացմանը և դրանց արդյունքների հանրայնացմանը:

3. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Վերանայե՛լ մենաշնորհների գործունեության օրենսդրական հիմքերը. մշակե՛լ կոնկրետ ծրագրեր մենաշնորհային և հավատարմագրային կառավարման պայմանները վերանայելու ուղղությամբ, ընդհուպ՝ դրանց տնօրենների առջև հստակ պայմաններ դնելը:

Ապահովե՛լ օրենքների և որոշումների լեզվական մատչելիությունը տեղացի (local) և օտարերկրյա ներդրողների համար: Փորձագետների կողմից առաջարկվող տարբերակներից մեկը միջազգային հասկացությունները ու ձևակերպումները, ինչպես նաև օրենսդրական դրույթները մոտարկելն է: Այս առումով, կարևոր է նաև պայմանագրային որոշակի ստանդարտների (ինչպես օրինակ Convertible Notes, Safe և այլն) կիրառումը, որոնք կարող են խրախուսել ՏՏ ոլորտի ընկերություններին:

Օրենսդրական նախաձեռնությունների ու նախագծերի արդյունավետ մշակման համար, չբավարարվե՛լ միայն հատուկ կայքերում (e-draft և այլն) դրանց մասին տեղեկացնելով, այլ առնվազն փորձագիտական համայնքի ներկայացուցիչներին և պետական կառույցներին տեղեկացնել արձագանք պահանջող հասցեական նամակներով: Անհրաժեշտ է նաև մշակե՛լ ստացված կարծիքների կարևորությունը նույնականացնող որոշակի գիտական չափանիշներ և չբավարարվե՛լ այսպես կոչված՝ “կողմ” և “դեմ” կարծիքների քանակը հաշվելով:

4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՂ, ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ, ՎԵՐԱՀՍԿՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Կարիք կա հստակեցնե՛լ ներդրումային քաղաքականություն մշակող, իրականացնող և վերահսկող հաստատությունների գործառույթները: Օպտիմալ տարբերակ կարող է դիտարկվել ներդրող կազմակերպությունների գրանցման հետ կապված բոլոր գործառույթները կենտրոնացնել մեկ ինստիտուտի ձեռքում: Նմանապես, օրինակ, գնումների հետ կապված խախտումների պատասխանատվությունը կարող է դրվել նույն մասով քաղաքականություն մշակող ֆինանսների նախարարության պատասխանատվության ներքո:

Ապահովե՛լ ներդրումային քաղաքականություն մշակող, իրականացնող և վերահսկող հաստատությունների միջև համագործակցության սերտացումը, ապահովե՛լ տեղեկատվության փոխանակության ինտենսիվությունը:

Քայլեր ձեռնարկե՛լ ներդրումային քաղաքականություն մշակող, իրականացնող և վերահսկող հաստատություններում որակյալ կադրեր ապահովելու ուղղությամբ՝ գիտելիքների և փորձի հիման վրա ռոտացիոն մեխանիզմներ կիրառելու ճանապարհով:

Խթանե՛լ տնտեսական քաղաքականություն մշակող, իրականացնող և վերահսկող կառույցների արդյունավետ գործունեության համար փորձագիտական շրջանակների մասնակցայնությունը՝ թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու, այդ կառույցների գործունեությունը հանրայնացնելու միջոցով:

Քայլեր ձեռնարկե՛լ ներդրումային քաղաքականության իրականացումը վերահսկող կառույցների, ի մասնավորի՝ ՏՄՊՊՀ-ի անկախացման, գործունեության թափանցիկության և

հաշվետվողականության բարձրացման ուղղությամբ. անհրաժեշտության դեպքում՝ գործունեությունը կարգավորող օրենքների փոփոխության ճանապարհով:

Տնտեսական քաղաքականություն մշակող, իրականացնող և վերահսկող կառույցների ներսում ձևավորե՛լ մասնագետ-վերլուծաբանների հաստիքներ, որոնք կզբաղվեն ներդրումների հետ կապված իրենց գործառույթների մասով պարբերական վերլուծություններ գրելով և հրապարակելով:

5. ՇՈՒԿԱ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հրաժարվե՛լ ցանկացած հիմնավորմամբ (ոլորտային առաջնահերթություններ, խոշոր ներդրումներ, էթնիկ ծագում, դաշնակից երկիր և այլն) տարբեր ներդրողներին արտոնություններ տրամադրելու քաղաքական մարտավարությունից: Ոչ միայն տեղացի, այլև օտարերկրյա բազմաթիվ ներդրողների դիտարկմամբ՝ այդ մարտավարությունը հարուցում է անհավասար մրցակցային պայմաններ, նպաստում է տնտեսական դաշտը կարգավորող օրենսդրական նորմերը շրջանցելու տարբեր գործողությունների և վերջիններիս արդարացմանը:

6. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Պայմանագրերի, գույքի սեփականության կամ առևտրային հարցերի հետ կապված վեճերի մեծ մասը կողմերը լուծում են ընդհանուր իրավասության դատարաններում: Վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներ գոյություն չունեն: Փորձագետները բացի դատական համակարգի նկատմամբ վստահությունը բարձրացնելու մասին ընդհանուր բնույթի պահանջից՝ նշել են կոնկրետ ներդրողների հետ կապված խնդիրների լուծման մի շարք մեխանիզմներ. *բացառապես տնտեսական* գործերով դատարանների հիմնումը, արբիտրաժային դատարանների դերի արդյունավետության բարձրացում, ԱՄՆ օրինակով՝ “քլոզերների” (“closer”) ինստիտուտի կամ Դուբայի ու Արաբական էմիրությունների օրինակով՝ “Երջանկության նախարարության” հիմնում: Դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար կարիք կա նաև թվայնացնել որոշակի գործընթացները:

7. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մշակե՛լ մեխանիզմներ երկրի ներքին քաղաքական կյանքում և արտաքին հարաբերություններում ներդրող կազմակերպությունների միջամտությունը բացառելու նպատակով:

Տեղեկատվության տարբեր հարթակներով և տեղեկացման տարբեր ձևաչափերով հանրության լայն շրջանակներին ներկայացնել ժողովրդավարական համակարգի բովանդակությունն ու տարբեր ասպեկտները, ժողովրդավարության և շուկայական հարաբերությունների միջև գոյություն ունեցող սերտ կապը:

Վերականգնե՛լ և աշխուժացնե՛լ 2020 թ. Քովիդ 19-ով և 44 օրյա պատերազմի պատճառով իշխանության տարբեր ներկայացուցիչների և հանրության միջև խզված հաղորդակցությունն ու շփումները: Դրա խթանման ուղղությամբ կարող է օգտակար լինել “լոբիզմի մասին հոդվածի” ընդունումը, որը կպարտադրի պատգամավորներին և իշխանության տարբեր օղակների ներկայացուցիչներին որոշակի պարբերականությամբ հրապարակել շաբաթվա ընթացքում քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ իրենց հանդիպումների և քննարկումների մասին տեղեկատվություն: Նախաձեռնե՛լ և խրատուսե՛լ ներդրումային թեմաներով խորհրդարանական լսումներ և ներդրողների հետ քննարկումներ:

8. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Ներդրումային քաղաքականության մշակման, իրականացման և վերահսկման տարբեր փուլերում ապահովե՛լ քաղհասարակության ներկայացուցիչների գործնական մասնակցությունը:

Խրախուսման տարբեր միջոցներով (հետազոտությունների, դասախոսությունների պատվիրակում և այլն) խթանե՛լ հատկապես ներդրումային քաղաքականությամբ հետաքրքվող քաղաքացիական ինստիտուտների գործունեությունը:

Վերանայե՛լ գործարար միություններին վերաբերող օրենսդրությունը՝ դրանց իրական առաքելությունը և ակտիվությունը խթանելու նպատակով:

Խրախուսե՛լ օտարերկրյա ներդրումների թեմաներով լրագրողական նյութերի հրապարակումը և տարածումը:

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Առաջնահերթություն տա՛լ (To prioritize) փոխադրումների համար կարևոր ցամաքային այլընտրանքային հին և նոր ուղղություններով ճանապարհների (մագիստրալների) կառուցումը և բարեկարգումը: Մշակե՛լ օդային ճանապարհով բեռնափոխադրումների իրականացման օպտիմալ եղանակներ. դիտարկե՛լ ավելի փոքր կարողություններ ունեցող տրանզիտային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համագործակցության հնարավորությունը:

Խթանե՛լ այլընտրանքային էներգետիկայի ուղղությամբ (բիոմեթանի, արևային և քամու էներգիայի և այլն) հետազոտություններն ու նախաձեռնությունները:

Արագացնե՛լ և ավարտին հասցնե՛լ ջրամատակարարման և ոռոգման ցանցերի հիմնանորոգման աշխատանքները:

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Մշակե՛լ արտակարգ իրավիճակներում (պատերազմ, տարանցիկ ուղիների փակում, լոքդաուն և այլն) ներդրողների ռիսկերը հաշվի առնող և մեղմող մեխանիզմներ՝ ներդրողների շահերի պաշտպանությունը մեծացնելու նպատակով:

Annex 1. Research Stakeholders' Mapping

Policy makers and implementers	Ministry of Economy	secretariat@mineconomy.am
	Central bank of Armenia	secretariat@cba.am
	State Commission for the Protection of Economic Competition	info@competition.am
	Chamber of Commerce and Industry of The Republic of Armenia	info@armcci.am
	State Revenue Committee of RA	secretariat@petekamutner.am
	Ministry of Finance	secretariat@minfin.am
	Standing Committee on Economic Affairs (National Assembly)	econom@parliament.am
	Security Council Office of Armenia	seco@gov.am
	National Security Service of the RA: Economic Security and Countering Corruption body	ta@sns.am
	Corruption Prevention Commission of RA	info@cpcarmenia.am,
	Enterprise Armenia	info@isc.am, aram.vardanyan@isc.am
	Armenian Card, Card Payment System CJSC	info@arca.am
	Armenia Securities Exchange	info@amx.am
	Ministry of High-Tech Industry	info@hti.am
	Public Services Regulatory Commission of The RA	psrcinfo@psrc.am
Private sector beneficiarie	Artshin Bank	office@ardshinbank.am
	VTB Bank	headoffice@vtb.am

	ID Bank	info@idbank.am
	Evoca Bank	hello@evocabank.am
	Unibank Bank	unibank@unibank.am
	Ameria Bank	office@ameriabank.am
	ACBA Bank	acba@acba.am
	HSBC Bank	hsbc.armenia@hsbc.com
	Ineco Bank	inecobank@inecobank.am
	ABB Bank	info@armbusinessbank.am
	AEB Bank	bank@aeb.am
	PWC Armenia	office.yerevan@am.pwc.com
	KPMG Armenia	general@kpmg.co.am
	Deloitte Armenia	amdeloitte@deloitte.am
	Ernst and Young	yerevan@am.ey.com
	AMCHAM member business representatives	info@amcham.am
Civil society activity implementation institutions	Union of banks of Armenia	uba@uba.am
	Mantashov Entrepreneurs Union	info@mantashyants.am
	Union of Young Entrepreneurs of Armenia	uybarmania@gmail.com
	Mijazgain Gortsarar Kaperi Ajaktsman Miutyun NGO	idrscouncil@gmail.com

	The Republican Union of Employers of Armenia (RUEA)	info@employers.am
	"European Business Association" NGO	info@eba.am
	Transparency International Armenia	info@transparency.am
	"Alternative" Research Center	tatoulm@gmail.com
	"Finarm" Financial Market Members Association	info@finarm.am
	"Armenian National Interests Fund" (ANIF)	info@anif.am
	Corporate Governance Center Armenia	nmelikyan@corpgov.am
International institutions	International Finance Corporation, IFC	anazaryan@ifc.org
	USAID	-
	EBRD	-
Experts	Edward Sandoyan	Institute of Economics and Business at the RAU
	Vache Gabrielyan	Manoogian Simone College of Business and Economics
	Bagrat Asatryan	YSU, Department of Economics
	Tigran Jrbashyan	Management Advisory at Ameria Group Inc.
	Vahan Movsisyan	Union of Community Financiers
	Hovsep Patvakanyan	Invest in Armenia, EBRD
	Armen Yeghiazaryan	Lori Young Economists' Assocations NGO
	Edgar Karapetyan	Galaxy Group of Companies

	Hayk Martirosyan	Transparency International Armenia
	Aghasi Tavadyan	ASUE
	Hovhannes Avetisyan	International Labour Organization
	Ashot Khurshudyan	International Center for Human Development
	Varuzhan Avetikyan	TK&Partners
	Haykaz Fanyan	Modex
	Zareh Asatryan	Corporate Taxation and Public Finance
	Nare Sargsyan	RAU
	Anush Igitkhanyan	RAU
	Aharon Chilingaryan	BDO Armenia
	Gagik Grigoryan	GP Management Advisory
	Levon Khalafyan	Business Environment Department of the RA Ministry of Economy, Investment Policy Department
Investigative reporters	Mkrtich Karapetyan	Civilnet
	Nelli Rafayelyan	Media-Center
	Gevorg Tosunyan	Civilnet
	Ani Mejlumyan	Eurasianet
	Seda Hergnyan	Hetq
	Arshaluys Mghdesyan	Civilnet

	Tatev Hovhannisyan	OpenDemocracy
	Sara Khojoyan	Deem Communications
	Sargis Harutyunyan	Azatutyun
	Karen Harutyunyan	
	Emanuel Mkrtchyan	Arminfo
	Hayarpi Baghdasaryan	Infocom

Annex 2. Հարցազրույցների ուղեցույց. համապարփակ հարցեր

Բարև՛ Ձեզ: Իմ անունը _____ է: Ծնորհակալություն քննարկմանը մասնակցելու Ձեր պատրաստակամության համար: Ձեր կարծիքը շատ արժեքավոր է մեզ համար: Ես ներկայացնում եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը (CRRC Armenia), որը անկախ հետազոտական կազմակերպություն է: Մեր կազմակերպությանը կարող եք ծանոթանալ www.crrc.am կայքէջում:

Մենք հետազոտություն ենք իրականացնում Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի (CIPE) հետ համագործակցությամբ՝ «Հանրային հատվածի կառավարման հետազոտություն և շահերի պաշտպանություն» ծրագրի շրջանակում:

Այսօրվա քննարկումը նվիրված է Հայաստանում ներդրումային ներհոսքի հնարավորություններն ու համակարգային մարտահրավերները դիտարկելուն: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ ներդրումների բնույթը: Հետազոտության արդյունքները հետգայում ծառայելու են քայքայիչ և կառուցողական կապիտալի մասին գործարար համայնքի ու տեղական այլ շահագրգիռ կողմերի իրազեկությունը բարձրացնելուն:

Ցանկանում եմ տեղեկացնել, որ Ձեր թույլտվությամբ մեր քննարկումը ձայնագրվելու է: Դա թույլ է տալիս հետագայում ստանալ տեքստային սղագրություն՝ բաց չթողնելով Ձեր կողմից հնչեցրած կարևոր դիտարկումները: Այն օգտագործվելու է միայն ներքին զեկույցների համար և չի տրամադրվելու որևէ երրորդ կողմի: Հարցազրույցի արդյունքներն ամփոփվելու են ընդհանրացված կերպով՝ չօգտագործելով որևէ մեկի անունը: Հարցազրույցը կտևի մոտ 1 ժամ:

Նախքան հարցազրույցն սկսելը, կցանկանայի, որ գրավոր կամ բանավոր (Zoom քննարկման դեպքում՝ բանավոր) համաձայնություն տաք այն մասին, որ իրազեկված եք հարցազրույցի գաղտնիության մասին, և որ որևէ տեղեկատվություն, որը կարող է բացահայտել Ձեր ինքնությունը, հրապարակման ենթակա չէ:

Ունե՞ք հարցեր, մինչ բուն քննարկմանն անցնելը:

Ծանոթություն

- Ներկայացրեք, խնդրում եմ, Ձեր գործունեության ոլորտը:
- Ի՞նչ պաշտոն եք զբաղեցնում:

Բաժին 1. Ընդհանուր պատկերացումներ ՀՀ օտարերկրյա ներդրումային քաղաքականության մասին

1. Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կբնութագրեք ՀՀ ներդրումային քաղաքականության ներկա վիճակը՝ հատկապես օտարերկրյա ներդրումների առումով:

1.1. Դուք ինչպե՞ս կձևակերպեիք օտարերկրյա ներդրումներին առնչվող ՀՀ ներդրումային քաղաքականությունը:

1.2. Որո՞նք են, ըստ Ձեզ, հիմնական բնութագրերը:

1.3. Ինչու՞ եք առանձնացնում հենց այդ բնութագրերը:

Մոդերատորին՝ եթե պատասխանում ներկայացվում են ինչ-որ բնութագրեր, ապա ճշտե՛լ.

1.3.1. Ի՞նչ չափանիշների հիման վրա եք ներկայացնում այդ բնութագրերը: Որո՞նք են չափանիշները:

Մոդերատորին՝ եթե պաշտոնական չափանիշների հիման վրա է ներկայացնում իր մոտեցումները, ապա ընդամենը ճշտե՛լ, թե ինչ վերաբերմունք ունի այդ չափանիշների մասին:

2. Տեղյա՞կ եք, արդյոք, ունե՞նք ներդրումային քաղաքականության որոշակի հայեցակարգ:

Եթե այո՝

2.1. Ինչպիսի՞ թեզերի/հիմնադրույթների վրա է կառուցված:

2.2. Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է հաջողվում դրանց իրականացումը:

Եթե ոչ՝

2.3. Ինչո՞վ է դա պայմանավորված:

2.4. Որո՞նք են, ըստ Ձեզ, խոչընդոտող գործոնները:

3. Ըստ Ձեզ՝ ո՞ր երկրներն են ՀՀ-ում հիմնական ներդրումներ կատարողները:

3.1. Ինչո՞վ է դա պայմանավորված:

3.2. Ինչքանո՞վ է պաշտոնական վիճակագրության տեղեկատվությունը արտահայտում իրականությունը:

3.2.1. Ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր կողմից նշված իրողություններին:

4. Ինչպիսի՞ ներդրումների կարիք ունենք: Ինչու՞:

5. Ինչպիսի՞ ներդրումների կարիք չունենք: Ինչո՞ւ:

6. Ինչպիսի՞ն պետք է լինի ՀՀ ներդրումային քաղաքականությունը և ինչու՞:

Բաժին 2. Ներդրումային քաղաքականության թափանցիկությունը և ներդրումային քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացներին տարբեր կառույցների մասնակցությունը:

7. Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է ՀՀ ներդրումային քաղաքականությունը թափանցիկ: Ինչու՞:

8. Ո՞ր մասով պետք է առհասարակ ներդրումային քաղաքականությունը լինի թափանցիկ: Ինչու՞:

8.1. Ինչու՞ է կարևոր թափանցիկությունը:

8.2. Ինչպե՞ս է հնարավոր արդյունավետորեն ապահովել թափանցիկություն:

9. Ըստ Ձեզ՝ ո՞ր կառույցներն են փաստացի պատասխանատու ՀՀ ներդրումային քաղաքականության մշակման համար:

9.1.1. Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ մարտահրավերներ կան քաղաքականության մշակման գործընթացն առավել արդյունավետ ու թիրախային իրականացնելու համար:

9.2. Ըստ Ձեզ՝ ո՞ր կառույցներն են փաստացի պատասխանատու ՀՀ ներդրումային քաղաքականության իրականացման համար:

9.3. Ըստ Ձեզ՝ ո՞ր կառույցներն են փաստացի մասնակից ՀՀ ներդրումային քաղաքականության մշակման գործընթացին:

9.3.1. Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ մարտահրավերներ կան քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներին տարբեր շահագրգիռ կառույցների մասնակցությունն ապահովելու համար:

10. Ըստ Ձեզ՝ ո՞ր կառույցները պետք է պատասխանատու լինեն ՀՀ ներդրումային քաղաքականության մշակման համար:

10.1. Ըստ Ձեզ՝ ո՞ր կառույցները պետք է պատասխանատու լինեն ՀՀ ներդրումային քաղաքականության իրականացման համար:

10.2. Իսկ ո՞ր կառույցները պետք է մասնակից լինեն ՀՀ ներդրումային քաղաքականության մշակման գործընթացին:

11. Ձեր գնահատմամբ՝ որքանո՞վ է հաշվի առնվում ոչ պետական տարբեր կառույցների մասնակցությունը ներդրումային քաղաքականության մշակման, որոշումների կայացման գործընթացներում:

11.1. Օրինակ, գործարարների, իրավաբանների, փորձագիտական այլ շրջանակների կարծիքներն ու առաջարկները որքանո՞վ են հաշվի առնվում:

11.2. Եթե հաշվի են առնվում, ապա քաղաքականության մշակման և իրականացման ո՞ր փուլերում և քաղաքականության ո՞ր ասպեկտների հետ կապված:

11.3. Եթե ոչ, ապա ինչո՞վ է պայմանավորված:

11.4. Ինչպե՞ս եք պարզում՝ արդյոք կարծիքը հաշվի առնվում է, թե՝ ոչ:

11.4.1. Ի՞նչ ցուցիչների վրա եք հենվում:

11.5. Կարևո՞ր է, առհասարակ, ոչ պետական տարբեր կառույցների մասնակցությունը ներդրումային քաղաքականության իրականացման գործընթացում:

11.5.1. Եթե ոչ, ինչու՞:

11.5.2. Եթո այո, ինչու՞:

11.5.2.1. Ո՞ր կառույցները և ինչպիսի՞ մեխանիզմներով կարող են մասնակից լինել:

11.6. Ըստ Ձեզ՝ կա՞ն արդյոք գործուն մեխանիզմներ տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությունն ապահովելու համար:

11.7. Որքանո՞վ են դրանք արդյունավետ կիրարկման տեսակետից:

Բաժին 3. Ներդրումային քաղաքականության և ժողովրդավարության առնչություններին վերաբերող հարցեր

Կա տեսակետ, որ ներդրումային ներհոսքերը կարող են լինել «քայքայիչ» (corrosive) և «կառուցողական» (constructive):

«Քայքայիչ» կապիտալը պետական կամ մասնավոր այն ֆինանսավորումն է, որը զուրկ է թափանցիկությունից, հաշվետվողականությունից և շուկայական կողմնորոշումից (market

orientation): Ուղղորդվելով ավտորիտար ռեժիմներից՝ քայքայիչ կապիտալը շահագործում և մեծացնում է կառավարման բացերը, որպեսզի ազդեցություն ունենա ստացող երկրների տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումների վրա:

«Կառուցողական» կապիտալը վերաբերում է այն ֆինանսական հոսքերին, որոնք լավ են կառավարվում ֆինանսավորման աղբյուրում, նպատակակետում և արձագանքում են շուկայական բացերին: Այն ապահովում է թափանցիկ պայմաններ և մուտք դեպի շուկա, հաշվետու է ստացող երկրի տեղական շահագրգիռ կողմերի լայն շրջանակին և հիմնված է շուկայական սկզբունքների վրա:

12. Ի՞նչ մոտեցումներ, մտքեր ունեք հնչած տեսակետի վերաբերյալ:

12.1. Որքանո՞վ եք համամիտ այս տարաբաժանմանը:

13. Կարո՞ղ են, արդյոք, կապիտալի ներհոսքերը, կախված տեսակից, ազդել ժողովրդավարական սկզբունքների վրա: Ինչպե՞ս:

13.1. Ըստ Ձեզ՝ ինչպե՞ս է պետք արձագանքել նման իրավիճակներին:

13.2. Ինչպիսի՞ մեխանիզմների ու միջոցառումների կարիք կա:

14. Եթե հարցին պայմանականորեն մոտենանք վերևում բերված տեսակետից, ՀՀ-ում ո՞ր ներդրումները կհամարեիք քայքայիչ և որո՞նք՝ կառուցողական: Մի քանի օրինակներ կնշե՞ք:

15. Ի՞նչ գործոններ են առհասարակ ՀՀ-ում նպաստում քայքայիչ ներդրումներին: Ինչու՞:

15.1. Ինչպե՞ս կբնութագրեք անձնական և էթնիկական կապերի վրա արված ներդրումները՝ քայքայիչ և կառուցողական կապիտալի տեսակետից:

Մենք մոտենում ենք ավարտին: Մինչ հարցազրույցը եզրափակելը.

16. Ի՞նչ աղբյուրներ խորհուրդ կտաք խնդրին ավելի խորությամբ ծանոթանալու համար:

17. Կա՞ն արդյոք թեմային առնչվող հարցեր, որոնց մասին չենք խոսել, սակայն կցանկանայիք ավելացնել:

Շնորհակալություն Ձեր ժամանակի և տրամադրած արժեքավոր մտքերի համար:

Annex 3.-*The weight of Net Inflows of foreign total and direct investments by type of activity from Authoritarian countries, 2014-2021*

		2014		2015		2016		2017		2018		2019		2020		2021	
Type of activity	*Country*	*total investments*	*direct investments*	*total investments*	*direct investments*	*total investments*	*direct investments*	*total investments*	*direct investments*	*total investments*	*direct investments*	*total investments*	*direct investments*	*total investments*	*direct investments*	*total investments*	*direct investments*
crop and animal production, hunting and related service activities	*Russian Federation*	*-2.87*	*-3.67*	*0.07*	*0.00*	*3.17*	*0.14*	*0.29*	*0.00*	*1.92*	*0.48*	*28.85*	*23.27*	*79.31*	*79.38*	*-8.08*	*-7.24*
fishing and aquaculture	*Russian Federation*	-	-	-	-	-	-	-	-	-	-	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*
mining of metal ores	*Russian Federation*	*0.00*	*0.00*	*69.61*	*100.00*	*48.14*	*91.98*	*0.01*	*-0.04*	*-28.47*	*1,919.50*	*30.93*	*0.00*	*14.10*	*1.13*	*-2.80*	*47.59*
other mining and quarrying	*Russian Federation*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*23.21*	*-0.20*	*119.12*	*16.33*	*-1.62*	*-0.15*	*32.64*	*-0.10*	*93.93*	*93.93*	*108.48*	*4.37*

mining support service activities	*Russian Federation*	*13.99*	*0.00*	*8.05*	*0.00*	*0.62*	*2.83*	*0.03*	*0.01*	*0.26*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*
manufacture of food products	*Russian Federation, Iran, Cuba*	*8.96*	*136.83*	*-173.05*	*-172.01*	*-62.26*	*-32.99*	*139.07*	*131.87*	*100.00*	*100.00*	*102.61*	*102.61*	*99.19*	*99.16*	*-53.42*	*104.87*
manufacture of beverages	*China*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*-0.19*	*4.20*	*-1.06*	*-1.90*	*4.96*	*5.87*
manufacture of wearing apparel	*Russian Federation*	*0.00*	*0.00*	*19.19*	*42.36*	*1.64*	*224.55*	*13.88*	*0.00*	-	-	-	-	-			
manufacture of leather and related products	*Russian Federation*	*100.00*	*100.00*	*00.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*
manufacture of basic pharmaceutical products and pharmaceutical preparations	*Russian Federation*	*100.00*	*100.00*	*108.06*	*100.00*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
manufacture of basic	*Russian Federati*	*0.19*	*-14.00*	*-5.38*	*-5.30*	*95.84*	*-39.89*	*43.30*	*24.12*	*36.86*	*35.26*	*89.46*	*114.03*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*

metals	*on*																
manufacture of computer, electronic and optical products	*Russian Federation*	*165.06*	*165.06*	*-231.35*	*-231.35*	*39.82*	*39.81*	*92.50*	*192.50*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*
manufacture of electrical equipment	*Russian Federation*	*15.68*	*13.27*	*59.15*	*100.00*	*92.71*	*166.89*	*257.46*	*157.43*	*40.91*	*282.86*	*9.77*	*-9.77*	*-1.61*	*-1.74*	*-1.71*	*-2.10*
manufacture of machinery and equipment n.e.c.	*Russian Federation*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*
other manufacturing	*Russian Federation*	*77.34*	*0.00*	*99.63*	*0.00*	*93.65*	*0.00*	*4.47*	*48.65*	*63.71*	*78.22*	*87.73*	*95.32*	*116.67*	*91.50*	*100.87*	*99.36*
electricity, gas, steam and conditioning supply	*Russian Federation, Iran*	*53.14*	*100.61*	*27.03*	*39.46*	*-50.05*	*-264.78*	*98.57*	*39.95*	*107.31*	*107.26*	*56.40*	*42.41*	*-1,694.85*	*-368.40*	*23.82*	*24.01*
construction of buildings	*Russian Federati*	*0.80*	*9.90*	*1.86*	*36.65*	*0.00*	*-*	*0.00*	*0.00*	*1.86*	*1.95*	*83.71*	*148.91*	*0.18*	*0.18*	*-3.22*	*-3.22*

	on																
wholesale and retail trade and repair of motor vehicles and motorcycles	*Russian Federation, Uzbekistan*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	-		*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*						
wholesale, trade, except of motor vehicles and motorcycles	*Russian Federation*	*922.68*	*0.00*	*03.18*	*0.00*	*74.93*	*130.73*	*49.34*	*60.64*	*89.55*	*94.10*	*47.38*	*65.43*	*97.83*	*130.45*	*92.01*	*18.69*
retail trade, except of motor vehicles and motorcycles	*Russian Federation, Belarus*	*895.87*	*0.13*	*02.23*	*0.05*	*75.01*	*130.79*	*53.79*	*60.70*	*91.49*	*94.10*	*47.38*	*65.43*	*97.80*	*130.40*	*92.28*	*19.31*
land transport and via pipelines	*Russian Federation, Iran*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.04*	*100.00*	*100.03*	*100.00*
warehousing and support activities for transportation	***Iran***	*73.43*	*74.51*	*101.11*	*99.78*	*0.00*	*0.00*	*0.00*	-	*0.00*	*0.00*	*0.00*				*0.00*	*0.00*

accommodation	*Russian Federation*	*0.65*	*0.81*	*0.03*	*0.06*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*
telecommunications	*Russian Federation*	*771.41*	*87.57*	*-10.49*	*-12.27*	*62.19*	*-38.23*	*20.96*	*11.94*	*125.33*	*-107.01*	*37.98*	*25.65*	*81.97*	*86.79*	*6.17*	*0.00*
computer programming, consultancy and related activities	*Russian Federation*	*0.43*	*0.43*	*0.06*	*0.05*	*0.07*	*0.07*	*-2.30*	*-2.30*	*0.06*	*0.06*	*7.19*	*-2.57*	*-1.48*	*-3.07*	*0.11*	*0.11*
financial service activities, except insurance and pension funding	*Russian Federation*	*0.00*	*0.00*	*1.42*	*1.42*	*8.86*	*8.86*	*10.67*	*10.67*	*21.67*	*21.67*	*12.80*	*12.80*	*12.50*	*12.50*	*23.08*	*23.08*
activities auxiliary to financial services and insurance activities	*Russian Federation*	*36.24*	*36.24*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*					*100.00*	*100.00*	-			
real estate activities	*Russian Federation*	*1.26*	*1.26*	*-12.39*	*-12.39*	*3.89*	*3.89*	*-20.80*	*-26.95*	*-14.75*	*3.51*	*6.81*	*3.95*	*5.60*	*-5.27*	*26.93*	*7.52*

legal and accounting activities	*Russian Federation*	*98.38*	*100.00*	*101.15*	*100.00*	*110.26*	*100.00*	*51.28*	*50.00*	*827.50*	*47.41*	*67.12*	*52.94*	*94.35*	*53.06*	*35.38*	*52.90*
scientific research and development	*Russian Federation*	*-15.06*	*-15.06*	*100.80*	*100.80*	*115.53*	*115.53*	*100.00*	*100.00*	*28.52*	*28.52*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*15.99*	*15.69*
other professional, scientific and technical activities	*Russian Federation*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	-	-	-	-	-	-	-	-	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*
gambling and betting activities	*Russian Federation*	-	-	*100.00*	*100.00*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
sports activities and amusement and recreation activities	*Russian Federation*	*37.77*	*54.85*	*-67.27*	*100.00*	*6.54*		*2.85*	*100.00*	*54.26*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*
other personal service activities	*Russian Federation*								*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*	*100.00*